AZG NEW SHABAT.QXD 01/03/2018 21:50 Page 1

2 ՄԱՐՏ 2018 ՈՒՐԲԱԹ 8(5504)

# Ազգ
Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Հայաստան-Թուրքիա. արձանագրությունները չկան

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ՝ Ազգային անվտանգության խորհրդի նիստում հայտարարել է Հայաստան-Թուրքիա արձանագրությունները չեղյալ հայտարարելու մասին։

Հիշեցնենք, որ արձանագրությունները նախաստորագրվել էին 2009-ի հոկտեմբերի 10-ին՝ Ցյուրիխում, ԱԳ նախարարներ Նալբանդյանի ու Դավութօղլուի կողմից։ Դրանք երկու երկրների խորհրդարաններում էին՝ պատրաստ վավերացման, սակայն Թուրքիան առաջ քաշեց նախապայմաններ եւ փաստորեն տապալեց դրանց վավերացումը։

Հայաստանն ամենաբարձր մակարդակով բազմիցս է հայտարարել, որ խելամիտ ժամկետների ավարտից հետո, եթե Թուրքիան չհամաձայնի առանց նախապայմանների վավերացնել արձանագրությունները, Հայաստանը դրանք կուղարկի գրողի ծոցը։

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Տաճարը վերաբացվեց. պատերազմը շարունակվում է

Ուխտավորները գոհաբանության աղոթքներ են հղում դեպի երկինք, քրիստոնյա Երուսաղեմը հրճվանքի մեջ է, պաղեստինցիներն ու ոչ հրեաները հաղթանակ են տոնում։ Եռօրյա փակումից հետո չորեքշաբթի առավոտյան վերաբացվեցին Սբ. Հարության տաճարի հազարամյա դարպասները օտարերկրյա հավատացյալների առջեւ, որոնցից շատերը թերեւս կյանքում միակ անգամ եկել էին աղոթելու աշխարհի բոլոր քրիստոնյաների ամենաասուրբ վայրում, որտեղ, ըստ նրանց, Քրիստոսը խաչվել, թաղվել եւ երրորդ օրը հարություն է առել։

Տաճարի դռների փակումը բողոքի համակարգված արտահայտությունն էր Հայ առաքելական, Հռոմեական կաթոլիկ եւ Հույն ուղղափառ եկեղեցիների առաջնորդների, համերաշխ եւ միահամուռ աջակցությամբ քրիստոնեական մյուս՝ Ասորական, Ղպտիական, Եթովպական, Մալաբար եւ այլ եկեղեցիների պետերի։ Բողոքը, ինչպես հայտնի է, ուղղված էր ընդդեմ Երուսաղեմի քաղաքապետ Նիր Բարքատի որոշմանը՝ հարկային դաշտ բերել եկեղեցապատկան հասույթաբեր բոլոր ունեցվածքները բացի աղոթատեղիներից– հյուրանոցներ, իջեւանատներ, ռեստորաններ եւ այլ,– գանձել 2010 թ.ից կուտակված՝ շուրջ 190 միլիոն դոլար հարկային պարտքերը, եւ ամենակարեւորը՝ ապասեփականացնել բոլոր այն կալվածները, որոնք նույն թվականից ի վեր վաճառված կամ լիզինգով տրված են տարբեր կառուցապատողների, պատճառաբանելով, որ նման կալվածների բնակիչները կարող են հետագայում զրկվել իրենց բնակելու իրավունքից...

Վերոնշյալ բոլոր քայլերը, ամբողջական փաթեթի մեջ, քաղաքային խորհուրդը արդարացնում էր նաեւ այն հանգամանքով, որ Երուսաղեմ քաղաքը սնանկացման եզրին է, հետեւաբար անհրաժեշտ է խստացնել հարկային օրենքի կիրառումը եւ գանձել հետնյալ բոլոր պարտքերը։

Չվիճարկելով քաղաքապետարանի այդ որոշումը, նույնիսկ խնդրո առարկա չդարձնելով այն հակաճառությունը, թե 190 միլիոնը պիտի փրկե՞ր «սնանկացող» քաղաքի բյուջեն, չմանրամասնելով անգամ քաղաքապետ Բարքատի եւ Իսրայելի ֆինանսների նախարարության միջեւ երկար ժամանակ արդեն տիրող հակամարտությունը, նման որոշումը կիրարկելիության դնելու համար անհրաժեշտ էր խորհրդարանի՝ Քնեսեթի համաձայնությունը խախտելու՝ օրենքի հետադարձ ուժ չունենալու վերաբերյալ կետը։ Եվ Քնեսեթը հենց այսօր, ուրբաթ, պատրաստվում էր քննարկել այդ հարցը, երբ երեքշաբթի գիշեր հնչեց Իսրայելի վարչապետ եւ արտգործնախարար Բենյամին Նաթանյահուի հայտարարությունը վեճը սառեցնելու եւ դրա հետագա քննարկումը «պրոֆեսիոնալ մի խմբի» վստահելու վերաբերյալ, որը «եկեղեցիների ղեկավարների հետ բանակցությունների միջոցով կքննի հարցը եւ կհանգի փոխադարձաբար ընդունելի լուծման»։

Թե ո՞րն էր վարչապետի այս անմիջական որոշման բուն պատճառը,- շահագրգիռ օտար երկրների ու կառույցների միջամտությո՞ւնը, նախընտրական հաշվարկնե՞րը, կոռուպցիոն սկանդալների պատճառով անձնապես կորցրած ժողովրդականությունը վերականգնելու ձգտո՞ւմը, հատկապես Սբ. Զատկվա տոներին ընդառաջ զբոսաշրջության եկամուտների կրճատման հեռանկա՞րը,- այնքան էլ կարեւոր չէ, գեթ առայժմ։ Այս պահի համար կարեւորը քրիստոնեական եկեղեցիների միասնական ու համակարգված կեցվածքն է, գլխավորությամբ հզորագույն երեք եկեղեցիների, որոնց թվում՝ Հայոց պատրիարքությունը, հակառակ միջեկեղեցական ներքին տարակարծությունների առկայությանը։

Քրիստոնեական համախմբումը, թվում է, շահեց ճակատամարտը, բայց ո՛չ պատերազմը։ Փաստորեն Հրեական պետությունը որոշել էր պատերազմն սկսել քրիստոնեական եկեղեցիների համար ամենախոցելի՝ ֆինանսա-տնտեսական եւ կալվածային դարավոր առանձնաշնորհումներից զրկելու քայլերով, որոնք հետագայում տարածվելու էին նաեւ մահմեդականների ունեցվածքների վրա, գլխավոր նպատակ ունենալով ունեզրկել բոլորին, բացի անշուշտ Հուդայական կրոնին պատկանողներից, եւ այդպիսով Երուսաղեմը իրողապես դարձնել Իսրայելի «հավիտենական մայրաքաղաք», միացյալ եւ միադավան։ Այդ «իրավունքը» նրան շնորհվել էր նախագահ Դոնալդ Թրամփի կողմից դեկտեմբեր ամսին։

Պատերազմը շարունակվելու է։ Հաջորդ հարվածը ուղղված կլինի քրիստոնեական եկեղեցիների միասնականության դեմ։ Հակասությունները խորացնելու անառարկելի վարպետներ են հրեաները։

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Արմեն Սարգսյանը՝ խորհրդարանական հանրապետության նախագահ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Այն ժամանակ, երբ մեր հրապարակումը հասանելի կլինի ընթերցողին, Ազգային ժողովը պատգամավորների քվեների 3/4-ով **Արմեն Սարգսյանին** ընտրած կլինի Հայաստանի չորրորդ նախագահին՝ մի վարկածով (ՀՀԿ-ի), եւ Հայաստանի չորրորդ (խորհրդարանական) հանրապետության առաջին նախագահին՝ մի ուրիշ (ՀՅԴ-ի) վարկածով։ Առաջին հայացքից սա կարող է թվալ բառախաղ, բայց նայած, թե ինչ բովանդակություն կհաղորդի իր պաշտոնավարմանն Արմեն Սարգսյանը, որի ժամկետը յոթ տարով է ու նաեւ զուգահեռվելու է հաջորդ Ազգային ժողովի ու նրա ձեւավորած մի նոր կառավարության ժամանակին, ա՛յդ բովանդակությունից կախված կլինի իրական բնորոշումը։ Գոնե Ազգային ժողովում իր ունեցած ելույթի եւ մինչ այդ հանրության տարբեր շերտերի հետ հանդիպումներում արտահայտած նրա մոտեցումների շրջանակում, գումարած գիտական, դիվանագիտական եւ գործարար հաջողված փորձառությունը, Արմեն Սարգսյանին, իրոք, կարելի է համարել Հայաստանի ամենաինտելեկտուալ ղեկավարն այս պահին, որի կերպարն առանձնանում է համարյա թե բոլորից։ Հուսով եմ՝ նա հասկանում է, որ Հայաստանի ղեկավար կազմից շատերին կարող է սա դուր չգալ, որոնք իրենց ձեռքի տակ եղած լրատվամիջոցներով կարող են մի այնպիսի խաչակրաց պատերազմ հայտարարել նրան, որ անգամ նրա դիվանագիտական փորձառությունը կարճ ժամանակում տեղի կտա։ Ու դրա դեմ խաղուտար կթվա խորհրդարանում «Ելք» խմբակցության ու նրա ղեկավար **Նիկոլ Փաշինյանի**՝ գեղարվեստական պատկերավորման միջոցներով եւ Մեծ Բրիտանիայի քաղաքացի լինել-չլինելու մասին տեղեկանքի պահանջով Արմեն Սարգսյանի թեկնածությունը նսեմացնելու փորձերը։

⇨3

## Թուրքիան, Բեքչյանին մերժելով, ձեռնոց է նետում նաեւ Գերմանիային

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**Գերմանիա**

Գերմանական **«Ցայթ»**-ը փետրվարի 23- ին անդրադարձել անցյալ ամիս Պոլսից Գերմանիա վերադարձած Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանի դեմ թուրքական պետական մեքենայի ճնշող գործելակերպին, երբ վերջինս հայ համայնքի ընտրությամբ տեղապահի պաշտոնն էր ստանձնել՝ մի առաքելությամբ՝ կազմակերպելու Պոլսի հայոց պատրիարքի ընտրությունը։ Թուրքական պետությունը ճնշում է ոչ միայն ռեժիմին ենթադրաբար ընդդիմադիր անձանց, այլեւ՝ կրոնական փոքրամասնություններին, գրում է պարբերականը՝ Բեքչյանի պարագան վկայակոչելով, իսկ դրա պատճառ նկատում նրա՝ ցեղասպանության մասին հստակ արտահայտվելը։ Դիվանագիտության տեսակետից առանձնահատուկ զգայուն մի հանգամանք եւս՝ նա Գերմանիայի քաղաքացիություն ունի, գրում է **Սյուզաննե Գյուսթենն** իր հեղինակած ծավալուն հոդվածում։ Պոլսի պատրիարքի տեղապահի պաշտոնում 10 ամիս գործունեություն ծավալած Բեքչյանի հանդեպ թուրքական իշխանությունների ոչ սիրալիր վերաբերմունքը հեղինակը բխեցնում է նրա՝ 1915- ի իրադարձությունները բացահայտ ցեղասպանություն որակելուն, որ «Թուրքիայում դեռ տաբու է»։ Սա հստակ նշան է, որ 1915-ի իրադարձությունների վերաբերյալ հրապարակային քննարկումը կշարունակի խոչընդոտվել, իսկ Պոլսում 60 000-անոց հայկական համայնքի ներքին գործերը դարձյալ վերահսկելու է պետությունը։ Համայնքն իհարկե 1915- ի ողբերգությունից մազապուրծ վերապրողների ժառանգներն է ներկայացնում, նրանցից է նաեւ 1942- ին լույս աշխարհ եկած Բեքչյանը, որի մոր կողմի ազգականները զոհ են գնացել կոտորածին, իսկ կոշկակար հայրը, անկարող լինելով վճարել ոչ մահմեդականներին պարտադրված հատուկ տուրքը, բռնաճնշումների հետեւանքով հայտնվել է Ասքալեի աշխատանքային ճամբարում։ 1955- ին ականատես լինելով Ստամբուլում հույների եւ հայերի դեմ գործադրված բռնություններին, պատմության դասին հակահայկական կոչերին, հոգեւորականի ուղին ընտրած Բեքչյանը 1965- ին տարագրվեց Գերմանիա՝ ուսումը շարունակելու։ Նա ակտիվ մասնակցություն ունեցավ Գերմանիայում եւ Ֆրանսիայում հայ համայնքի կազմակերպման գործում, ստացավ ԳԴՀ քաղաքացիություն, իսկ 1991- ից ստանձնեց Գերմանահայոց հոգեւոր առաջնորդի պաշտոնը։

⇨6



**Հայաստանի ձայնի եւ մտահոգությունների մասին Եվրոպայում**

էջ 4



**Ծնունդն ու մահը մեկտեղված ԱԼԲԵՐՏ ՄԿՐՏՉՅԱՆԻ հիշատակին**

էջ Ա



**ԱՄՆ-ՌԴ. դեռ չեն գիտակցում, բայց պատերազմն արդեն...**

էջ 12

AZG NEW SHABAT.QXD 01/03/2018 21:50 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

## Ուսուցչաց տօն եւ նուէրներու մարաթոն

Քանի որ թէ՛ Լիբանանի եւ թէ՛ Սուրիոյ մէջ մարտ ամսուան ընթացքին կը նշուի Ուսուցչաց տօնը, յարմար տեսայ այս առթիւ երկու խօսք արձանագրել, ինչ որ կրնայ օգտակար դառնալ նաեւ Հայաստանի պարագային:

Մեր բոլոր կրօնական եւ ազգային տօներուն կողքին, մեծ կարեւորութեամբ կը նշուին մայրերու եւ ուսուցիչներու տօները, որպէս համահաւասար տօներ ազգայինին եւ կրօնականին: Մարդ չի կրնար ժխտել այս երկու անձնաւորութիւններուն դերերը ապագայի մարդը մէջտեղ բերելու, կերտելու, ձեւաւորելու եւ գիտութեամբ զինելու գծով: Մին միւսին առաքելութեան լրացուցիչն է, եւ որքան նուիրումով կը կատարուի այդ առաքելութիւնը, այնքան որակաւոր կ՚ըլլայ արդիւնքը:

Մայրերու տօնը սահմանում չունի, իւրաքանչիւր անհաս ինք կ՚որոշէ իր սիրոյ, երախտագիտութեան եւ յարգանքի մատուցման ձեւը, սակայն ուսուցիչներու տօնի պարագային կարելի է որոշ սահմանումներ կատարել:

Սովորութիւն դարձած է, որ Ուսուցչաց տօնին առթիւ աշակերտներ նուէրներով շնորհաւորեն իրենց դասղեկները: Ահա՛ այստեղ է որ որոշ հարցեր նկատի առնուելու են: Մայրեր, տօնէն շաբաթ մը առաջ կը սկսին փնտռտուքի, իրենց զաւկին ուսուցչուհիին, կամ ուսուցչուհիներուն (նուէրները ընդհանրապէս կ՚ըլլան կանանց) յարմար նուէրներ որոնել: Երբեմն մայրեր իրարմէ կը հետաքրքրուին, թէ միւսը ի՞նչ նուէր պիտի յանձնէ, որ ինք ալ նոյնը չկրկնէ, կամ ալ իրը միւսէն պակաս չըլլայ... Եւ կը սկսի մրցակցութիւն մը:

Կարողութիւն ունեցողներու պարագային նուէրի ընտրութիւնը հաճոյքի եւ քիչ մըն ալ ինքնասիրութեան առիթ է, իսկ չունեւորներու պարագային` տառապանքի առիթ: Կարողութիւն չունեցողը չի կրնար անմասն մնալ ու ինքզինք նեղը դնելու գնով բաներ մը կը գնէ, սակայն...

Ահա՛ այստեղ է որ թաքնուած կ՚ըլլայ «աղէտը»... Պարզ է, որ սուղնոց նուէր բերող աշակերտին տարբեր աչքով պիտի նայի ուսուցչուհին, ինչ որ պիտի ազդէ գնահատականին ու նիշերուն վրայ. կարելի՞ է ոսկեղէն նուէր բերող աշակերտին ցած նիշ տայ ուսուցչուհին, նոյնիսկ եթէ խնդրոյ առարկան բութին մէկն է: Իսկ հակառակը` համեստ նուէր բերող աշակերտն ալ կրնայ անտարբեր վերաբերմունքի արժանանալ, նոյնիսկ եթէ փայլուն աշակերտ է:

Այս խտրականութիւնը, որքան որ «արդարացուցիչ» պատճառներ ունի, նոյնքան ալ անմարդկային արարք է: Անշուշտ խօսքս բացառիկ անաչառ- արդարներուն մասին չէ:

Այս կացութիւնը նկատի առնելով, Հալէպի կարգ մը վարժարաններ արգիլած էին նուէրները, ի վրդովումն ուսուցչուհիներուն, որոնք ձեւը գտած էին «տակից» նուէրներ ստանալու...

Լիբանանի մէջ բաւական մտահոգիչ է այս պարագան, ուր սովորութիւն դարձած է իրենց զաւկին բոլոր դասատուներուն նուէրներ յանձնել, նոյնիսկ եթէ անոնց թիւը տասէն աւելի ըլլայ: Դասղեկ ուսուցչուհին հասկցանք, մէկ նուէրով կը լուծուի հարցը, սակայն տասէն աւելի նուէրներ... հապա՞ կարողութիւն չունեցողները ի՞նչ թող ընեն:

Աշակերտին գնահատականն ու նիշերը երբեք առեւտուրի նիւթ պէտք չէ դառնան, նոյնիսկ` սակարկութեան... մեծ նուէր բերիր` մեծ նիշ, պզտիկ նուէր` պզտիկ նիշ:

Նուէրը կաշառքի պէտք չէ վերածուի: Անարդարօրէն արժանաւորին պզտիկ նիշ տալով, ուսուցչուհին ինք կը պզտիկնայ, ասիկա լաւ իմանալու են: Իսկ դպրոցի տնօրէնութեան դերը ի՞նչ է այստեղ:

Լուրջ հարց է եւ անտարբերութեան պէտք չէ մատնուի: Ո՞վ չի գիտեր, որ զանազան առիթներով շնորհաւորանք ու նուէր ստանալը հաճոյք է, սակայն կարեւոր է նկատի առնել դիմացի անձին պարագաներն ալ: Օտարներու մօտ, որեւէ առիթով յանձնուած նուէրը ընդհանրապէս խորհրդանշական կ՚ըլլայ, ոչ թէ մրցակցութիւն դիմացինը զարմացնելու, սիրոյ ու յարգանքի չափը նուէրին չափով որոշելու :

Քիչ մը զգաստ ըլլանք եւ փորձենք դիմացինը նեղ կացութեան չմատնել, որովհետեւ, երբ հաւուն կը ստիպես որ ջայլամի հաւկիթ ածէ, կրնաս պատկերացնել, թէ ինչ տեղի կրնայ ունենալ:

## ՌԱԿ Շիրակի մարզային գրասենյակում բացվեց համակարգչային լսարան` անվճար ուսուցմամբ

Ռամկավար Ազատական կուսակցության Կենտրոնական վարչության հովանավորությամբ կուսակցության Շիրակի մարզային գրասենյակում (Գյումրի) բացվեց համակարգչային անվճար ուսուցման լսարան: Սա լավ նվեր կարող է լինել տեղի հասկապես երիտասարդությանը, թեեւ լսարանի ընձեռած հնարավորությունից օգտվել ցանկացողների համար տարիքային սահմանափակում նախատեսված չէ:



Ինչպես նշեց մարզային գրասենյակի պատասխանատու **Հովիկ Կարապետյանը**, այստեղ կազմակերպվելու է տարբեր մակարդակների ուսուցում` սկսնակների խմբերից մինչեւ պրոֆեսիոնալներ, զարգացման ծրագրեր, նաեւ ալգորիթմների տեսություն ու ծրագրավորման լեզուներ: Ընդսմին ծրագիրը ժամանակավոր չէ եւ լինելու է մշտապես գործող:

ՌԱԿ Կենտրոնական վարչության փոխատենապետ **Կարեն Կակոյանը** բացման ժամանակ տեղեկացնելով, որ լսարանի գաղափարը ծնվել է տեղում երիտասարդների հետ կազմակերպվող հանդիպումների ժամանակ, եղել է նրանց ցանկությունը, հավաստիացրեց. նման ձեռնարկների լավ արդյունքի դեպքում կիրականացվեն նաեւ այլ ծրագրեր:

ՌԱԿ «Փանոս Թերլեմեզյան» երիտասարդական ակումբի շնորհալի աղջիկների քառյակի կատարմամբ ազգային սքանչելի երգեցողության երկու-երեք համարները զարդարեցին բացման համեստ հանդիսությունը:

Տեղեկացնենք այս առիթով, որ ՌԱԿ ԿՎ-յան ջանքերով վերջին մեկ տարվա ընթացքում Եղվարդ եւ Սեւան քաղաքներում նույնպես գործում են համակարգչային անվճար ուսուցման լսարաններ, իսկ Սիսիանում` հրացանաձգության եւ Երեւանի Նորք թաղամասում` պատանեկան շախմատի դպրոցներ: Գ. Մ.

## Նոր էլեկտրագնացքով Երեւան-Գյումրի` «ընդամենը» 2,5 հազար դրամով

*Երկվագոն շարժակազմը սկսելու է գործել մարտի 4-ից*

Փետրվարի 27-ին առաջին ստուգիչ չվերթն է կատարել Երեւան-Գյումրի-Երեւան երթուղում աշխատանքը սկսող նոր` ԷՊ2Դ ժամանակակից էլեկտրագնացքը: Վերջինս `Հարավկովկասյան երկաթուղի՛ ՓԲԸ-ն գնել է ռուսաստանյան արտադրող ընկերությունից, եւ այն մի քանի ամիս փորձարկվում էր Հայաստանի պայմաններում:

Ըստ շահագործող ընկերության պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվության` նոր էլեկտրագնացքը կաշխատի ուրբաթ-կիրակի օրերին էքսպրեսի ռեժիմով` առանց բաժանիչ կանգառների, ժամը 10-ին մեկնելով Երեւանից Գյումրի եւ 17-ին մոտ վերադառնալով մայրաքաղաք: Միաժամանակ կշարունակեն գործել հին շարժակազմերով չվերթները: Նոր գնացքով ուղեւորությունը կտեւի մոտ երկու ժամ, ինչն, անշուշտ, հաճելի նորություն կլինի եւ հարմար` ուղեւորի համար:

Թվում է` այստեղ վերջապես մեզ էլ մարդու տեղ դրեցին ու գոնե էլեկտրագնացքով 20-րդ դարից տեղափոխվում ենք 21-րդ դար: Բայց նախ, նշված չվացուցակի պարագայում փոքր է թվում այս գնացքից Գյումրու ուղեւորի օգտվելու հավանականությունը, որը սովորաբար մայրաքաղաք է գնում այնտեղ տվյալ օրն ունեցած որեւէ գործը հոգալու ու վերադառնալու, մինչդեռ այստեղից երեկոյան շարժվելն ու տեղ հասնելն իմաստ չունի: Ժամը 10-ին շարժվելը հարմար է Երեւանից եկող ու վերադարձող ուղեւորներին, որոնց թիվը, կարծում ենք, անհամեմատ փոքր է: Եթե մեր այս դատողությունը ճիշտ է, ուրեմն չվացուցակը ժամերի առումով սխալ է կազմված: Իհարկե, լավագույն լուծում կարող էր լինել երկու նման գնացքների առկայությամբ մոտավորապես նույն ժամին մեկը Երեւանից, մյուսը Գյումրիից մեկնելը, բայց այդ դեպքում նրանք առանց կանգառի շարժվելով մի տեղ պիտի հանդիպեին, ինչի հնարավորությունը մեր երկաթուղին երեւի չունի:

Մյուսը ուղեվարձի խնդիրն է: Ժամանակին տարբեր պատասխանատուներ այս էլեկտրագնացքի ապագա ուղեվարձի չափի մասին խուսափողական պատասխաններ էին տալիս, երեւի դեռ չէին կողմնորոշվել: Բայց ասում էին, որ հին էլեկտրագնացքների տոմսի գնից (Գյումրի-Երեւան` 1000 դրամ) շատ չի տարբերվի: Այսօր արդեն կողմնորոշվել են. ըստ փետրվարի 28-ին ընկերության պաշտոնական կայքի տեղեկացման, գնացքն աշխատելու է 2500 դրամ ուղեվարձով: Բարով աշխատի...

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

## Հայ գիտնականների հետազոտությունը LARES արբանյակով` եվրոպական կարեւորագույն գիտական արդյունքների թվում

***Վահագն Գուրզադյանի ղեկավարած հետազոտությունը LARES արբանյակով` ներառվել է եվրոպական գիտական կարեւորագույն (highlight) արդյունքների թվում, ինչպես հայտնում են գիտության լրատվական կայքերը.***

***https://www.epj.org/epjplus-news/1428-epjplus-highlight-laser-ranged-satellite-measurement-now-accurately-reflects-earths-tidal-perturbations***

***https://www.sciencedaily.com/releases/2018/02/180220123050.htm***

***https://phys.org/news/2018-02-laser-ranged-satellite-accurately-earth-tidal.html***

***Հաղորդագրությունների հակիրճ թարգմանությունը` ստորեւ:***

**Երկրագնդի գրավիտացիոն դաշտի մակընթացային խոտորումներն ունեն ազդեցություն արհեստական արբանյակների շարժման վրա: The Laser Ralativity Satellite (LARES) արբանյակը առ այսօր արձակված արբանյակներից լավագույն փորձարարական մասնիկն է, որ շարժվում է երկրագնդի գրավիտացիոն դաշտում: European Physical Journal Plus ամսագրում տպագրված նոր հետազոտությունում հաստատվում է այդ արբանյակի արդյունավետությունը Էյնշտեյնի Հարաբերականության ընդհանուր տեսության եւ հիմնարար ֆիզիկայի ստուգման համար:**

**Երկրագնդի մակընթացային խոտորումների հետազոտության միջոցով Վահագն Գուրզադյանը (Կոսմոլոգիայի եւ աստղաֆիզիկայի կենտրոն, Երեւանի պետական համալսարան) եւ իր գործընկերները ցուցադրել են լազերային անդրադարձման արբանյակների արդյունավետությունը բարձր ճշգրտության չափումների համար: Հետազոտության հեղինակները հետազոտել են LARES արբանյակի 3.5 տարվա, ինչպես նաեւ երկու այլ արբանյակների` LAGEOS եւ LAGEOS-2, տվյալները, ապա մոդելավորել են գրավիտացիոն եւ ոչ գրավիտացիոն խոտորումները լազերային տվյալներում հարաբերականության տեսության երեւույթի ներդրման տարանջատման համար: Գիտնականները հաշվարկել են մակընթացային խոտորումների մոդերը (բաղադրիչները) օգտագործելով երկնային մեխանիկայի խոտորումների տեսությունը:**

**Էյնշտեյնին Հարաբերականության տեսության կանխատեսումներին նվիրված այս հետազոտությունը ունի կարեւոր աստղաֆիզիկական կիրառություններ:**

*V. G. Gurzadyan, I. Ciufolini, H. G. Khachatryan, S. Mirzoyan, A. Paolozzi, G. Sindoni. On the Earth s tidal perturbations for the LARES satellite. The European Physical Journal Plus, 2017; 132 (12)*

AZG NEW SHABAT.QXD 01/03/2018 21:50 Page 3



➪1

Բոլոր դեպքերում անառարկելի է փաստը, որ, անկախ թաքնված շարժառիթներից, Հայաստանի իշխող մեծամասնությունը գոնե հրապարակային տեսանելիության հարթույթում մեջտեղ է բերել մի այնպիսի թեկնածուի, որի համար, ՀՀԿ-ական պատգամավոր **Սամվել Ֆարմանյանի** բնութագրմամբ, գլուխը բարձր եւ պարզերես կարող են լինել ոչ միայն նրան առաջադրող մեծամասնությունը (ՀՀԿ-ն եւ ՀՅԴ-ն), նրան իր քվեն տված «Ծառուկյան դաշինքը», այլեւ Հայաստանն առհասարակ, եթե, իհարկե, այդ մարդուն թողնեն իրականացնել բոլոր այն պատկերացումները, որոնց մասին երեկ ասում էր նա Ազգային ժողովում: Ու, ՀՀԿ խմբակցության ղեկավար **Վահրամ Բաղդասարյանի** բնորոշմամբ՝ կյանքի բոլորը բնագավառներում առաջամարտիկի, «անխոցելի ու ճիշտ» թեկնածուի գաղափարների իրականացումը չի խանգարելու հենց իշխող ՀՀԿ-ին՝ դիպչելով մեծամասնության շատ անդամների շահերին ու գործելակերպին: Կամ, ինչպես իրեն առաջադրող մյուս ուժի՝ ՀՅԴ խմբակցության ղեկավար **Արմեն Ռուստամյանն** էր ասում, որպես տարբեր բնագավառներում հաջողված անձ, նա կկարողանա ուժ հաղորդել խորհրդարանական հանրապետության սահմանափակ լիազորություններով նախագահի աթոռին, միս ու արյուն տալ Սահմանադրությանը՝ հրաժարվելու համար այն մղձավանջից, որն այսօր առկա է:

# Արմեն Սարգսյանը՝ խորհրդարանական հանրապետության նախագահ

Ինչ էր ասում ինքը՝ Արմեն Սարգսյանը խորհրդարանում, որն, ի դեպ, նա տարբեր վարկածներով ասում էր նաեւ իր բոլոր հանդիպումների ընթացքում: Նրա շատ մտքեր պարզապես արդիական են այն աստիճանի, որ կզարդարեին ուզած ընդդիմադիրի ելույթը՝ զուտ խնդիրներին այլընտրանքային պատուհանից նայելու դիպվածով, բայց դա էլ նեղ բնորոշում կլիներ՝ նրա մոտեցումները մեր երկրի խնդիրներն ամբողջական ընկալող, դրանք համաշխարհային գործընթացներին համադրող լայնախոհ գործչի հայացքով արված բնութագրումներ էին, մյուս կողմից՝ կոչելով մերոնց հետ կանգնել անհանդուրժողականությունից, միմյանց ոչնչացնելուց, որպես հայերիս համար մեծ շռայլությունից. «Այն բոլորը, ինչ լսեցի պարզ մարդկանցից, անփոխարինելի են, քանի որ ոչ մի տեղեկատվություն չի կարող նրանցից լսածին փոխարինել», նշեց նա:

Դատելով նրա ելույթից՝ Հայաստան պետության գլուխ է դառնում մի մարդ, ով կապում է իրար հետ անցյալն ու ներկան, խորհրդային ժամանակի լավագույնը վերցնելու մոտեցումը համատեղում է տեխնոլոգիական դարաշրջանի մաս կազմելու իր պատկերացման հետ: Այսինքն՝ սերունդներին հաշտեցնելու, ու ներկա դարաշրջանի առաջընթացից հետ չմնալու խորհուրդը, որ դրված է հենց նրա կերպարի եւ կյանքի փորձառության մեջ, փաստորեն, ըստ նրան առաջադրողների, բխում է այս պահին Հայաստանի ներսում ու դրսում ստեղծված իրավիճակները փափուկ լուծումների տանելու անհրաժեշտությունից: Համենայնդեպս՝ այդպիսի տպավորություն էր նրա ելույթից:

Նա խոսում էր պատերազմում հաղթող ժողովրդի զավակ լինելու եւ սոցիալապես բեւեռացված հասարակությամբ ապրելու անհամատեղելիությունից. «Քրիստոնեական բարոյականության տեսակետից՝ մարդը չի կարող իրեն երջանիկ զգալ՝ աղքատության հարեւանությամբ», ասում էր նա՝ երեւի խորհրդարանի դոլարով միլիոնատերերին: Հաջողության բանալին եւ անհաջողությունների դասերը համատեղել առաջարկող Սարգսյանը արդյունավետ պետություն կառուցելու իր տեսլականն ամրապնդեց այն պահանջներով, որ տարիներով մենք բոլորս դնում ենք, ու դրանք անլուծելի են մնում՝ իրավապահ համակարգի պատասխանատվություն, օրենքի առաջ հավասարության, քաղաքական կամքի դրսեւորմամբ եւ հանրային աջակցությամբ՝ կոռուպցիայի վերացում, պետական կառույցների փոխհամաձայնեցված աշխատանք, Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ անջրպետների վերացում.«Քաղաքացի լինելը ռեսուրս է, որ մեզ կազատի ամեն ինչում մեղավոր փնտրելուց: Քաղաքացի լինելը բացարձակ անհրաժեշտություն է», ասում էր նա՝ ակնարկելով, որ առանց քաղաքացու ակտիվության այս բոլորը չեն իրականանա: Ժառանգությունն ու փորձը հսկայական նշանակություն ունեն, ըստ նրա, ու պիտի չտրվել ամեն ինչ ջնջելու եւ զրոյից սկսելու մղումին:

Օրենքի նկատմամբ հարգանք, դաստիարակություն, մայրենի լեզվի կարեւորում՝ սրա՛նք են հիմքը, որ պետք է դրվի դպրոցից, կրթությունն ընդհանրապես փոփոխությունների հիմքն է:

Անձնական ու ընտանեկան նրա փորձառությունը ձեւավորել են մոտեցումներ Սփյուռքի նկատմամբ, որոնք նա փորձելու է իրականացնել: Ա. Սարգսյանը առանձնահատուկ գնահատեց 12 միլիոնանոց Սփյուռքի դերը հայության ու հայրենիքի խնդիրների լուծման առումով: Նրա կարծիքով՝ Սփյուռքի ներուժի մի փոքր մասն է ի սպաս դրվում հայրենիքին, հստակ ծրագիր է պետք այս առումով, եւ Սփյուռքը հավասար պատասխանատվություն ունի հայրենիքի հանդեպ: Պատահական չէր երեւի, որ նա ասում էր, թե ոչ միայն իրեն ընտրող խորհրդարանական ուժերի, այլեւ Հայաստանի բոլոր քաղաքացիների նախագահն է լինելու, ընդունելի լինելով նաեւ Սփյուռքի եւ Արցախի համար:

Խորհրդարանական-կուսակցական Հայաստանում նա չի պատրաստվում որեւէ կուսակցության անդամ դառնալ՝ սա ի պատասխան վարչապետի թեկնածու եւ կուսակցական ցուցակ գլխավորելու հնարավորության հարցին, իսկ թե այդ մոտեցումն աշխատելիս նա կկիրառի՞՝ փորձելով գտնել ու երկրին ծառայեցնել նաեւ անկուսակցական պրոֆեսիոնալների ու անտեսված կադրերի ներուժը, դա միայն հետո կիմացվի:

Արտագաղթի դեմն առնելու համար շատ պարզ քայլեր պետք է անել, ըստ նրա, տնտեսական զանազան ծրագրերով, տուրիզմը զարգացնելով առանձնահատուկ նկարագրով մեր փոքր քաղաքներում, գավառում հնարավորություններ ստեղծելով, ոլորտներում ներդրողին խրտնեցնող բացասական երեւույթները վերացնելով:

21-րդ դարի խաչմերուկում ենք՝ նոր տեխնոլոգիաների ու մտքի դար է լինելու, հայ ժողովուրդը հնարավորություններ ունի կրկին հաղթող լինելու, կրկի՛ն խոսքը կրթությանը պետք է վերաբերի, ասում էր նա: Նոր տեխնոլոգիաներ կարող ենք արտահանել, ինչպես «Թումոյի» դեպքում եղավ, պետք է վերագնահատենք մեր կրթական համակարգը՝ վերցնելով խորհրդային լավն ու ներառելով քսանմեկերորդ դարը: Հայաստանում առաջնահերթ պետք է դիտարկել բնապահպանության խնդիրը՝ ամեն օրենք ընդունվելուց առաջ պետք է բնապահպանական թեսթ անցնի, կոռուպցիոն օրենքներ պետք է չընդունվեն, բարձր տեխնոլոգիաներ ներդրողների համար բարենպաստ ու բարյացակամ միջավայր ստեղծվի, եւ այլն: Նրա բոլոր ասածներից ենթադրվում էր, որ այդ բոլորը հատկապես խոչընդոտվել է վերջին տարիներին, կոռուպցիոն օրենքներ են ընդունվել, իսկ վերջին տարիներին իշխանության է եղել հենց այն ուժը, որն առաջադրել էր նրան:

Ու «ՀՀ քաղաքացիների նախագահ, Արցախի բարոյական աջակցությունը կրող նախագահ, Սփյուռքի նախագահ, մեկ ժողովրդի, մեկ ապագա ունեցող, բայց «համաշխարհային ազգի» նախագահ լինել հավակնող Արմեն Սարգսյանին բնականաբար ուզում ես ուղղել ծագող դիմակա հարցերը, որոնք այն տխուր փորձառությունից են, որ որեւէ մեկը, որ Հայաստանում մտադիր է բան փոխել, ինքն է խրվում փոփոխության անհնարինության տիղմի մեջ: Մանավանդ՝ երբ Արմեն Սարգսյանին սկսեցին գովել այն մարդիկ, որոնք պիտի իրենց մեղավոր զգային այն բանի համար, որ երկրի ներսում անհանդուրժողականությունն ու անվստահությունն է մեծացել, բեռլինյան պատեր կան մարդկանց խմբերի միջեւ (ըստ Ա. Սարգսյանի), աղքատություն ու անվստահություն, քանի որ այդ մարդիկ երեսուն տարի իշխանության տարբեր պաշտոններում են եղել: Տանք այդ հարցերից մի քանիսը.

-Պարոն Սարգսյան, ո՞ւմ հետ եք անելու տեխնոլոգիական հեղափոխությունը Հայաստանում, արդյոք այն մարդկա՞նց, ում կարողությունը գոյանում է դրան դիմադրելով:

-Ո՞ւմ հետ եք բիզնեսի՝ աշխարհում առաջատար տեխնոլոգիական ճյուղերը ներմուծելու Հայաստան, արդյոք քվոտային բիզնեսով ու դեմպինգի միջոցով մենաշնորհային գին սահմանող գործարարների հե՞տ, ովքեր նաեւ հենց այդ հարցն էին տալիս Ձեզ խորհրդարանում:

-Ինչպե՞ս պիտի կրթական համակարգում Սահմանադրությամբ բոլորի համար հավասար մրցակցային հնարավորությունն ապահովենք, երբ դպրոցի տնօրենին իր ազգականներից ընտրում ու նշանակում է տեղական իշխանության՝ կասկածելի կրթությամբ ու բարոյականությամբ ներկայացուցիչը:

-Ինչպե՞ս պիտի Սփյուռքը չհակադրենք հայրենիքին, երբ մեր երկրի բարձր ղեկավարությունը Սփյուռքի գործիչներին գնահատում է ոչ թե ըստ արածի, այլ իշխանության հանդեպ վերաբերմունքի:

-Ինչպե՞ս ենք Հայաստանի վերնախավին հասկացնելու, որ գավառ՛ում են ծնվում տաղանդները, ոնց որ Դուք եք ասում, մինչդեռ նրանց բացարձակ մեծամասնությունն իր ազգուտակին, ուստր-դուստրերին է գործուղում է իշխանական պաշտոնների:

-Տեսնես մինչեւ վերջ պատկերացնո՞ւմ եք, թե ո՞ւր եք եկել:

Հարցերը շարունակելի են:

Շնորհավորում ենք:

# Փախստական՝ սեփական երկրում

## *Հետեւում՝ սուր, առջեւում՝ ջուր*

Մինչ մենք խոսում ենք հայրենադարձությունից եւ սփյուռքի տարբեր գործարարներին հրավիրում ապրել ու աշխատել Հայաստանում, որտեղ, ինչպես վարչապետն է ասում՝ բիզնես անելու լավագույն ժամանակն է, ու ինչպես նախագահն է ասում՝ ապահով է, Գեղարքունիքի մարզի Վարդենիսի շրջանի որոշ գյուղերում (Փոքր Մասրիկ, Ավազան, Գեղամասար, Արեգունի, Դարանակ, Փամբակ, Ծափաթաղ եւ այլն) մարդիկ ծիծաղում են: Եվ այս հայտարարությունների կապակցությամբ, եւ ցավից, որը նրանց պարագայում այնքան երկար է տեւում ու այնքան մեծ է, որ եթե ասենք հավերժ է, չենք սխալվի: Այդ գյուղերից այն կողմ սկսվում է Ադրբեջանը, բայց խնդիրն այն է, որ այդ գյուղերը կարծես Հայաստանում չեն կամ դրանց բնակիչները հայաստանցի չեն, չնայած՝ հայ են ու Հայաստան են եկել՝ Բաքվից, Կիրովաբադից, Դաշքեսանից, Խանլարից, Շամքորից, Շահումյանից ու հարակից այլ վայրերից՝ իրենց վշտերով ու անհամար խնդիրներով:

Խորհրդային Միության փլուզմանը զուգընթաց, ինչպես գիտենք, «եղբայրական» Ադրբեջանի կոտորածներից խուսափելու համար տեղի հայերը ստիպվեցին զանգվածաբար լքել ու տեղահանվել իրենց բնօրրանից: Բոլորը՝ ով որ կենդանի մնաց... Եկան, որ կարողանան ապրել:

Գրեթե երեք տասնամյակ է անցել, բայց այդ մարդիկ կանգնած են անլուծելիի պիտակով լուծելի խնդիրների առաջ: Նրանք մինչեւ հիմա մի տեսակ ընկալվում են որպես «փախստական», որոնց խմելու եւ ոռոգման ջրերի բացակայությունը կարելի է անտեսել, հոսանք չտալ, տալու դեպքում էլ՝ անընդհատ տատանումներով, դպրոցներին մանկավարժներով չապահովել, գազ չտալ...: Այսպես՝ շրջանի՝ բռնագաղթվածներով վերաբնակեցված համայնքներում գազամատակարարում չկա, այն դեպքում, երբ հարակից՝ ոչ բռնագաղթվածներով բնակեցված համայնքներում գազն առկա է: Այս տարածաշրջանը Հայաստանից դո՞ւրս է... Մարդիկ, որոնք բնակվում են սահմանամերձ գոտում՝ հակառակորդի ագրեսիայի մշտական վտանգի տակ: Վախենո՞ւմ են, ամենեւին, կատակում են՝ **Հետեւում՝ սուր, առջեւում՝ ջուր**, ասում են նրանք՝ նկատի ունենալով հետեւի թշնամուն ու դիմացի՝ Սեւանա լիճը: Նրանցից շատերը ջարդ են տեսել, նրանց իրենց տներից են հանել, նրանք կարողացել են իրենց ազատել մահվան ճիրաններից, ուստի ինչպե՞ս կարելի է այսքանից հետո նրանց վախեցնել գազ չտալով, եւ ինչպե՞ս կարելի է նրանց գազ չտալ: Ի դեպ, նրանց արգելված է ծառ հատել: Իհարկե, առհասարակ շատ ճիշտ է ծառահատումների արգելքը, բայց ի՞նչ անել, երբ վառելանյութ է պետք: Տեղի տարեց բնակիչներից մեկը մեզ պատմեց, որ տարիներ առաջ համագյուղացիներից մեկը մանկահասակ երեխաներին ցրտից պաշտպանելու համար անտառից բերված մեկ-երկու խորանարդ մետր փայտի համար վճարել է ահռելի մեծ գումարներ՝ հետագա դատական քաշքշուկներից խուսափելու համար, դե այսինքն կաշառել է, կոռուպցիա, որի դեմ ամբողջ ուժով, երկրով ու ազգով պայքարում ենք, մեջ է մտել, մտել է, որպեսզի իր երեխաները չմրսեն, մտել է, քանի որ գազ չունի, հոսանքով էլ անհնար է տունը ջեռուցել, այսինքն՝ հնարավոր է, բայց ատոմակայան ունեցող պետությունը լույսն իր քաղաքացիներին այնքան թանկ է վաճառում, որ ողջ ձմեռ տունը հոսանքով ջեռուցելու դեպքում գարնանը պետք է տունը վաճառի, որպեսզի կարողանա քաղաքացու խնդիրներով «մտահոգ» պետության պարտքերի տակից դուրս գա ...: Իսկ նման վիճակը մարդկանց արտագաղթի է դրդում:

-Ի՞նչ ա, պետք ա թողի, էրեխեքը ցրտից մեռնե՞ն, ինչ ա՝ ծառն ափսոս ա՞,- վրդովված ասում են գյուղացիները:

Ամենայն լրջությամբ մարզի՝ պետության ղեկավարությանը հարցնում ենք՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի շրջանի բռնագաղթվածներով վերաբնակեցված գյուղերը Հայաստանո՞ւմ են, երբ ասում ենք «Ապահով Հայաստան», այդ գյուղերն է՞լ նկատի ունենք, երբ ասում ենք՝ վերադարձեք ու աշխատեք Հայաստանում, այդ մարդկանց է՞լ նկատի ունենք, թե՞ այդ գյուղերն ու մարդիկ սրի ու ջրի մեջտեղում, անգազ, անլույս ու անհույս պետք է ապրեն, մինչեւ բարեհաճեք որեւէ բան ձեռնարկել... Ո՞ւշ չի լինի, պարոնա՞յք...

Առաջիկա համարներում ավելի մանրամասն կանդրադառնանք Հայաստանում Ադրբեջանից բռնի տեղահանվածների խնդիրներին:

**ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ**
**Վարդենիս-Երեւան**

# Հայաստանի ձայնի եւ մտահոգությունների մասին Եվրոպայում

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

Դետրոյթ, ԱՄՆ

Հայաստանը ներքին քաղաքական բարեփոխումներ իրականացնելուն զուգահեռ, պարտավոր է պահպանել նաեւ իր միջազգային հարաբերությունները եւ իր ձայնն ու մտահոգությունները լսելի դարձնել միջազգային ֆորումներում: Խաղաղություն դեռ հաստատված չէ ո՛չ Հայաստանի սահմաններում, ո՛չ էլ Արցախում: Զինվորներ եւ քաղաքացիներ շարունակում են զոհվել Ադրբեջանի կողմից հրադադարի խախտումների հետեւանքում:

Ոչ մի համոզիչ պատճառաբանություն կամ բացատրություն չտրվեց այն մասին, թե ինչու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը անսպասելիորեն որոշեց նախագահական ընտրությունները անցկացնել ապրիլին, եւ ոչ թե նախատեսված հոկտեմբերին: Ակներեւ է, որ երբ էլ տեղի ունենան այդ ընտրությունները, Ալիեւյան դինաստիայի իշխանության շարունականությունը կանխորոշված փաստ է:

Ընտրարշավի ընթացքում «Նոր Ադրբեջան» կուսակցությունն անցկացրեց իր 6-րդ կոնգրեսը իր նոր (ու հին) թեկնածու՝ Ալիեւին առաջադրելու համար: Բավական չէր լսել ազերի նախագահի ռազմատենչ սպառնալիքները՝ զենքի ուժով ղարաբաղյան հակամարտությունը լուծելու վերաբերյալ, նա նաեւ ավելի առաջ գնալով հոխորտաց իր երկրի սահմանները ընդարձակելու մտադրությունների մասին, պնդելով, որ Երեւանը, Զանգեզուրը եւ Սեւանը պատմական ազերի տարածքներ են եղել եւ Բաքվի «ռազմավարական նպատակն» է վերադարձնել այդ տարածքները: Նա կարդում էր նախօրոք պատրաստված տեքստը, այնպես որ իր խոսքերը չեն կարող համարվել բորբոքված վիճակում արտաբերված լեզվի սայթաքումներ:

Այս մոլեգին վիրավորանքի հակադարձումից հետո, «Նոր Ադրբեջան» կուսակցության խորհրդարանական պատգամավորներից **Ռասիմ Մուսաբեկովը** փորձեց մեղմացնել Ալիեւի խոսքերը ասելով, որ նա ի նկատի ուներ ադրբեջանցիների վերադարձը այդ տարածքներում գտնվող իրենց տները: Անճարակ մի արդարացում, հատկապես այն պատճառով, որ այնտեղ բացակայում է հակառակ կողմի միեւնույն իրավունքը: Ի՞նչ ճակատագիր է սպասում Բաքվում, Սումգայիթում եւ Գյանջայում ազերիների իրագործած կոտորածների հետեւանքում այդ վայրերից վտարված կամ փախած հայերին:

Ալիեւը հաստատ գիտեր ինչի մասին է խոսում, որովհետեւ իր այդ հռետորական տոնը անհրաժեշտ էր իր ներքին ունկնդիրներին:

Ռազմատենչ բառերի ստեղծած այս լարվածությունը տարբեր ձեւով մեկնաբանվեց Հայաստանում: Շատերը փորձեցին անտեսել այն համարելով, որ սովորական ընտրական քարոզչություն է, բայց ուրիշներ լուրջ վերաբերվեցին դրան եւ առաջարկեցին ռազմավարական հակադարձ քայլեր ձեռնարկել: Ոմանք նույնիսկ հավատացին, որ եթե Ալիեւը Երեւանին էր ակնարկում, ուրեմն ազերի բանակը գուցե պատրաստվում էր, թուրքական բանակի զորակցությամբ, հարձակվել Հայաստանի վրա Նախիջեւանից: Մի քանի «բազեներ» էլ առաջարկեցին կանխարգելիչ հարձակումներ գործել նախքան ազերիները որեւէ քայլ կձեռնարկեին:




Մեր դարում եւ մեր օրերում մարտավարություն մշակողները պարտավոր են հաշվի առնել իրենց գործողությունների դոմինո էֆեկտը:

Ռազմական որեւէ սցենարի պարագայում, Հայաստանը անտես չպետք է անի թուրքական գործոնը: Առաջին հակամարտության ժամանակ Թուրքիան անմիջականորեն մաս չէր կազմում: Հիմա այլ է իրավիճակը: Բացի այդ, Երեւանը նախեւառաջ Մոսկվայի համաձայնության կարիքն ունի, քանի որ Հայաստանը ի վիճակի չէ առանձին դիմադրել Ադրբեջանի եւ Թուրքիայի միացյալ զորքերին: Նա կարիքն ունի ռուսական զորքերի ռազմավարական մասնակցության:

Գուցե Կովկասում այս հանկարծակի զարգացումներն էին, որ արագացրին նախագահ Սերժ Սարգսյանի ուղեւորությունը Մյունխեն՝ մասնակցելու Անվտանգության կոնֆերանսին: Երկար տարիներ Հայաստանի մասնակցությունը նախագահական մակարդակով չէր եղել:

Իր խոսքի նախաբանում Հայաստանի նախագահը նշեց, որ աշխարհաքաղաքական խոշոր կենտրոնների շահերի խաչմերուկում հայտնվելը ե՛ւ մարտահրավեր էր, ե՛ւ հնարավորություն: Նա անտարակույս ակնարկում էր Եվրոմիության եւ Թուրքիայի, մասնավորապես Գերմանիայի եւ Թուրքիայի միջեւ գոյություն ունեցող լարվածությանը: Անցյալ տարի Գերմանիայի հանդեպ Թուրքիայի ցուցաբերած անբարտավանությունը պատճառ դարձավ կամ նպաստեց, որ Գերմանիայի Բունդեսթագը Հայոց ցեղասպանությունը ճանաչող պատմական որոշում ընդունի: Նրան հետեւեց Նիդեռլանդների որոշումը՝ քննարկելու երկու բանաձեւեր խորհրդարանում:

Անցյալ շաբաթ պարզ դարձավ, որ խորհրդարանը վերահաստատում է Հայոց ցեղասպանությունը ճանաչող 2004-ին ընդունած իր որոշումը եւ պատրաստվում է Հայաստանում ցեղասպանության ապրիլյան ոգեկոչումներին մասնակցել կառավարական ներկայացուցչությամբ:

Սա, իհարկե, վրդովեցրեց Թուրքիային եւ ստիպեց, որ Ամստերդամից ետ կանչի իր դեսպանին: Այս արարողությունը կրկնվում է ամեն անգամ, որ մի երկիր ճանաչում է Հայոց ցեղասպանությունը: Որոշ ժամանակ անց, սովորաբար, հարաբերությունները վերականգնվում են:

Մինչ հայերս գերագնահատում ենք Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում ներդրված մեր քարոզչական ջանքերը, չպետք է թերագնահատենք թուրքերի դերակատարությունը իր հակառակորդներին հակընդդեմ քայլեր ձեռնարկելու գործում: Խոսքը վերաբերում է Իսրայելի Քնեսեթին, որ վերջերս քննարկեց եւ մերժեց ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը:

Արդեն որոշ ժամանակ է, ինչ հարաբերությունները Իսրայելի եւ Թուրքիայի միջեւ լարված են: Գուցե, այդ պատճառով էլ թշնամիներով շրջապատված վարչապետ Բենիամին Նաթանյահուի կառավարությունը որոշեց այդ քայլով հասկացնել Թուրքիային, որ ժամանակն է բարելավելու հարաբերությունները:

Ընդունված է, որ երբեմն երրորդ կողմի միջոցով են հակառակորդները միմյանց ուղերձներ հղում, հաշտեցման եզրեր փնտրում, կամ հաշիվներ մաքրում: Հայաստանի նախագահը հավանաբար այդ հնարավորության մասին էր ակնարկում, երբ Մյունխենում արտասանած իր խոսքում շեշտը մասնավորապես դրեց Հայաստանի արտաքին քաղաքականության վրա, ակնարկելով Հելսինկիում ընդունված եզրափակիչ փաստաթղթին, որտեղ ամրագրված են ղարաբաղյան հակամարտության կարգավորման սկզբունքները՝ ինքնորոշման իրավունքն ու տարածքային ամբողջականության պահպանումը: Նա զգուշացրեց դիվանագետներին նպատակահարմարությունից ելնելով չտարանջատել կամ չհակադրել այդ սկզբունքները:

Նա նաեւ առիթից օգտվելով խոսեց Ադրբեջանի վերջին ժամանակների ընդգծված տարածքային նկրտումների մասին, որոնք նա «զառանցանք» որակեց, եւ կոչ արեց միջազգային հանրությանը հակադարձել նման ամբարտավանություններին: «Եվրոպայի լռության պայմաններում այդպիսի անհեթեթություններ կարող են ունենալ շատ լուրջ հետեւանքներ», զգուշացրեց նա: Ապա անդրադարձավ բեռլինյան պատին, որը քանդվեց, բայց Հայաստանի շրջափակումը Թուրքիայի կողմից դեռեւս շարունակվում է: Հայաստանն իր բարի կամեցողությունն արտահայտեց ստորագրելով Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու Արձանագրությունները, բայց Թուրքիան ետ քաշվեց վերջին րոպեին նախապայմաններ դեմ դնելով: Գործնական գետնի վրա այդ Արձանագրությունները ներկայիս կորցրել են իրենց նշանակությունը, որովհետեւ Հայաստանը չի կարող անվերջ սպասել, որ Թուրքիայի խորհրդարանը վավերացնի դրանք:

Նախագահ **Սարգսյանի** բոլոր բացահայտումները խիստ հաշտարար եւ կառուցողական տոնով էին մատուցված՝ չստեղծելու համար այն տպավորությունը, թե Հայաստանը Եվրոպայի դարպասների առջեւ իր դժգոհություններն է արտահայտում: Նա նաեւ ուրվագծեց Հայաստանի դրական դերակատարությունը որպես կամուրջի՝ Եվրասիական տնտեսական միության եւ Եվրոմիության միջեւ: Այդ զույգ կառույցներին Հայաստանի միաժամանակյա մասնակցությունը ոչ թե խոչընդոտել է համագործակցությանը, այլ ընդհակառակը՝ նպաստել տարածաշրջանի արդիականացմանն ու արդյունաբերական զարգացման գործընթացին: Նա տեղեկացրեց, որ ներկայումս բանակցություններ են վարվում կառուցելու տրանզիտային միջանցք Պարսից ծոցի եւ Սեւ ծովի միջեւ: Հենց ավարտվի, կառույցը ծառայելու է ոչ միայն մասնակից պետություններին, այլեւ տարածաշրջանի բոլոր երկրներին: Սարգսյանն իր ելույթն ավարտեց եզրակացնելով, որ ԵՄ-ԵԱՏՄ համագործակցությունը շահավետ է բոլոր կողմերի համար:

Մինչ վերաձեւավորվում են իրավիճակները Մերձավոր Արեւելքում եւ Կովկասում, ժամանակն է, որ Հայաստանը հաստատակամորեն իր ուրույն տեղն ապահովի աշխարհում: Եվ դրան զուգահեռ արդիականացնի եւ վերազինի իր բանակը, որպեսզի կանխի մեկ այլ «բլիցկրիգ» Ադրբեջանի կողմից:

Հայաստանը հետեւում է նախագահ Ռուզվելտի «մեղմ խոսիր, բայց ձեռքում պահիր մի մեծ մահակ» խորհրդին:

Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

## Վավերագրական ֆիլմ Սեւան Բիչաքչիի մասին



*Բրուք Շիլդս, Սեւան Բիչաքչի*

Վաշինգտոնում կայացած «Independent Film Festival-ի (անկախ կինոփառատոնի) ընթացքում փետրվարի 19-ին ցուցադրվել է **Ումրան Շաֆտերի «Վարպետ Սեւանը»** վավերագրական ֆիլմը, որ պատմում է «մատանիների արքա» հորջորջված եւ միջազգային մրցանակների արժանացած հայազգի ոսկերիչ **Սեւան Բիչաքչիի** մասին:

Բիչաքչին ծնվել է Ստամբուլում 1972-ին: Տասներկու տարեկանին դերասան հայրը նրան որպես աշկերտ տեղավորել է Ստամբուլի Մեծ շուկայում գործող ոսկերիչ Հովսեփ Չատափի աշխատանոցում: Իր վարպետի մահվանից հետո նա սեփական ոսկերչատունն է բացել եւ պատրաստել այնպիսի նուրբ եւ գեղեցիկ մատանիներ, ապարանջաններ եւ կախազարդեր, որոնք արժանացել են միջազգային մրցանակների Հոնկոնգում, Լոնդոնում եւ Լաս Վեգասում:

Նրա բյուզանդական եւ օսմանյան ոճի զարդեղենները գրավել են այնպիսի ճանաչված արվեստագետների ուշադրությունը, ինչպիսիք են Բրուք Շիլդսը, Քեթրին Զետա-Ջոնսը, Սելին Դիոնը, Մարիա Քերին, Թորի Բըրչը, Միշել Մոնագանը, Լիվ Թայլերը, Հալի Բերրին, Էլիզաբեթ Հըրլին եւ ուրիշներ:

«Իր յուրաքանչյուր ստեղծագործություն մի նոր աշխարհ է բացում, որը գերազանց կատարելության է հասնում շնորհիվ իր մանրակրկիտ ու բծախնդիր աշխատանքի», նշել են մասնագետները:

Հ.Ծ.

# Գրականությունը մեռնում է, ուռա՜

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**



Բոլորովին վերջերս, փետրվարի 27-ին, «Դինամո» մարզասրահում մի խումբ ոստիկաններ պարգեւատրվել են: Ոչ թե ձկներին բռնելիս՝ մեծ ու փոքր չանելու համար, ոչ էլ Հայաստանի բոլոր մարդասպաններին ու ավազակներին ձերբակալելու, այլ՝ ֆիզկուլտուրայում ցուցաբերած բարձր առաջադիմության համար: Սա շատ կարեւոր է, քանի որ եթե ոստիկանը հանկարծ ֆիզկուլտուրայից չցուցաբերի բարձր առաջադիմություն, ապա կունենա հաստ փոր, ինչը զգալիորեն կնվազեցնի նրա վազելու հնարավորությունները, ինչի հետեւանքով էլ ոչ միայն մանր ձկները ողջ կմնան, այլեւ խոշորները՝ կուշտ, բացի այդ ոչ մի մարդասպան ու ավազակ չի ձերբակալվի: Այնպես որ, շնորհավորում ենք մեր ոստիկաններին ու նաեւ մեզ, ֆիզկուլտուրայի բնագավառում առաջինների ցուցաբերած բարձր առաջադիմության համար: Ուռա՜:

Եւ սա պատահական չէ, նկատի ունեմ ֆիզկուլտուրայի հանդեպ մեր ոստիկանների՝ հանկարծ բորբոքված անհագուրդ սերը: Բանն այն է, որ հատկապես իր հանձնարարականներով հայտնի ՀՀ վարչապետ **Կարեն Կարապետյանը** փետրվարի 26-ին (ֆիզկուլտուրայի բնագավառում ոստիկանների ցուցաբերած բարձր առաջադիմության նախորդ օրը), մարզային այցելությունների շրջանակներում Լոռիի մարզում էր: Դե, քննարկել են մարզի կատարողականը, վարչապետը հիշեցրել է իր հանձնարարականները, լոռեցիները հպարտորեն նշել են, որ դրանց մեծ մասը կատարման փուլում է, ներկայացրել են իրենց մարզի՝ գրեթե Սինգապուրին հասնող տնտեսական աճի տեմպերը, մի խոսքով՝ լավ զրուցել են: Ու հանկարծ վարչապետը որոշել է, որ ինքը հենց այդ պահին ու հենց Լոռիում պետք է ներկայացնի ՀՀ վաղվա քաղաքացու իր պատկերացումները: Ընդ որում, վարչապետին որեւէ մեկը չի հարցրել, թե պարոն վարչապետ, այ օրինակ Դուք ինչպե՞ս եք պատկերացնում Հայաստանի վաղվա քաղաքացուն: Մարդը ուղղակի որոշել է, որ պետք է ասի ու ասել է հետեւյալը. «Ինչպիսին եմ պատկերացնում մեր վաղվա քաղաքացուն: Մեր երեխան անպայման պետք է առողջ լինի, դրա համար ֆիզկուլտուրան չափազանց կարեւոր է: Հայաստանի քաղաքացին պետք է առնվազն երեք լեզու իմանա, ոչ թե որովհետեւ մոդայիկ է, այլ դա դառնալու է խիստ անհրաժեշտ: Մենք պետք է կարողանանք դպրոցում երեխաներին սովորեցնել բնական գիտություններ, ֆիզկուլտուրա, SS, ռոբոտատեխնիկա, բիզնես եւ ֆինանսական մտածելակերպ»: Այսքանը, այսինքն վարչապետն այս թեմայի շուրջ էլ բան չի ասել: Ու մինչ պարզ է դառնում, թե ինչո՞ւ էին հաջորդ օրը մեր ոստիկանները փորձում աչքի ընկնել ֆիզկուլտուրայի բնագավառում, ասեմ, որ պարոն վարչապետի նշած բոլոր բաներն էլ կարեւոր են ու շատ ճիշտ է, որ մեր դպրոցներում մեր երեխաներն այդ ամենը սովորեն (հիմա փաստորեն, չենք կարողանում սովորեցնել, վարչապետն է ասել), բայց հարգելի վարչապետը չի՞ մոռացել ամենակարեւորը, նկատի ունեմ՝ Հայաստանի վաղվա քաղաքացուն նկարագրելիս: Բա հայոց լեզո՞ւն, գրականությո՞ւնը, պատմությո՞ւնը, դրանք խիստ անհրաժեշտ չե՞ն դառնալու, գոնե մոդայիկ չե՞ն, օրինակ նույն Լոռիում վարչապետը չէ՞ր կարող ասել, որ մեր երեխան՝ Հայաստանի վաղվա քաղաքացին, ռոբոտատեխնիկայից գերազանց ստանալուց բացի պետք է նաեւ իմանա, թե Անուշն ո՞վ է գրել, Լոռեցի Սաքոն ինչո՞ւ խելագարվեց, մանկահասակ Մարոյին ինչո՞ւ նշանեցին, Գիքորն ինչո՞ւ մահացավ,...: Լավ, կարելի է ու պետք է զարգացնել բնական գիտություններն ու մանավանդ դրանց դասավանդման ձեւն ու տեմպը, բայց հումանիտարների հաշվի՞ն, իսկ չե՞նք վախենում, որ Հայաստանի վաղվա քաղաքացին կարող է խոսել երեք լեզվով, քիմիայից Նոբելյան մրցանակակիր լինել, կարատեից սեւ գոտի ունենալ, դեղերի լավ բիզնես, բայց լինել հանձնարարականներ կատարող եւ կանխատեսելի-ծրագրավորված համապետական ընտրության գնացող ռոբոտ: Գուցե նպատակը հենց դա՞ է...

Ամեն դեպքում գրականությունն օգնում է, որ մարդը ռոբոտ չդառնա, վաղվա Հայաստանում է՛լ չի օգնելու:

Կեցցե՛ այն Հայաստանը, որն այսօր է եկել:

# Զոհից հետո, ողջի կողքին

**Փետրվարի 22-ին, երբ հայտնի դարձավ, որ Ադրբեջանը հերթական անգամ խախտել է հրադադարը, ինչի հետեւանքով, ժամը 09:40-ի սահմաններում, Արցախի ՊԲ հյուսիսարեւելյան ուղղությամբ գտնվող զորամասերից մեկի պահպանության տեղամասում զոհվել է ՊԲ զինծառայող, 1998-ին ծնված Գրիգոր Կարապետի Եղոյանը, ՀՀ նախագահի պաշտոնական կայքը տեղեկացրեց. «Նախագահի նստավայրում տեղի է ունեցել Լիբանանի նախագահի դիմավորման պաշտոնական արարողությունը»: Հիշեցնեմ՝ նախագահ Միշել Աունը մեր երկիր էր ժամանել պաշտոնական այցով: Բայց այս պատմությունը Լիբանանի հարգելի, կամ ինչպես հայկական կայքերից մեկն էր գրել՝ «հայասեր» նախագահի ու նրա՝ Հայաստան կատարած այցի մասին չէ:**

**Նույն օրը, ավելի ուշ, երբ Բակո Սահակյանը Գրիգոր Կարապետի Եղոյանին հետմահու պարգեւատրեց՝ ցուցաբերած արիության համար, ՀՀ նախագահի պաշտոնական կայքը գրեց. «Նախագահը շնորհավորել է ՀՀ ժողովրդական արտիստ Արտավազդ Փելեշյանին հոբելյանի առթիվ»: Ով չգիտի, ասեմ, որ Փելեշյանը դարձավ 80 տարեկան, բայց նա էլ այս պատմության հերոսը չէ:**

**Հետո, երբ հայտնի դարձավ, որ Գրիգոր Կարապետի Եղոյանը Ռուսաստանից վերադարձել է, որպեսզի ծառայի հայոց բանակում եւ նրա մարմինը տեղափոխում են հարազատ Շիրակի մարզի Ախուրյանի շրջան, ՀՀ նախագահի կայքը հայտնեց. «Նախագահի նստավայրում կայացել են հայ-լիբանանյան բարձր մակարդակի բանակցություններ», որոնց ընթացքում քննարկվել է Հայաստան-Լիբանան հատկապես տնտեսական գործակցության չօգտագործված, բայց իսկայական ներուժը կիրառելու հնարավորությունները, երկկողմ ներդրումների հավանականությունը, ինչի արդյունքում կոնկրետ մենք՝ Հայաստանում մի քիչ ավելի լավ պետք է ապրենք ու ավելի քչերս պետք է Ռուսաստան գնանք՝ աշխատելու, ինչպես Եղոյաններն էին գնացել: Բայց այս պատմությունը արտագաղթի մասին էլ չէ:**

**Երբ Գրիգորին բերեցին Ախուրյան ու սկսեցին քննարկվել նրա՝ եկեղեցում մկրտված լինել-չլինելու հարցերը, երբ պարզվեց, որ տղան մկրտված չի եղել, սակայն Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը կարգադրել է հոգեւորականներին՝ ծնողների կողքին լինել, իսկ զինվորին էլ եկեղեցի բերել, ՀՀ նախագահի պաշտոնական կայքը հայտնեց. «Նախագահ Սերժ Սարգսյանն այցելել է ՀԱՊԿ օդային ռոբոտատեխնիկայի ուսումնահետազոտական կենտրոն»:Սա արդեն հետաքրքրական է, քանի որ եթե նախագահ Աունը ոչ մի կերպ չէր կարող հյուրընկալվել Բաղրամյան 26-ում՝ առանց նախագահ Սարգսյանի եւ առանց վերջինիս մասնակցությամբ, Լիբանանի նախագահը չէր կարող բարձր մակարդակի բանակցություններ վարել Երեւանում, ապա Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում բացված ռոբոտատեխնիկական ուսումնահետազոտական հույժ կարեւոր կենտրոնը (որի ոչ թե առկայությունն է հույժ կարեւոր, այլ գործունեությունը կլինի), կարող էր եւ հետաձգվել, եթե իհարկե, դրա բացմանը պարտադիր պետք է Հայաստանի նախագահը ներկա գտնվեր: Բայց այս պատմության հերոսը ՀՀ նախագահն էլ չէ:**

**Եւ վերջում, երբ հայկական գրեթե ամբողջ լրատվադաշտը ողողված էր՝ «Էլի մեկ զոհ» վերնագրերով, ՀՀ նախագահի պաշտոնական կայքը գրեց. «Ի պատիվ Լիբանանի նախագահ Միշել Աունի՝ նախագահ Սերժ Սարգսյանի անունից տրվել է պաշտոնական ճաշ»: Ճաշի ընթացքում, ի դեպ, նախագահ Սարգսյանը հիշել է արաբական մի իմաստություն՝ «իրական ընկերը մեկ հոգի է՝ երկու մարմնում», նկատի ունենալով Հայաստանն ու Լիբանանը, այս երկու պետությունների միջեւ իրական ընկերությունը: Իսկ նախագահ Աունն ասել է. «Այս պատմական հավատքով եւ նահատակությամբ ծանրաբեռնված հողով անցնելը չի կարող լինել սովորական եւ ավանդական»: Բայց նույնիսկ այս բառերից հետո այս պատմության հերոսը Լիբանանի նախագահն էլ չէ, այլ...**

**Մի անգամ, երբ Նապոլեոնը համառորեն փորձում էր իրեն ենթարկված պահել տաքարյուն Իսպանիան, կայսրին հայտնեցին, որ իսպանական մի զորախումբ հարձակվել է ֆրանսիական զորախմբի վրա, բոլորին սպանել ու հեռացել: Նապոլեոնն անմիջապես գնում է դեպքի վայր ու տեսնելով տեղի ունեցածը, արագ կարգադրում է իր մարշալներին՝ մեկին՝ անմիջապես նամակ գրել Փարիզ, մյուսին՝ արագ մեկնել իրենց դաշնակիցներին մոտ, երրորդին՝ արագ գտնել ու կանգնել զոհվածների ծնողների կողքին...Մի խոսքով, ու երբ մարշալներից մեկը հարցնում է՝ «Իսկ Դո՞ւք, Կայսր, Դուք ի՞նչ եք պատրաստվում անել»: Նապոլեոնը նայում է մարշալին ու պատասխանում. «Թափթփուկների մի խմբավորում հարձակվել ու սպանել է իմ զինվորներին, կայսրը պետք է մնա ռազմաճակատում, որպեսզի որեւէ մեկի մտքով չանցնի, որ կարող է անպատիժ սպանել իմ զինվորին»: Ու մնում է, ավելի ուշ՝ Իսպանիան ենթարկվում է Նապոլեոնին: Բայց Ֆրանսիայի կայսրն էլ չէ այս պատմության հերոսը, այլ՝ այս պահին սահմանին կանգնած հայ զինվորը, որի կողքին, ամեն անգամ երբ ընկնում է զինակիցը, չի գալիս ու չի կանգնում գերագույն գլխավոր հրամանատարը: Ամեն զոհից հետո, այնտեղ, որտեղ կրակել են, գոնե կես ժամով, տասը րոպեով, կռվելու համար չէ, որպեսզի ոչ մի թափթփուկ չմտածի, թե անպատիժ կարող է սպանել մեր զինվորներին, որ մեկ մարդու կյանքն այս երկրում ամենակարեւորը համարվի, որպեսզի մեր զինվորներն ու մենք մենակ չլինենք:**

**Ազգ-բանակ ենք, չէ՞...**

Հ. ԱՖ.

# Հրաժեշտ զենքին

**Հեմինգուեյը դեռ 1929-ին ԱՄՆ-ին, չնայած ինչո՞ւ միայն ԱՄՆ-ին, ամբողջ աշխարհին առաջարկում էր՝ Հրաժեշտ զենքին: Չլսեցին, կոնկրետ ԱՄՆ-ում ոչ ոք մինչեւ օրս չի պատրաստվում զենքին հրաժեշտ տալ: Ընդ որում, ոչ երկրի սահմաններից մղոններով հեռու, ասենք՝ Սիրիայում կամ Հյուսիսային Կորեայի ափերին մոտ, ոչ էլ երկրի ներսում, ասենք Ֆլորիդայի դպրոցներից մեկում, որտեղ մի տղա, ինչպես գիտենք, զենքով մտավ ու սկսվեց սպանդը (ես գիտեմ այդ տղայի անունը, բայց չեմ տա):**

**Ու քանի որ ոչ Ֆլորիդան է ԱՄՆ-ի առաջին նահանգը, որտեղ դպրոցականը զենքով մտնում է դպրոց ու սկսում աջ ու ձախ կրակել, ոչ էլ Սիրիան է այն միակ երկիրը, որտեղ մտնում է ամերիկյան զորքը ու սկսում է ահաբեկիչ-խաղաղ բնակիչ հաշվի չառնել, եւ ամենակարեւորը, քանի որ Դոնալդ Թրամփը նախագահ ընտրվելուց առաջ խոսք էր տվել իր երկրի զինագործներին, որ ինչ էլ ուզում է լինի ինքը զենքի ազատ վաճառքը չի կասեցնելու, Ամերիկան զենքին հրաժեշտ չի տա, քանի դեռ նախագահը Թրամփն է, չնայած ԱՄՆ-ում կարեւոր չէ, թե ով է նախագահը:**

**Ավելին, Թրամփն առաջարկել է դպրոցներում հրաձգությունը կանխելու համար ...զինել ուսուցիչներին: Ըստ ԱՄՆ նախագահի, եթե Ֆլորիդայի դպրոցում ուսուցիչները զենք ունենային, ապա հնարավոր կլիներ խուսափել արյունահեղությունից ու զոհերից: Պատկերացրե՞ք, այսինքն դպրոց է մտնում մի զինված աշակերտ, որը որոշել է այդ օրը սպանել Քեթիին, Փոլին, ինչպես նաեւ ուսուցիչ միսթըր Թոմսոնին, որն իրեն հիշեցնում է համակարգչային սիրելի խաղի զզվելի հերոսին: Ահա եւ հանդիպում են իրար աշակերտն ու ուսուցիչը, տղան հանում է զենքը, բայց նա հո չգիտի՞, որ նախագահի որոշմամբ՝ միսթըր Թոմսոնը զենք է գնել, ուսուցիչն էլ իրենն է հանում, ու մինչ տղան կկրակի, Թոմսոնը սպանում է աշակերտին՝ դրանով իսկ կանխելով հերթական սպանդը: Հրաշք...**

**Իսկ պատկերացնո՞ւմ եք նման բան Հայաստանում: Դե օրինակ Տավուշի գյուղերից մեկում աշակերտը հանում է ազատամարտիկ քեռու որսորդական հրացանն ու նշան բռնում դասարանի ամենաաշխույժ սիրուն աղջկա վրա, որը սիրում է ոչ իրեն: Ու նույն պահին ուսուցիչը, որը եւս ազատամարտիկ է, հանում է իր հրացանն ու...Չէ, Հայաստանում, փառք Աստծո, նույնիսկ նման բան պատկերացնելն անհնարին է, չնայած Հայաստանում եւս զենքերը հավաքելու ու դրան հրաժեշտ տալու խնդիր կա:**

**Իսկ ամերիկացիներին մաղթենք երկար տարիների կյանք, աշխարհին էլ՝ խաղաղություն: Ի դեպ, եթե աշխարհում խաղաղություն լինի, ամերիկացիներն էլ երկար կապրեն, մենք էլ, նույնիսկ հյուսիսկորեացիներն էլ, անգամ ռուսները:**

**Զենքով հնարավոր չէ երկար ապրել, կապ չունի այն դու ես ուղղել ինչ-որ մեկի վրա, թե՞ ճակատիդ են դեմ տվել: Հեմինգուեյը սա 1929-ին էր հասկացել...Ի դեպ, Նոբելյան կոմիտեն ամերիկացուն պարգեւատրել է միայն Գրականություն անվանակարգում: Ես առաջարկում եմ՝ Հրաժեշտ զենքին բառերի համար Հեմինգուեյին նաեւ Խաղաղության Նոբել տալ՝ հետմահու, քանի դեռ մենք ողջ ենք ու մեր դպրոցները զինված չեն մտնում եւ մեր երկրներում ժողովրդավարություն չեն հաստատում:**

Հ. ԱՖ.

# Ադրբեջանցիները ներխուժեցին Եվրոխորհրդարան եւ գլխիկոր հեռացան

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Բրյուսել

Դեռեւս երեսուն տարի առաջ խորհրդային իշխանության փլուզումն անիրական ու անհավանական երեւակայության բուռն դրսեւորում էր որակվում: Երեսուն տարի առաջ անհավանական կհամարվեր նաեւ միջազգայնորեն Հայոց ցեղասպանության ճանաչման, ադրբեջանական վանդալիզմից Արցախի փրկության ու հայկական անկախ պետականության վերականգնման փաստը: Սակայն, պատմությունն այլ անակնկալ մատուցեց: Անհավանականն այսօր արդեն իրական է: Երեսուն տարի, եւ այսօր Եվրոմիության բարձրադիր հարթակներում հայկական կազմակերպությունների աջակցությամբ աշխարհին է մատուցվում Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջը, Արցախի մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Եվրոպայի մայրաքաղաք Բրյուսելում, Թուֆիկյան հիմնադրամի եւ Եվրոպայի Հայ դատի գրասենյակի աջակցությամբ փետրվարի 27-ին, եվրոպատգամավորների մասնակցությամբ, Եվրոխորհրդարանում կազմակերպվել էին Լեռնային Ղարաբաղի ազատագրման 30-ամյա տարեդարձին նվիրված քննարկումներ:

Համառոտ անդրադառնալով` եվրոպատգամավոր **Միշել Ռիվասին** խոսեց Սումգայիթի եւ Բաքվի հայկական ջարդերից, նշելով, որ Արցախի խնդիրը մշտապես լինելու է միջազգային հանրության ուշադրության կիզակետում եւ որ Մինսկի խումբը պետք է ակտիվացնի խաղաղ ճանապարհով խնդրի լուծման ջանքերը: Իսկ Շվեդիայի պատգամավոր **Լարս Ադակսոնն** համակարծիք էր, որ եվրոպատգամավորները տեղերում նստած, միայն լսելով չեն կարող իրական պատկերացում կազմել Արցախի վերաբերյալ, այլ պետք է գործնական քայլեր անեն, հաճախակի այցելեն Ղարաբաղ, ծանոթանան հուզող խնդիրներին, հանդիպեն եւ խոսեն տեղի ժողովրդի հետ:

Ի դեպ, նախորդ շաբաթ Եվրոպական խորհրդարանի տասնվեց պատգամավորներ, Դանիայից պատգամավոր **Անդրես Պրիմալ Վիթսենի** նախաձեռնությամբ գրավոր հարցով դիմել էին Եվրոպական հանձնաժողովին եւ ԵՄ արտաքին քաղաքականության անվտանգության հարցերով գլխավոր հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինիին` բացատրություն պահանջելով, թե ինչու ԵՄ Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հատուկ ներկայացուցիչներն ու ԵՄ այլ պաշտոնյաներ երբեք չեն այցելում Արցախ: Պատգամավորները նշել էին նաեւ, որ Արցախի ժողովուրդը քաղաքական մեկուսացման է ենթարկված, եւ Ադրբեջանն օգտագործում է բոլոր հնարավոր միջոցները` խոչընդոտելու միջազգային կազմակերպությունների մուտքը Արցախ:

Կարեւորելով ազգերի ինքնորոշման սկզբունքը, ՄԱԿ-ի անկախ փորձագետ դոկտոր **Ալֆրեդ Դը Զայասն** իր գնահատականը տվեց միջազգային օրենքներով ինքնորոշման իրավունքի, պետական ինստիտուտների դերի, հանրաքվեի կարեւորության շուրջ: «Վերջին տարիներին քսանից ավելի նոր պետություններ են կազմավորվել, եւ ազգային ինքնորոշման սկզբունքը որոշիչ դեր ունի ժողովրդական պետության կայացման համար: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ունի ինքնորոշման իրավունք, եւ միջազգային հանրությունը պետք է կարեւորի այս սկզբունքը», իր հերթին համոզմունք հայտնեց եվրոբանախոս, միջազգային հարաբերությունների իրավագիտության պրոֆեսոր **Պոլ Վիլյամսը**:

Իր հերթին, Ռուսաստանից բանախոս, միջազգային իրավունքի մասնագետ **Սերգեյ Մարկեդոնովն** հավաստեց, որ ի տարբերություն այլ պետությունների, Լեռնային Ղարաբաղում խաղաղապահ ուժեր տեղակայված չեն, եւ դա է պատճառը, որ մշտապես պատերազմական վտանգն առկա է այնտեղ:

ԼՂՀ արտգործնախարարի տեղակալ **Արմինե Ալեքսանյանը** կոչ արեց, որ Լեռնային Ղարաբաղը պետք է հանդիսանա բանակցող կողմ եւ հիմնախնդիրը միայն խաղաղ կարգավորմամբ պետք է լուծում ստանա :



Ի դեպ, այսօրինակ լսումներ եվրոխորհրդարանում պարբերաբար կայացել են, բայց առաջին անգամ քննարկումները տապալելու փորձ արվեց Ադրբեջանից եկած ուսանողների կողմից: Նրանք նիստը խանգարելու միտումով «Խոջալու-Գենոցիդ» պաստառներով դահլիճ ներխուժեցին, սակայն րոպեներ անց Հայ դատի գրասենյակի աշխատակիցների միջամտությամբ ցուցարարների բողոքի ակցիան կասեցվեց եւ ցուցարարներին հարցեր տալու հնարավորություն տրվեց: Եվրոպական բուհերում ուսանող ադրբեջանցիներն իրական պատմությանը ծանոթ չէին այնքան, որ երբ տեղեկացան Խոջալուում կատարվածի իրական մանրամասները, լռեցին եւ անգամ երկրորդ հարց տալու հնարավորությունը չօգտագործեցին: Միայն գլխիկոր դուրս եկան սրահից:

Արցախի Հանրապետության հիմնադրման 30-ամյակի կապակցությամբ Բրյուսելի Հայ Տանը Ցվետանա Պասկալեւայի մասնակցությամբ ցուցադրվեց Ղարաբաղին նվիրված իր ֆիլմը:

# Թուրքիան, Բեքչյանին մերժելով, ձեռնոց է նետում նաեւ Գերմանիային

➩1 Բայց, ինչպես խոստովանել է գրող Քեմալ Յալչինին, Բոսֆորի ափին գտնվող իր եզերքի հանդեպ հայրենաբաղձություն միշտ է ունեցել, գրում է «Ցայթ»- ի մեկնաբանը, այնուհետ նկարագրելով Պոլսի հայ համայնքի կյանքում դրամատիկ իրադարձությունները: 2007- ին հրապարակավ սպանվեց լրագրող Հրանտ Դինքը, մեկ տարի անց 52 ամյա պատրիարք Մութաֆյանը անկողին ընկավ` անբուժելի դեմենց հիվանդության գերին մնալով մինչ օրս: Գերմանական պարբերականը մանրամասն նկարագրում է 2 տարի առանց առաջնորդի մնացած հայ համայնքի, այնուհետ 2010- ին եկեղեցական խորհրդի որոշմամբ Արամ Աթեշյանի` որպես փոխանորդ ընտրության պատմությունը, եւ նշում, որ Աթեշյանի ընտրությունը հաստատել էր նաեւ թուրքական կառավարությունը: Պառակտված հայ համայնքի` Աթեշյանին համակարծիք թեւը կողմ է իշխանությունների հետ լավ հարաբերություններ պահպանելուն եւ դեմ` պաշտոնյաների հետ որեւէ առճակատման, իսկ համայնքի մյուս թեւը, որ Դինքի խմբագրած «Ակօս»-ի խումբն է ներկայացնում, հակառակը` պահանջում է համայնքի ավելի մեծ ինքնավարություն, ինչպես նաեւ` պետական «խնամատարության» դադարեցում: Երկու թեւերի միջեւ առճակատումը 2016- ին հասավ իր բարձրակետին, երբ Բունդեսթագը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, մեկնաբանում է «Ցայթ»-ի հեղինակը: Աթեշյանն այդժամ հայ համայնքի անունից նախագահ Էրդողանին բանաձեւը դատապարտող նամակ հղեց` որակելով այն հակաթուրքական, ինչն անշուշտ արժանացավ «Ակօս»- ի սուր քննադատությանը, որ Աթեշյանին որակեց` «նախագահական պալատի պատրիարքական փոխանորդ» տիտղոսով: «Ցայթն» այնուհետ մանրամասն նկարագրում է տեղապահի ընտրության, թուրքական իշխանությունների կողմից Բեքչյանին չճանաչելու, Աթեշյանին ընդառաջելու այն պատմությունը, որին ծանոթ է հայ ընթերցողը: «Պետության միջամտությունն այնքան էլ անակնկալ չէր», գրում է հեղինակը` ամիսներ ի վեր միջնորդի բերանով պաշտոնատարները փոխանցել էին, որ Բեքչյանին չեն ընդունելու` հիշատակելով ցեղասպանության մասին նրա հրապարակային արտահայտությունները: 40 տարի Եվրոպայում պաշտոնավարելով Բեքչյանը, բնականաբար, ցեղասպանության ոգեկոչման բազմաթիվ միջոցառումների է մասնակցել, արտահայտվել: Դինքի մահվանից հետո, թուրք մտավորականների` ցեղասպանության ճանաչման ստորագրահավաքին ի հակակշիռ, ազգայնականների թիվն աճ գրանցեց: Asim-Der անվանյալ «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի միությունը», որի նստավայրն Իգդիրում է, ամիսներ ի վեր պայքարեց Բեքչյանի դեմ` նրան մեղադրելով թուրքական շահերի դեմ Գերմանիայի հետ համագործակցության համար: Ներքին գործերի նախարարությունը պետք է միջամտի, վճռական միջոցներ ձեռնարկի Բեքչյանի պատրիարք ընտրվելու դեմ, պահանջել էր Միության նախագահ **Գյոքսել Գյուլբեյը**, ինչն արդեն իրողություն է:



Եկեղեցական խորհրդի մերժումից հետո Բեքչյանն անմիջապես Գերմանիա վերադարձավ, ըստ պատրիարքարանի, թոշակի անցնելու մտադրությամբ: Նա իր դառնությունը պոլսահայությանն ուղղված նամակի մեջ պարպեց, որում մասնավորապես ցավ էր հայտնել, թե « պոլսահայերը վերջին տասնամյակների ընթացքում կորցրել են պատմության հանդեպ իրենց գիտակցությունը եւ պայքարող ոգին»:

Նոր պատրիարքն, ամենայն հավանականությամբ միայն այն ժամանակ կլինի, երբ թուրքական կառավարությունն ի՛ր թեկնածուի ճանապարհը հարթել կարողանա, ցավոք, հայ համայնքի մի մասը պետության տեսակետին է ծառայում, «Ակօս»- ի մեկնաբանությունն է ընդգծում «Ցայթը»:

# Քրիստին Միրզայանը «Քրիստոնյաները» պիեսում

**«Broadway World» պարբերականը Հյուսիսային Կարոլինա նահանգի Չեյփլ Հիլ քաղաքից հաղորդում է, որ «Play Makers Reportory Company» խաղացանկային թատերական ընկերությունը մինչեւ մարտի 10-ը ֆրանսիացի դրամատուրգ եւ թատերական գործիչ Մոլիերի «Տարտյուֆ» պիեսին զուգահեռ ռոտացիոն կարգով ներկայացնելու է նաեւ 2017-ին «Թոնի» մրցանակի թեկնածու առաջադրված դրամատուրգ Լուկաս Հնաթի «Քրիստոնյաները» պիեսը` «Triad Stage-ի» հիմնադիր` Պրեստոն Լեյնի բեմականացմամբ: Պիեսը քննադատական, բայց միաժամանակ կարեկցական մոտեցմամբ քննարկում է հավատի եւ հետեւորդի թեման ներկա ժամանակաշրջանում, շեշտը դնելով մասնավորապես այն խնդրի վրա, թե ինչպես կարող է մեր հավատը փոխվել կախված այն հանգամանքից, թե ում հետեւից ենք գնում: «Ես ընտրեցի այս պիեսը, որովհետեւ Հնաթը հինգ տարբեր հավատացյալ մարդկանց է ներկայացնում, որոնք ունեն իրարից տարբեր, բայց նույնքան համոզիչ դիրքորոշումներ հավատի վերաբերյալ», խոստովանում է Լեյնը:**

**«Քրիստոնյաները» (The Christians) պիեսում զբաղված են Բրոդվեյի «Ապակե գազանանոցը» պիեսի դերասան Ջո Քոլինզը (եկեղեցու հմայիչ առաջնորդ` պաստոր Պոլի դերում), Դիքենսի «Մեծ սպասումներ» պիեսի դերասան Նեսունա Սեսեյը (պաստորի կինը) եւ Քրիստին Միրզայանը` ծխական համայնքի անդամի դերում: Նախքան այդ հայազգի դերասանուհին հանդես է եկել «Տորթը» եւ «Ծանր փորձությունը» պիեսներում:**

Հ.Ծ.

# Կարեւոր հոդվածներով՝ արժեքավոր գիրք

## *Հակոբ Չաքրյանի 12 տարվա բացահայտումները*

***Չնայած Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական ժխտողականության դիրքերը հեշտիցս թուլանում են՝ կապված Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի հետ, բայց դրանից Թուրքիայի պետական ագրեսիվությունը Հայկական հարցի ուղղությամբ ամենեւին էլ չի նահանջում, ճիշտ հակառակը: Այս համատեքստում անչափ կարեւոր է ոչ միայն փաստեղայկ լինել Ցեղասպանության ընթացքին, եւ կամ հաճախ ինքնանպատակ քննադատել թուրքական պետությունն ու նրա այսօրվա ղեկավարությանը, այլեւ փորձել ներսից հասկանալ եւ բացատրել Թուրքիան՝ նրա ցեղասպան անցյալն ու ժխտող այսօրը:***



**Հակոբ Չաքրյանի՝ երկհատորյա ժողովածուի հոդվածները, որոնք քաղված են նրա «Ազգ» թերթում 2001-2013թթ. գործունեությունից, հենց այդ փորձն են:**

Ժողովածուն, որը կոչվում է **Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության թուրքական ժխտողականությունը, կեղծարարությունն ու հայասյացության դրսեւորումները,** ոչ միայն ցույց է տալիս թուրքական պետության էությունը, ոչ միայն ճանաչելի է դարձնում Հայկական հարցի շուրջ այսօրվա Թուրքիայում ժխտողականության արմատները, այլեւ (ինչը հատկապես կարեւոր է), լի է բացահայտումներով: Չաքրյանը առանձնացրել է որոշ բաժիններ. **Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը. Ճանաչմանը հակազդելու թուրքական եւ ոչ թուրքական դրսեւորումները, Մուստաֆա Քեմալ Աթաթուրքն ու Հայոց ցեղասպանությունը, Արխիվներ, հայապատկան կալվածքներ եւ գրանցամատյաններ, Ցեղասպանության թուրքական կեղծարարությունն ու Թուրքիայի խրախուսումը կեղծարարության հարցում, Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականությունն ու ժխտողականության ոչ թուրքական դրսեւորումները, Հայասյացության դրսեւորումները Թուրքիայում եւ նրա սահմաններից դուրս,** եւ վերջապես **Գրախոսություններ**, որտեղ Չաքրյանն անդրադարձել է Հայկական հարցի շուրջ այլ մտավորականների (ոչ միայն հայ, մեծ մասամբ՝ հենց թուրք) նոր աշխատություններին:

Պետք է նկատել, որ հատկապես **Մուստաֆա Քեմալ Աթաթուրքն ու Հայոց ցեղասպանությունը** բաժնում զետեղված հոդվածները՝ բացահայտումների իրենց ծավալով աննախադեպ են: Աթաթուրքի եւ Ցեղասպանության կապի մասին մեր պատմագրությունը կարելի է ասել գրեթե ոչինչ չունի, մինչդեռ այս բաժնում Չաքրյանի հոդվածներից տեղեկանում ենք, որ Քեմալ Աթաթուրքը ոչ թե փրկել է հայ կանանց ու երեխաներին, այլ հանդիմանել է փրկողներին, օրինակ՝ տեղահանված հայերի տեսուչ նշանակված Հասան Ամջային՝ ասելով. *Բանակի թիկունքում մի՞թե վտանգավոր չեք համարում այսքան մեծ թվով հայերի կուտակումը:* Նույն բաժնի մեկ այլ հոդվածից հասկանում ենք, որ քանի դեռ Թուրքիայում չի վերացել Աթաթուրքի տաբուն, այդ երկիրը կառչած է մնալու ժխտողականությունից*:* **Մուստաֆա Քեմալ Աթաթուրքն ու Հայոց ցեղասպանությունը** բաժինը մեզ համար պարզում է, որ ժամանակակից Թուրքիայի հայր համարվող Աթաթուրքն այսօրվա Թուրքիան ստեղծել է հայ ժողովրդի դահիճներով շրջապատված, եւ ուրեմն կարելի է ապացուցված համարել արդի Թուրքիայի իրավահաջորդը լինելը՝ Օսմանյան կայսրությանը:

Այս ապացույցի հիման վրա Չաքրյանը մանրակրկիտ ներկայացնում է այսօրվա թուրքական պետության կեղծարարությունն ու ժխտողականությունը: Հոդվածներից մեկում, օրինակ, Չաքրյանը մեջբերում է «**Զաման**»-ին, որը հիմնվելով կառավարական աղբյուրների վրա գրել էր, թե *առաջին աշխարհամարտի ժամանակ հայերը 518. 105 թուրք են սպանել*: Մեկ այլ հոդվածից տեղեկանում ենք, որ կեղծարարության մեջ Թուրքիան՝ բացի պետական կառույցներից ընդգրկում է նաեւ երկրի համալսարաններին: Պարզ է, թե ինչ հաշվարկով եւ հասկանալի է, թե ինչու է այս բացահայտումը մեզ համար կարեւոր: Չաքրյանը տեղեկացնում է նաեւ, որ կեղծիքը ճշմարտություն դարձնելու նպատակով՝ միայն 2010-ին ու միայն ԱՄՆ-ում Թուրքիան լոբբիստական աշխատանքներում ծախսել է 3,3 միլիոն դոլար, իսկ Նյու Յորքում կազմակերպվել է *հայկական ստերին վերջ տալու հանրահավաք:*




Շատ ուշագրավ են նաեւ Չաքրյանի հոդվածները թուրքական արխիվների եւ հայկական կալվածքների հետ կապված: Իմանում ենք, որ թուրքական **Սաբանջի** համալսարանի պրոֆեսոր **Հալիլ Բերքթայի** հավաստիացմամբ՝ օսմանյան արխիվային «վտանգավոր» փաստաթղթերը ոչնչացված են, Չաքրյանը հայտնում է նաեւ, որ **Ինջիռլիք** ռազմաբազան տեղակայված է հայապատկան կալվածքի տարածքում, որ թուրքերը բնաջնջել են **Նարեկավանքի՝** ավերակներն անգամ, որ շվեյցարական բանկերում առկա էր 800 հազար օսմանյան ոսկեդրամ եւ ամենայն հավանականությամբ այն հայկական սեփականություն է եղել...

Չաքրյանի աշխատության կարեւոր արժանիքներից մեկն էլ այն է, որ մանրամասն անդրադարձ կա նաեւ ասորիների, պոնտացի հույների ցեղասպանություններին, ինչը ապացուցում է, որ երկհատորյակը ոչ թե ազգային ցավի, այլ համամարդկային խնդրի մասին գործ է:

Կոնկրետ Հայոց ցեղասպանության վերաբերյալ հատկանշական են նաեւ Չաքրյանի այն հոդվածները, որտեղ նա ներկայացնում է Ցեղասպանությունը ճանաչած ու այդ մասին բարձրաձայնելու համարձակություն դրսեւորող թուրք մտավորականներին, քուրդ գործիչներին ու հեղինակներին, այլ կերպ՝ **խոստովանության բնույթ կրող հրապարակումներ**, կամ դրանց թարգմանություններ: Չաքրյանը առանձնացրել է հատկապես **Ռագըփ Զարաքոլուին**, որն, ի դեպ, մի քանի անգամ Հայաստան գալով, հյուրընկալվել է նաեւ մեր թերթում՝ Չաքրյանին, եւ ես ականատեսն եմ եղել նրանց ջերմ հանդիպումներին, **Իսմայիլ Բեշիքչիին** եւ **Թաներ Աքչամին**: Իր **Գրախոսություններ** բաժնում Չաքրյանը ներկայացնում է ոչ միայն վերոհիշյալ մտավորականների, այլեւ, օրինակ, **Հասան Վասֆիի** վկայությունները, որոնք հիմնավորապես հաստատում են Ցեղասպանության փաստը...

Հակոբ Չաքրյանի գիրքը նախ եւ առաջ կարեւոր է եւ հետաքրքրական: Կարեւոր՝ քանի որ հակառակ հայաստանյան գիտական որոշ շրջանակների ենթադրություններին, թե իբր Հայոց ցեղասպանությունը բազմակողմանիորեն ուսումնասիրված է եւ պատմագրությունը բոլոր հարցերին սպառիչ պատասխան է տվել, առ այսօր մնում են բաց հարցեր, ընդ որում նաեւ այնպիսիք, որոնք նույնիսկ չեն արծարծվել: Այս երկհատորյակում տեսնում ենք նման հարցերից օրինակ Աթաթուրք-Ցեղասպանություն թեմայի արծարծումը: Եւ հետաքրքրական՝ քանի որ չնայած գիրքը, ինչպես նշված է շապիկին՝ նախատեսված է *Հայոց ցեղասպանության խնդիրներով հետաքրքրվող պատմաբանների համար*, բայց վստահ եմ, որ յուրաքանչյուր ընթերցող այս աշխատության մեջ կգտնի իրեն հետաքրքրող ինչ-որ բան:

Չաքրյանն ասում է, որ իր թերթային հոդվածներից կազմված այս ժողովածուն հազիվ թե սպառիչ պատասխան տա Ցեղասպանության վերաբերյալ բոլոր հարցերին եւ այն միայն հավակնում է գրավել այս խնդրով զբաղվող պատմաբանների ուշադրությունը, բայց, որպես երկհատորյակն ընթերցած՝ կարող եմ պնդել, որ անձամբ իմ մի քանի հարցերի պատասխանը ես գտել եմ Հակոբ Չաքրյանի աշխատության մեջ: Միայն այնտեղ:

Երկհատորյակը լույս է տեսել Հայ եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ, գերաշնորհ **Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի** նախաձեռնությամբ եւ քաջալերանքով՝ 2017-ին Երեւանում եւ վաճառվում է գրախանութներում:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ուոթերթաունի Սբ. Հակոբ եկեղեցին ընդարձակում է իր տարածքը



***Եկեղեցու ծխականները խաղխորհրդի անդամների հետ գրադարանի շենքի առջեւ:***

**Վերջերս կնքված պայմանագրով Ուոթերթաունի Սբ. Հակոբ հայկական եկեղեցին ձեռք է բերել տաճարի կողքին գտնվող նախկին «Իսթ Բրանչ գրադարանի» շենքը, որն արդեն ավելի քան մեկ տասնամյակ փակ է եղել:**

**Ուոթերթաունի քաղաքապետարանը 2016-ին որոշել է այն վաճառել, իսկ եկեղեցու ծխական խորհուրդը նույն թվի հոկտեմբերի 30-ին միաձայն տարածքի գնման որոշում է ընդունել առաջարկելով 1,2 միլիոն դոլար, որն էլ ընդունվել է քաղաքային խորհրդի կողմից:**

**Եկեղեցու ծխական խորհուրդը շնորհակալություն է հայտնել բոլոր նրանց, ովքեր իրենց առատաձեռն նվիրատվություններով հնարավոր են դարձրել իրականացնել տարածքի ձեռքբերումը, ինչպես նաեւ Ջիմ ՄկԴերմոտի ղեկավարությամբ աշխատող փաստաբանների խմբին, որը վերահսկել է ամբողջ գործընթացը:**

**Նախատեսվում է գրադարանի հին շենքը քանդել եւ փոխարենը կառուցել մշակույթի եւ երիտասարդության մի նոր կենտրոն:**

**«Սա շրջադարձային փուլ է մեզ համար եւ ամեն ջանք գործադրելու ենք, որ համապատասխան գումարը գոյանա նոր կենտրոնի աշխատանքները սկսելու համար», նշել են ծխական խորհրդի անդամները:**

Հ.Ծ.

# Արեւմտահայ «զարթոնքի» կանանց գործունեության մասին՝ Բելմոնտում

«Հայ կանանց միջազգային ասոցիացիայի» (AIWA) եւ «Հայագիտական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի (NAASR) համատեղ հովանավորությամբ մշակվել է «Կանանց պատմության ամիս» ծրագիրը, որի շրջանակներում մարտի 4-ին NAASR-ի կենտրոնում (Բելմոնտ, Մասաչուսեթս) կայանալու է դոկտ. **Հասմիկ Խալափյանի** դասախոսությունը 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին հայկական զարթոնքի տարիներին հայ կանանց ծավալած ակտիվ գործունեության մասին: «Ազգային սահմանադրություն» (1863) կոչված փաստաթուղթը թուրքահայերին տալիս էր իրենց ներքին գործերը (կրթական, եկեղեցական, հասարակական, եւ այլն) տնօրինելու առավել լայն հնարավորություններ: Զարթոնքի այդ ժամանակաշրջանում հայ կանայք, մասնավորապես ակնառու գրողներ, չսահմանափակվեցին



միայն գրական նպատակներ հետապնդելով, այլեւ ծավալեցին հասարակական լայն գործունեություն՝ բարելավելու ընդհանրապես մարդկանց կյանքը: Խալափյանը բացահայտելու է արդիականացման ալիքի ազդեցությունը կանանց գործունեության ակտիվացման վրա:

Դոկտ. Հասմիկ Խալափյանը, որ Հայաստանի Ամերիկյան համալսարանում է դասավանդում, ավարտել է Երեւանի Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը (այժմ լեզվաբանական համալսարան): Դոկտորի գիտական աստիճան է ստացել (պատմության գծով) Բուդապեշտի կենտրոնական Եվրոպայի համալսարանից: Նախկինում դասավանդել է նաեւ Երեւանի պետհամալսարանում եւ Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանում: Ունի բազմաթիվ տպագրված հոդվածներ եւ աշխատություններ հայոց պատմության ամենատարբեր ոլորտների վերաբերյալ:

Հ.Ծ.

AZG NEW SHABAT.QXD 01/03/2018 21:50 Page 8



# Հայաստանի Առաջին Հանրապետությունը եւ ռամկավարները

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
պգդ.

Ռուսաստանում 1917 թ. Փետրվարյան «մեծ ու անարյուն» հեղափոխության հաղթանակից հետո իշխանության հին կառույցների վերացումը եւ նորերի ստեղծումն առաջ բերեցին խառնաշփոթ ու անկայուն վիճակ: Հեղափոխության մեղրամիսը կարճ տեւեց, եւ Ժամանակավոր կառավարության նշանակած Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (ՕԶաԿոմ, նախագահ՝ Խառլամով) շատ արագ հեղինակազրկվեց: Իսկ երբ հստակվեց Ժամանակավոր կառավարության արտաքին քաղաքական ուղղվածությունը, ստեղծված խառը կացությունից ելք գտնելու նպատակով հայ ազգային կուսակցությունները հրավիրեցին Արեւելահայերի 1-ին համագումարը, որը տեղի ունեցավ 1917թ. սեպտեմբերի 28-հոկտեմբերի 3-ը Թիֆլիսում:

Համագումարի պատվիրակների կեսից ավելին ՀՅԴաշնակցություն կուսակցության անդամներ էին: Համագումարը քննության առավ արտաքին ու ներքին բնույթի (ինքնապաշտպանության, գաղթականության, պարենավորման եւ այլն) մի շարք կարեւոր խնդիրներ: Վերջում բազմակուսակցական սկզբունքով ընտրվեց Հայոց (կենտրոնական) ազգային խորհուրդ (այսուհետեւ՝ ՀԱԽ): Խորհրդի նախագահ ընտրվեց հասարակական-քաղաքական գործիչ, գրող Ավետիս Ահարոնյանը: Նշենք, որ պատմական դեպքերի բերումով համախորհրդակցությունը, ստեղծելով համազգային միասնական պատասխանատու մարմին հանձին Հայոց ազգային խորհրդի, իրականացրեց իր հիմնական եւ գլխավոր նպատակը: Ավելացնենք, որ Հայոց ազգային խորհուրդը փաստորեն դարձավ հայ ժողովրդի գերագույն իշխանությունը մինչեւ Հայաստանի անկախության հռչակումը:

Այստեղ էին կենտրոնացել արեւելահայ մտավորականության սերուցքը եւ տարածաշրջանի հայ քաղաքական եւ գործարար ասպարեզի գործիչների հիմնական մասը: ՀԱԽ-ը կազմված էր 15 անդամից՝ 6 դաշնակցական (Ավետիս Ահարոնյան, Աբրահամ Գյուլխանդանյան, Ռուբեն Տեր-Մինասյան, Խաչատուր Կարճիկյան, Նիկոլ Աղբալյան, Կորյուն Ղազազյան), 2 սոցիալիստ-հեղափոխական (էսէռ Հովհաննես Տեր-Օհանյան, Լեւոն Աթաբեկյան), 1 հնչակյան (Ղազար Տեր-Ղազարյան), 1 մենշեւիկ (Արամայիս Երզնկյան), 3 անկուսակցական (Տիգրան Բեկզադյան, Ստեփան Մամիկոնյան, Պետրոս Զաքարյան) եւ Հայ ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) 2 ներկայացուցիչ (Սամսոն Հարությունյան, Հարություն Այվազյան) (ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 1-3):

Բացի Թիֆլիսում ստեղծված Հայոց կենտրոնական ազգային խորհրդից, տեղերում նույնպես ստեղծվեցին ազգային խորհուրդներ՝ որպես մասնաճյուղեր եւ տեղական իշխանություն: Այսպես, հայ ազգային խորհուրդներ ստեղծվեցին Բաքվում, Երեւանում, Ղարաբաղում, Ախալքալաքում եւ այլուր:

ՀԱԽ-ի հրապարակած առաջին կոչում նշվում էր. «Ազգային խորհուրդը ստանձնում է ազգային բոլոր գործերի գերագույն ղեկավարությունը որպես գործադիր մարմին»: Հայոց ազգային խորհուրդն ուներ իր բաժինները կամ կոմիսարիատները՝ զինվորական, գաղթականության, բժշկական, դպրոցական, պարենավորման եւ այլն: ՀԱԽ-ի զինվորական միությունն ստեղծեց Հայկական ազգային կորպուս՝ գեներալ Թովմաս Նազարբեկովի (Նազարբեկյան) գլխավորությամբ, որն ստանձնեց Հայաստանի պաշտպանությունը 1918 թ-ի ծանր ժամանակաշրջանում:

1917 թ. սեպտեմբերի 26-ին Արտիստական ընկերության դահլիճում տեղի է ունենում հետփետրվարյան շրջանում կարեւոր դերակատարություն ստանձնած ՀԺԿ առաջին համագումարը: Նախագահներ ընտրվեցին պետական դումայի (Ռուսաստանի պառլամենտ) երեք հայ պատգամավորները՝ Մ. Պապաջանյանը, բժ. Հ. Այվազյանը, Գ. Տեր-Պետրոսյանը: Ներկա էին ՀԺԿ վարչության եւ խորհրդի 60 ներկայացուցիչներ, ընդունվեց կուսակցության ծրագիրը : Համագումարից առաջ «Մշակը» ՀԺԿ-ի մասին հոդված հրապարակեց, որտեղ ասվում էր, որ «ծրագրի հեղինակները քողարկված ձեւով պահանջում են Ռուսահայաստանի քաղաքական ավտոնոմիա, որը ՀԺԿ-ն համարում է քաղաքական մոմենտի մոտակա, իրագործելի պահանջ» : Ծրագրում ՀԺԿ-ն պաշտպանում էր կապիտալի, մասնավոր սեփականության եւ շուկայական հարաբերությունների գերակայությունը : Դեմ էր արտահայտվում դասակարգային պայքարին եւ չէր հանդուրժում, որ «մի ամբողջ պատմական ազգ զոհաբերվի այդ լոզունգներին» : Հայկական հարցում համերաշխվելով ՀՍՌԿ-ի ծովից ծով Հայաստանի պահանջին՝ձգտում էր դրա կենսագործմանը՝ մշտապես որպես բացառիկ գործոն՝ հայերին վերապահելով պատերազմից ամենից շատ տուժած ժողովուրդներից մեկը, թերեւս՝ ամենատուժածը:

1918 թ. մայիսի 26-ին մի քանի ժամ տեւած Հայոց Ազգային Խորհրդի նիստում, որի օրակարգում հիմնականը՝ «հայկական գաւառների ապագայի» հարցն էր, առաջարկված վեց կետերից, այդ թվում Հայաստանի անկախության հռչակում, ոչ մեկը բավարար ձայն չի հավաքում եւ չի ընդունվում, բացի մեկից: Դրա **հեղինակը ՀԺԿ անդամ Լեւոն Թումանյանն էր եւ այն տվյալ պահի համար թերեւս լավագույն լուծում էր.** «Նկատի ունենալով որ Վրաստանի եւ Ատրպէյճանի անկախութեան հրապարակումով լուծարուած է Անդրկովկասեան անկախութիւնը, Հայոց Ազգային խորհուրդը ժամանակաւորապէս իր վրայ վերցնում է կառավարչական գործառոյթներ հայկական գաւառների նկատմամբ»: Առաջարկն ստանում է 7 ձայն եւ համարվում ընդունված : Իսկ անկախության մասին ՀՀ կառավարությունը հայտարարեց ավելի ուշ՝ 1918 թ. հունիսի 13-ին (ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 35, թ. 146):



1918 թ. հունիսի 7-ին Հայոց Ազգային խորհուրդը (13 կողմ եւ 2 դեմ) կառավարության նախագահ ընտրեց Հովհաննես Քաջազնունուն: Դեմ քվեարկեցին եւ կառավարության կազմի մեջ մտնելուց հրաժարվեցին ՀԺԿ երկու ներկայացուցիչները (Մ. Պապաջանյան, Ս. Հարությունյան) : Նրանք ցանկանում էին, որ իրենց կուսակից Մ. Պապաջանյանին տրվի վարչապետի պաշտոնը եւ դա պատճառաբանում էին հետեւյալ փաստարկներով.

ա) առաջացել էին նոր սոցիալ-տնտեսական, քաղաքական եւ իրավական պայմաններ,

բ) այդ պայմաններում ավելի շատ կիրթ, համալսարանավարտ, տնտեսագիտական եւ իրավաբանական գիտելիքներ ունեցող մարդկանց անհրաժեշտություն էր զգացվում, իսկ այդպիսիք ամենաշատը կային ՀԺԿ-ում,

գ) ճիշտ կլիներ, որ ֆիդայական պայքարը ղեկավարած ՀՅԴ-ն, գոնե առժամանակ հեռանա քաղաքական ասպարեզից, որպեսզի հնարավոր լինի թուրքերի հետ լեզու գտնել,

դ) պետություն կերտելու համար նոր ուժ է պետք (նկատի ունեին իրենց) :

Այսինքն՝ **նրանք գտնում էին, որ նշված բոլոր պայմանները** եւ իբրեւ ավելի խելացի եւ չափավոր գործելակերպ ունեցող կուսակցություն, **բավարարում է միայն ՀԺԿ-ն,** հետեւապես իրենց էին վերապահում ՀՀ կառավարություն ստեղծելու իրավունքը: Նրանք նաեւ փորձում էին համոզել, թե իրենք իշխանատենչ չեն, որ կառավարություն կազմելու եւ ղեկավարելու նրանց պահանջն իբր թելադրվում է հայ ժողովրդի շահերով («Մշակ», 12 հունիսի 1918): Իմիջիայլոց նկատենք, որ չնայած ՀԺԿ-ի որդեգրած այս մերժողական կեցվածքին, այնուամենայնիվ ՀՀ առաջին կառավարության արդարադատության նախարար դարձավ ՀԺԿ համակիր Գ. Պետրոսյանը («Ժողովուրդ», 14 օգոստոսի 1918):

1918 թ. հուլիսի 17-ին Ազգային խորհուրդն ու ՀՀ կառավարությունը Թիֆլիսից տեղափոխվեցին Հայաստան, որի հետեւանքով **հայ քաղաքական կյանքի կենտրոնը դարձավ Երեւանը**: Այստեղ կազմվեց Հայաստանի խորհրդարանը, որի 46 պատգամավորներից 18-ը ՀԺԿ-ականներ էին (ՀԺԿ-ականները որպես աջ ուժ՝ խորհրդարանում նստում էին նախագահությունից աջ հատվածում): Ի դեպ՝ ՀԺԿ-ն երկու մանդատ էլ ուներ Վրաստանի խորհրդարանում («Հորիզոն», 15 օգոստոսի 1918):

Նորակազմ խորհրդարանն ընդունեց մի շարք կարեւոր որոշումներ, այդ թվում **ՀԺԿ անդամ Ստ. Մալխասյանի առաջարկով հայկական եռագույնը համարվեց ՀՀ պետական դրոշ:** Խորհրդարանի ընտրված երկու փոխնախագահներից մեկը ՀԺԿ անդամ Գրիգոր Խաչատրյանն էր:

Նորակազմ կառավարությունը ներկայացրեց հայտագիր, որի համաձայն իր գործունեության առաջնահերթ խնդիրներն էր համարում. ա) կասեցնել երկրի տնտեսության հետագա քայքայումը, բ) հաստատել կարգ ու կանոն ամեն ինչում, գ) իրականացնել դատաիրավական բարեփոխումներ, դ) բացել հաղորդակցության ուղիները, ե) վերականգնել կապի միջոցները, զ) հնարավորինս մեղմացնել սովն ու գաղթականների ծանր վիճակը, է) ստեղծել սեփական դրամական համակարգ, ը) վերակառուցել երկրի ռազմուժը, թ) կարգավորել հարաբերությունները հարեւան երկրների հետ եւ այլն («Հորիզոն», 15 օգոստոսի 1918 թ.): ՀԺԿ խմբակցությունը հիմնականում հավանություն տվեց կառավարության այդ նախագծին: Միեւնույն ժամանակ խորհրդարանում ստեղծվեց Պետական վերահսկիչ մարմին, որի ղեկավար 26 ձայնով ընտրվեց ՀԺԿ անդամ Մինաս Բերբերյանը («Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ Զ, էջ 74):

Նկատենք, որ ՀՀ խորհրդարանում գործել են ազգային երկու՝ ՀՅԴ եւ նրան ընդդիմադիր ՀԺԿ-ն եւ ոչ ազգային՝ Սոց.-Դեմ (մենշեւիկյան եւ բոլշեւիկյան թեւերով) եւ էսեռական կուսակցությունները: Նշենք, որ ազգայիններն իրենց ծրագրերում հենվում էին սեփական ժողովրդի վրա, կարեւորում էին ազգային ազատագրությունն ու պետական անկախությունը, իսկ ոչ ազգայինները, հենվելով Ռուսաստանի վրա, հայ ժողովրդի ազատագրության երաշխիքը տեսնում էին ի դեմս համառուսաստանյան հեղափոխական-դասակարգային պայքարի հաղթանակի: ՀՀ խորհրդարանում ամենաաջակողմյան կուսակցությունը ՀԺԿ-ն էր, որի նախագահը Մ. Պապաջանյանն էր, իսկ փոխնախագահը՝ Ս. Հարությունյանը : Ընդհանուր առմամբ, ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Հակոբյանը, չնայած իրենց ընդդիմադիր կեցվածքին, ՀԺԿ-ականների գործունեությունը խորհրդարանում հիմնականում պատասխանատու էր եւ կառուցողական (Հակոբյան Ա, նշվ. աշխ., էջ 63):

1918 թ. օգոստոսի 14-ից Երեւանում սկսեց լույս տեսնել ՀԺԿ Երեւանի կոմիտեի օրգան «Ժողովուրդ» լրագիրը: Արդեն 1918 թ. աշնանից ՀԺԿ տեղական կառույցներ հիմնվեցին Ապարանի, Փամբակի, Համամլուի, Լոռիի, Դիլիջանի, Քարվանսարայի, Ն. Բայազետի, Ծաղկաձորի, Եղվարդի, Աշտարակի եւ այլ շրջաններում :

ՀՅԴ-ի վարած հակառուսական քաղաքականության դեմ բուռն գործունեություն ծավալած Համբարձում Առաքելյանը 1918թ. մայիսին, երբ «հերթական մէկ ճառը կ՛արտասանէր, դաշնակցական գնդակէ զարնուելով սպաննուեցաւ» : Այդ սպանությունից հետո «Մշակ»-ի վերաբերմունքը որոշ չափով մեղմացավ ՀՅԴ-ի նկատմամբ: 1918 թ. սեպտեմբերի 1-ից Թիֆլիսում սկսեց լույս տեսնել ՀԺԿ ԿԿ-ի օրգան «Ժողովրդի ձայն» թերթը: Նկատենք, որ ՀՀ իշխանությունների նկատմամբ ՀԺԿ թիֆլիսյան եւ երեւանյան հատվածների վերաբերմունքը տարբեր էր: 1919 թ. հունիսին ՀԺԿ Կենտկոմը որոշեց պետական կյանքի վերաբերյալ իր բոլոր իրավունքներն ու լիազորությունները հանձնել Հայաստանի կոմիտեին: Այսինքն՝ ՀԺԿ ծանրության կենտրոնը եւս փոխադրվեց Երեւան:

1918 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ կուսակցության Բ համագումարը: Այն ընդունեց նոր ծրագիր եւ արձանագրեց՝ հայ ժողովուրդը պետք է ունենա միայն մեկ՝ հայկական կողմնորոշում: Նոր ծրագրում առաջ էր քաշվում «միացյալ եւ ամբողջական» Հայաստանի ստեղծման խնդիրը. «Դրա մէջ պէտք է մտնէին՝ Արեւելեան Հայաստանը, Արեւմտեան Հայաստանը իր վեց նահանգներով եւ Կիլիկիան» (Վարդիվառեան Յակոբ, նշվ. աշխ., էջ 332): Հայաստանը պետք է լիներ ժողովրդավարական, խորհրդարանական հանրապետություն, որի պետական լեզուն պետք է լիներ հայերենը: Հայաստանից դուրս ապրող հայության համար ՀԺԿ-ն պիտի ջանար հասնել նրան, որ բավարարվեին նրա ազգային եւ մշակութային պահանջները: Ժողովրդականներն ընդունում էին ազգային շահերի գերակայությունը դասակարգայինի նկատմամբ: Հանդես էին գալիս ազգային դիմագծի եւ նրա օրինական շահերի ու պատմաքաղաքական իրավունքների պաշտպանությամբ:

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Հրանուշ Սիդքի Բեյ՝ ամերիկյան բռնցքամարտիկների «մայրը»





1901 թվականի սեպտեմբերի 5-ին ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի Բուֆալո քաղաքում բացված համաամերիկյան ցուցահանդես-տոնավաճառում ԱՄՆ պետական օրհներգը նախագահ Վիլյամ Մաքինլիի խնդրանքով երգել է մի օտարահպատակ քսանամյա հայազգի երգչուհի:

Նույն ցուցահանդեսում ԱՄՆ նախագահի վրա արձակված մահացու կրակոցի ժամանակ Մաքինլիից ոչ հեռու գտնվել է դարձյալ այդ նույն երիտասարդ հայուհին:

Նա՝ **Հրանուշ Սիդքի Բեյը**, ԱՄՆ-ում հանդես եկած առաջին հայազգի երգչուհին էր, որը ելույթներ է ունեցել մինչեւ անգամ երկրի ամենապատվավոր՝ Նյու Յորքի Քարնեգի Հոլում, սակայն նրա անունը չի հիշվում ո՛չ ամերիկահայությանը, ո՛չ սփյուռքահայ երաժիշտներին նվիրված աշխատություններում:

Օրինական ազգանվամբ՝ Աղաջանյան, նա ծնվել է 1881-ին, Կոստանդնուպոլսում, հայ հոր եւ ֆրանսուհի մոր ընտանիքում: Մանկուց ստացել է երաժշտական կրթություն, օժտված եղել գեղեցիկ մեցցո-սոպրանոյով: Ուսանել է ծննդավայրի Ամերիկյան քոլեջում, որտեղ ծանոթացել եւ մտերմացել է թուրք դիվանագետ Սիդքի (Սըդքը) Բեյի հետ: Երկուսի ընտանիքներն էլ դեմ են եղել նրանց ամուսնությանը. 19-րդ դարի վերջի Օսմանյան կայսրությունում բացառվում էին ամուսնությունները մահմեդականների եւ քրիստոնյաների միջեւ: Շուտով Սիդքի բեյը նշանակվել է Վաշինգտոնում օսմանյան հյուպատոսարանի երկրորդ քարտուղար եւ Հրանուշի հետ տեղափոխվել է ԱՄՆ, որտեղ էլ նրանք ամուսնացել են ու ապրել մինչեւ իրենց կյանքի վերջը: 1898-ին ծնվել է նրանց միակ զավակը՝ Ռուստեմը, որը հետագայում դարձել է ոստիկանապետ:

ԱՄՆ-ի օսմանյան դիվանագիտական կորպուսում Հրանուշը եղել է միակ կինը, որը տիրապետել է անգլերենին: Իմացել է նաեւ հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, իտալերեն եւ իսպաներեն: Արտաքնապես աչքի չընկնող, սակայն արիստոկրատ ու դյուրահաղորդ Հրանուշն արագ մտերմացել է ամերիկյան քաղաքական գործիչների, ընդսմին՝ նախագահ Մաքինլիի եւ նրա տիկնոջ հետ՝ դառնալով սիրված դիվանագիտական «տանտիրուհի»: Նա պարել է Սպիտակ տանը եւ հաջող ելույթներ ունեցել որպես երգչուհի: Կարելի է ենթադրել, որ Հրանուշի ամուսինը բավականին առաջադեմ է եղել, որ չի խոչընդոտել կնոջ բեմական գործունեությանը: Քարնեգի Հոլի ելույթներից հետո Հրանուշն անգամ հրավիրվել է երգելու Մետրոպոլիտեն օպերայում, սակայն այդ հրավերը մերժել է:

1908-ին սուլթանական ռեժիմը տապալվել է, եւ իշխանության գլուխ եկած երիտթուրքերը Սիդքի Բեյին նշանակել են Նյու Յորքում օսմանյան գլխավոր հյուպատոս: Այդ պաշտոնում նա մնացել է վեց տարի: Վրա է հասել Առաջին աշխարհամարտը: Սիդքի ամուսինները հետեւում էին Օսմանյան կայսրությունում ծավալվող իրադարձություններին: Իր քրիստոնեությանն ամուր կառչած եւ իր հայությունը մշտապես շեշտող Հրանուշը որոշել է այլեւս չվերադառնալ ծննդավայր, որտեղ իր ժողովուրդը ցեղասպանության է ենթարկվել: Սիդքի բեյը հրաժարվել է իր պաշտոնից. ամուսիններն ընդունել են ամերիկյան քաղաքացիություն եւ իրենց ընկեր Էհսան Քարադաղի հետ սկսել են զբաղվել արեւելյան գորգերի առքուվաճառքով: 1923 թվականին Նյու Ջերսիի բլուրների վրա՝ Չեթհեմ Թաունշիփում, Բեյերը գնել են հողատարածք եւ սկսել զբաղվել այգեգործությամբ: Շուտով նրանց հարեւանը՝ բռնցքամարտիկ Ֆրենքի Ուելշը, խնդրել է իր բացակայության ժամանակ հետեւել իր մարզական հյուրատան աշխատանքներին: Հրանուշն անմիջապես համաձայնվել է եւ արագ ըմբռնել այդ գործի նրբությունները: Մեկ տարի անց նա իրենց ավտոտնակը վերածել է մարզադահլիճի, որն այնուհետեւ ընդլայնվելով՝ ստեղծել է մարզական ճամբար: Այստեղ մեծ մրցույթներից առաջ ժամանակավորապես ապրել եւ մարզվել են պրոֆեսիոնալ բռնցքամարտիկները: 1920-1930-ական թվականներին ԱՄՆ-ի սպորտային շրջանակներում հայտնի դարձած այդ ճամբարում մարզվել են տարբեր երկրների 90-ից ավելի նշանավոր մարզիկներ, որոնց մեջ՝ Ջին Թանին, Բաթլինգ Սիկին, Փոլ Բեռլենբախը, Միքի Ուոքերը, Պաոլինո Ուզդոմը, Պրիմո Կամերան, Ջեք Ջոնսոնը, Ջո Լուիսը, Բադի եւ Մաքս Բեյերները, Ֆրեդի Քոչրանը, Ջեք Դեմփսին, Թոմի Ֆարը, Մաքս Շմելինգը և այլք: Այս երիտասարդ տղամարդիկ, որոնք իրենց հացը վաստակում էին քիթումռութ ջարդելով եւ որոնցից շատերն ունեին վայրագ մականուններ, չէին քաշվում իրենց բնակավայրի միակ կնոջ՝ այդ կրթված անձնավորության, նախկին օպերային երգչուհու, սիրող կնոջ եւ մոր: Հրանուշը խիստ է եղել իր գործի մեջ, բայց մայրական հոգատարությամբ է վերաբերվել այդ կոշտուկոպիտ տղամարդկանց, որոնք նրան սիրով անվանել են Մադամ Բեյ, համարել են իրենց մայրը ու հնազանդվել են նրա հաստատած կարգուկանոնին: Նրանք չպետք է ալկոհոլ գործածեին, պիտի արթնանային ժամը վեցին, յոթին նախաճաշեին, հինգին ճաշեին՝ սնվելով Բեյերի տանը, որտեղ Հրանուշը պատրաստում էր տարբեր ժողովուրդների համեղ ուտեստներ, իսկ մնացած ժամերին զբաղվում էին մարզումներով: Մարզիկներին թույլատրված էր երբեմն գնալ Նյու Ջերսիի Սամիթ բնակավայրի թատրոնը, թուղթ խաղալ, ռադիո լսել եւ անգամ երգել՝ Մադամ Բեյի դաշնամուրի նվագակցությամբ: Արգելված էր հայհոյելը եւ «հյուրեր» (այսինքն՝ կանանց) ընդունելը: Ժամը տասին լույսերը մարում էին, բոլորը պարտավոր էին պառկել քնելու: «Հրաշալի կյանք է՝ ճանաչել այս ուժեղ տղաներին, հետեւել նրանց տրամադրությանը եւ փորձել առանց խանգարելու մայրություն անել նրանց»,- խոստովանել է Մադամ Բեյը: Նա սիրով մականուններ է տվել իր տղաներին, օրինակ Ջին Թանիին անվանել է «իմ հղկված զմրուխտս», իսկ Միքի Ուոքերին՝ «իմ առյուծասիրտ փոքրիկ Միքի»...

Մադամը երբեք չի գնացել դիտելու իր տղաների մենամարտերը, քանի որ չի դիմացել նրանց ծեծկռտուքների դաժան տեսարաններին: Լրագրողները, բռնցքամարտի մարզիչները, մարզական մենեջերները հաճախ էին այցելել «Մադամ Բեյի մարզական ճամբարը» (հայտնի որպես պարզապես «Բեյզ»)՝ հասկանալու, թե ինչպես է գաղթական մի արեւելքցի կին կարողանում առանց ցնցումների իրականացնել այդ ոչ կնոջական գործը...

Սիդքի բեյը մահացել է 1937-ին, Մադամ Բեյը՝ 1942-ին, Մորիսթաունում (Նյու Ջերսի), սրտի կաթվածից, ընդամենը վաթսուն տարեկանում, որից հետո վերոհիշյալ Էհսան Քարադաղն է մեկ տասնամյակ շարունակել մարզական ճամբարի գործը:

2016-ին ԱՄՆ-ում լույս տեսավ Ջին Պանտալոնեի «Մադամ Բեյզ. բռնցքամարտիկների լեգենդների տունը» գիրքը: Այն աշխույժ պատումի եւ բազմաթիվ լուսանկարների միջոցով վերհանում է մարզաշխարհի մենեջմենթի եւ առհասարակ գործարար կանանց մեջ ռահվիրա հանդիսացած Հրանուշ Աղաջանյան Սիդքի Բեյի կամ պարզապես Մադամ Բեյի հետաքրքրաշարժ կյանքն ու գործունեությունը...

# Հայկ Դեմոյանը քննարկում է ինքնության նորագույն գործոնները

**«Ռեալիզմի եւ առասպելաբանության միջեւ: Հայկական աշխարհի ինքնության նորագույն գործոններն ու հիշողության քաղաքականությունը»: Այս թեմայի շուրջ, ըստ ստացված հաղորդագրության, դոկտ. Հայկ Դեմոյանը մարտի 8-ին դասախոսություն է կարդալու Հայագիտական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային «NAASR» կենտրոնում, կազմակերպությամբ այդ կենտրոնի եւ Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի: Դեմոյանը ԱՄՆ-ում է գտնվում որպես Հարվարդ համալսարանի Ռուսաց եւ եվրասիական ուսումնասիրությունների Դեյվիս կենտրոնի 2017-18 տարեշրջանի Ֆուլբրայթ կրթաթոշակի արժանացած այցելու գիտաշխատողի:**

**Դասախոսության ընթացքում նա քննարկելու եւ վերլուծելու է հետխորհրդային Հայաստանի եւ սփյուռքահայության ինքնության եւ հիշողության գործոնները, հատուկ ուշադրության արժանացնելով պատմության եւ պատմական հին ու նոր խորհրդանշանների ու հերոսների վերարժեւորման ու թյուրըմբռնողականության հարցերը, հաշվի առնելով, որ հատկապես սփյուռքում տարակարծություններ կան այդ հարցերում:**

Հ. Ծ.

# Լուսավորվել են Շենիկ գյուղի հիմնական փողոցները

**Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) եւ գլխավոր գործընկեր ՎիվաՍել-ՄՏՍ-ը շարունակում են Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում արտաքին լուսավորության էներգախնայող համակարգերի տեղակայումը: Համատեղ իրականացվող «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում, այս անգամ լուսավորվել են Արմավիրի մարզի Շենիկ գյուղի հիմնական փողոցները՝ շուրջ 1850մ երկարությամբ տարածք: Տեղակայվել է 52 LED լուսարձակ:**

**Էներգախնայող համակարգի ներդրումը համայնքային զարգացման կարեւոր նախապայմաններից է: էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման ծրագիրը հնարավորություն է տալիս ոչ միայն թեթեւացնել համայնքի ֆինանսական բեռը, աշխուժացնել համայնքային կյանքը, այլեւ՝ նպաստել կայուն եւ մաքուր շրջակա միջավայրի պահպանմանը:**

**Ժամանակակից համակարգի գործարկմանը մասնակցել են ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, FPWC-ի հիմնադիր Ռուբեն Խաչատրյանը, Շենիկ համայնքի ղեկավար Կորյուն Մինասյանը եւ գյուղի բնակիչները:**



**«Մայրաքաղաքի եւ հատկապես սահմանամերձ գյուղերի զարգացման տեմպերի միջեւ մեծ տարբերություն կա: Ենթակառուցվածքների ապահովման անհրաժեշտությունն առկա է շատ բնակավայրերում: Տեւական ժամանակ իրականացնում ենք այս ծրագիրը՝ ձգտելով լուծել եղած խնդիրներն ու կրճատել համայնքների ֆինանսական բեռը: Միայն 2017 թվականին հասցրել ենք LED լուսարձակներով աշխատող համակարգ գործարկել 6 մարզի 14 գյուղում: Շենիկը դրանցից մեկն է: Հաճելի է արձանագրել, որ մեզ հաջողվում է որոշակի քայլերով նպաստել նման բնակավայրերի զարգացմանը: Ի վերջո, լուսավորված փողոց ունենալը քաղաքի մենաշնորհը չէ: Դա քաղաքակիրթ կենսաձեւի տարրական պայման է»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Ի տարբերություն այլ լամպերի՝ LED լամպերն առավել արդյունավետ ու դիմացկուն են, կարող են անհամեմատ ավելի երկար ծառայել՝ սպառելով 80%-ով պակաս էլեկտրաէներգիա:**

**Գյուղի փողոցները կլուսավորվեն ամռանը 21:00-ից մինչեւ 02:00, իսկ ձմռանը՝ 18:00-ից մինչեւ 01:00: Տոնական օրերին լուսավորությունը կապահովվի ամբողջ գիշեր:**

**Շենիկ գյուղը գտնվում է Արմավիրի մարզի հյուսիս-արեւմտյան մասում, սահմանակից է Թուրքիային:**

AZG NEW SHABAT.QXD 01/03/2018 21:50 Page 10



# ՀՀ առեւտրաշուկան... թալանի հոգեբանության ցուցադրավայր

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՍՅԱՆ

Նորանկախ Հայաստանի անցած ժամանակահատվածում մի բան, որն առանց վարանելու սուր քննադատության է արժանացել, առեւտուրն է: Այն մոտեցումը, թե կառուցվող շուկայական հարաբերությունները ամեն ինչ իրենց տեղը կդնեն, քանզի գործելու է առաջարկ-պահանջարկ սկզբունքը, որտեղ հիմնական դեր խաղալու է նորին գերազանցության մրցակցությունը, ինչ-որ սպասված արդյունքը չտվեց: Գուցե դա նախորդ ժամանակաշրջանի հետեւանք էր, երբ վաճառասեղաններին գրեթե ոչինչ չկար, իսկ տներում սառնարանները համեմատաբար լցված էին, թող որ ում օգնությամբ եւ որտեղից ձեռք բերված ձվերով ու հավերով, պանրով ու երշիկեղենով, այլ առաջին անհրաժեշտության պարենով ու հումքով: Առեւտրական թե վաճառական խավն իր գործն անում էր, միջոցների մեջ խտրականություն դնելով, կամ ոչ, պլանային քաոսի պայմաններում քաոսային պլանավորում էր իրականացնում ու հաստատում: Հանրության մի մասի կողմից հարգված լինելու պարագայում մեզանում կազմավորված այս յուրօրինակ միջնորդ պատվան անարգված էր հանրության մյուս մասի կողմից, որի գնահատականներն առավել քան կոշտ էին, եթե այլ կարծիք չհնչեցնենք:

Անցած 20-25 ամյակում ՀՀ տնտեսության այս ճյուղը լավ-վատ շարժ արձանագրել է: ՀՀ նախագահներից յուրաքանչյուրն է մասնակցել այս ու այն մարզում հերթական թռչնաֆաբրիկայի բացմանը, որի ընթացքում դրանց հիմնադիր սեփականատերերը զեկուցել են, որ ճտից մինչեւ 1 կգ հավի ստացումը 35-38 օրվա խնդիր է, այնպես որ շաբաթներ անց կբավարարեն հանրապետության բնակչության այս մսատեսակի հանդեպ պահանջարկը, մրցակցային միջավայրի շնորհիվ էլ կկարգավորեն եւ կնվազեցնեն գները: Եթե գործընթացը դիտարկենք 20-ամյա ժամանակահատվածի առումով, զարգացում անշուշտ կա, քանզի երբեմնի տարեկան 4 հազար տոննա հավի մսի արտադրությունը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վերջին հաղորդումների համաձայն, հիմա 8 հազար տոննա է: Բայց երբ գործընթացը դիտարկում ենք առաջարկ-պահանջարկի առումով, առավել եւս համաշխարհային զարգացումների տեսակետից, պատկերն առավել քան տխուր է ստացվում: Նշված ժամանակահատվածում տարիներ են եղել, երբ երկիր ներկրվել է մինչեւ 35 հազար տոննա հավի միս, տարօրինակորեն վաճառվել տեղական արտադրանքի համեմատ կես գնով, 700-750 դրամով, որը հիմա բարձրացել է 900 դրամի: Արդեն հիշատակված 8 հազար տոննա արտադրությունը ՀՀ միջին 1 բնակչի հաշվով տարեկան կազմում է հազիվ 3 կգ, դրա կողքին հեռավոր Բրազիլիայից լինի, թե եվրոպական երկրներից ներմուծվողը՝ 10 կգ: Եվ հարցը՝ ի՞նչը եւ ո՞վ է խոչընդոտում հայ գործարար միջավայրին պահանջարկ վայելող այս սննդահումքը տեղում արտադրել, հնչում է ինքնաբերաբար: Եվրոպական երկրներ լինի թե ԱՄՆ, մերձավորարեւելյան պետություններ թե հեռավոր Ավստրալիա այցելած մեր հայրենակիցները կվկայեն, որ հյուրընկալվելիս դրանցից եւ ոչ մեկում իրենք չեն հանդիպել խոր սառեցված հավի մսի, որն անշուշտ իրականացվում է ինչ-ինչ միջոցներով, գուցեեւ քիմիականով: Ամենուր հավի միսը վաճառվում է ընդամենը պաղեցված վիճակում, քանզի դա է պահանջում սպառողը, եւ այն անտեսելն անհարգալից վերաբերմունք է երկրի քաղաքացիների հանդեպ:

Ուր է թե հայրենակցի շահերի անտեսումը միայն այս ձեւով ավարտվեր: Արդեն նշեցինք, որ վերջին մի քանի տարիներին ներկրվող հավի ու դրա առանձին մասերի վաճառքի գինը թանկացել է 20-25 տոկոսով, եւ որեւէ մեկը, կարագի գնի օրինակով, անհասցե միջազգային շուկայի փաստարկների մասին հայտարարություն չի արել: Թերեւս հնարավոր էլ չէ նման արդարացում փնտրել, քանզի հենց միայն արդեն հիշատակված Բրազիլիայում հավի մսի արտադրությունը 2000 թվականի 6 մլն տոննայից 2014-ին կազմել է 13 մլն տոննա: Կրկնակիից ավելի աճին կարելի էր լուրջ ուշադրություն չդարձնել, եթե համաշխարհային շուկայում այս մսատեսակի հանդեպ պահանջարկի հետաքրքրության պակաս նկատվեր: Ինչքան էլ արտադրությունն ավելանում է, սպառում կա ու կա, բոլոր կրոնների ու մաշկի գույնի մարդիկ աշխարհի 4 կողմերում հաճույքով են վայելում այս մսատեսակը, եւ հայաստանցիներս բացառություն չենք: Առավել եւս մեր հայրենակիցների այն մասը, որի ընտանեկան բյուջեն կաշկանդում է տեղական արտադրության հավի մսի դիմաց 1300-1500 դրամ վճարել եւ պարտադրված է կրկնակի մատչելի գնով վաճառվող խոր սառեցված ներկրված մթերքից օգտվել:



Փորձենք պարզել, թե ինչպիսի գներ եւ սպառում կա մեզ մերձակա երկրներից մի քանիսում: Ռուսաստանի դաշնությունում օրինակ, 2000 թվականին հավի մսի արտադրությունը 775 հազար տոննա էր, 1 բնակչի հաշվով 5 կգ: 2014-ին արտադրությունը 3,8 մլն տոննա է կազմել, 1 բնակչի հաշվով 28 կգ: Երկրի նախագահի հետ նախորդ տարվա դեկտեմբերին կայացած մեծ ասուլիսի ընթացքում նշվեց, որ ՌԴ-ում հավի մսի կիլոգրամի գինը 100 ռուբլի է, մեր 800 դրամը: Այս մասին տեղեկանալուց օրեր անց զանգահարեցի Ուկրաինայի Զապորոժյե քաղաքում բնակվող բարեկամուհուս, ով նշեց, որ այդ օրը հավի մսի կիլոգրամի դիմաց վճարել է 50 գրիվնա, որը մոտ 700 դրամ է:

Չգիտեմ ով ինչպես, ՀՀ շարքային քաղաքացու ու իր մի քանի տասնյակ հարեւան-հարազատների ընտանիքներում ՀՀ-ում արձանագրվող գինը այնպիսի խիստ որակումներով գնահատեցին, որ վերնագրում նշվածը մեղմ կարելի է որակել: Ստացվում է կրկնակիին մոտ գին, որն անհասանելի է հարյուր հազարավոր հայաստանյան ընտանիքների համար եւ որը երբեւէ չի անհանգստացնում մեր երկրի տնտեսության պատասխանատուներին, նախարարությունների մի ամբողջ խմբի, որոնց թվում են ՀՀ գյուղատնտեսության, տնտեսական զարգացման, տարածքային կառավարման, միջազգային ինտեգրման բարձրագույն կառույցները իրենց մասնագետներով ու ֆինանսիստներով, տնտեսագետներով ու տնտեսվարներով, որքանով որ դրանք կան: Իսկ ահա գյուղնախարարություն չունեցող Սինգապուրում, որի գոյության մասին մեր պաշտոնյաները հաճախ են պատեհ ու անպատեհ առիթներով հիշում, այս քաղաք-պետությունում, հավի մսի տարեկան արտադրությունը կազմում է 100 հազար տոննա, 1 բնակչի հաշվով 15 կգ: Մի այլ, ոչ մեծ երկրի թվերը նշենք, հայաշատ Լիբանանի: Այստեղ հիշատակվող մսատեսակի արտադրությունը վերջին տարիներին մոտենում է 150 հազար տոննայի, 1 բնակչի հաշվով 25 կգ. Վերջին 15 տարիներին երկրի բնակչությունը 3,6 մլն-ից հասել է 6,4 մլն-ի: Տեսնես այս երկրի նախագահի հայաստանյան այցի օրերին մերոնցից որեւէ մեկը հետաքրքրվեց արդյոք մեզ անհրաժեշտ այս ճյուղի հարցերով, թե՞ կրկին հույսը թողնվեց ներմուծողների խղճին՝ աշխարհի 4 կողմերից անհայտ ծագման ներկրումներ իրականացնել եւ գերշահույթներ ստանալով նորօրյա ազգային բարերարների հավակնությունների տրվել: Մարդիկ այսկերպ երկիր են պահում, մի ամբողջ պետության պարենային ապահովության ու անվտանգության խնդիր լուծում: Իսկ ահա լիբանանաբնակ բարեկամներիս շատ դժվարությամբ հաջողվեց բացատրել, թե ինչ է իրենից ներկայացնում խոր սառեցված հավի միսը: Նման բան այստեղ լսած ու տեսած չկանք, պնդում էին նրանք եւ վստահեցնում, որ սպանդի ենթարկված հավը գնում են միայն թարմ վիճակում, որը նույնն է թե՝ ակնածանք ու հարգանք կա սպառողի, սեփական քաղաքացիների հանդեպ:

Ներկայացնենք մեր հարավային հարեւանների կողմից այս ոլորտի զարգացման պատկերը: Հիմնական մսատեսակներից խոզի միս չսպառող Թուրքիայում եւ Իրանում հավի մսի արտադրության հանդեպ ուշադրության պատկերը գնահատեք ինքներդ. առաջինում 2000 թվականին թռչնամսի տարեկան արտադրությունը 660 հազար տոննա էր, երկրորդում՝ 800 հազար տոննա:15 տարի անց Թուրքիայում արտադրությունը եռապատկվել է, հասել 2 մլն տոննայի, Իրանում՝ 2,2 մլն տոննայի, 1 բնակչի հաշվով կազմել 15-ական կգ: Արտառոց է Իսրայելի ցուցանիշը. 2017-ին հավի մսի տարեկան արտադրությունը գերազանցել է 630 հազար տոննան, 1 բնակչի հաշվով մոտ 80 կգ սպառման ցուցանիշով երկիրն աշխարհում 1-ին տեղում է: Ըստ ականատեսների, իսրայելցիներն այս օգտակար ու համեղ մսատեսակից օգտվում են թե՛ առավոտյան նախաճաշին, թե՛ կեսօրին, թե՛ երեկոյան իրենց հրաշք խոհարարների ու ընտանեկան խոհանոցներում պատրաստվող ճաշատեսակների շնորհիվ:

Ավելորդ չենք համարում նաեւ ընթերցողներին ներկայացնել հավի մսի արտադրության համաշխարհային ցուցանիշները. 2000 թվականին՝ 68 մլն տոննա, 2014-ին՝ 113 մլն տոննա, միջին երկրաբնակի հաշվով տարեկան 15 կգ:

Թե երբ ՀՀ-ում կարձանագրվի այս ցուցանիշը, դժվար է անգամ մոտավոր թիվ նշել, քանզի նախորդ 20-ամյակում այն 1,5 կգ-ից հազիվ 3 կգ-ի է հասել: Երբ տողերիս հեղինակը Ավստրիայում հյուրընկալվելու շրջանում տեղացի արտադրողներին դիմում է այն հարցով, թե ինչպես է նրանց հաջողվում պարբերաբար 200 հազար տոննա արտադրություն իրականացնել, պարզապես հարցը տարօրինակ են համարում. արտադրում են ինչքան երկրին պետք է, վաճառում բացառապես պաղեցված տեսքով, գնորդների համար էլ հասանելի գնով: Ավելորդ չենք համարում նաեւ նկատել, որ այստեղ 3-5 եվրոյի միջակայքում տատանվող գնի 45 տոկոսը հարկերն են, դրանք Ավստրիայի բյուջե են գնում, այլ ոչ՝ տնտեսվարողների հաշվեհամարներին հայտնվում: Եթե Ավստրիայում, ինչպես եւ եվրոպական շատ երկրներում, 1 բնակչի հաշվով երկրի բյուջեից տարեկան ծախսը 25 հազար դոլար եւ ավելին է, ՀՀ-ում այն անգամ 1000 դոլար չի կազմում:

Անկեղծ գտնվեմ եւ նշեմ, որ դժվարությամբ, չցանկանալով եմ նման փաստեր նշում, քանզի այսկերպ նմանվում եմ գործընկերներիցս ոմանց, ովքեր այս ու այն երկրներում հայկական նորաստեղծ համայնքների մասին պատմող իրենց նյութերում հիացմունքի խոսքեր են հնչեցնում ստեղծված մանկական հաստատությունների ու դպրոցների, մշակույթի ու հոգեւոր օջախների մասին, յուրօրինակ էտսի համեցեք-ի առիթ ու պատճառ դառնում: Որ Երկիր մոլորակի մի զգալի մասում երշիկը մսից է պատրաստվում, կաթնամթերքն անարատ կաթից, զուգարանաթղթից սկսած ներկերն ու սոսինձները, ցեմենտն ու լամինատը շատ ավելի որակյալ ու մատչելի են, հագուստն ընտիր կարված, օծանելիքը գրավիչ ու բուրումնավետ, դրանք հատուկ մարդկային առանձնաշնորհների դրսեւորումներ չեն, այլ անգամ շատ պարզ ու հասարակ գործընթացների արդյունքներ, որոնք, վստահ եմ, դյուրությամբ հասու են նաեւ հայաստանցիներիս, եթե ուզենք՝ մի բան ավելիով: Թե ինչ է պակասում հիշատակված երկրների կողքին ասենք Շվեյցարիայի ու Ֆինլանդիայի օրինակով մեր նորանկախ պետությունը յուրօրինակ Հայցարիա կամ Հայլանդիա դարձնելուն, կարծում եմ մեր կառավարիչները գիտեն: Ավաղ՝ ընդամենն այսքանը.թե ե՞րբ կգա գիտեցածն իրականություն դարձնելու պահը, անհայտ է, որպիսի վիճակում է գաղջ միջավայր որակումն ստացած մեր առօրյան:

26.02.2018 թ. Երեւան

## 110 տարի առաջ

**Երեւանի Գաբրիելյան եղբայրների հիդրոէլեկտրակայանը կառուցվել է 1908 թվականին Երեւանում իրենց պատկանող կաշվի գործարանի կարիքների համար: Գաբրիելյան եղբայրների կիսատնայնագործական եղանակով կաշվի մշակման գործարանը ստեղծվել է 1894 թվականին: Կայանում տեղադրվել է «Ֆրենսիս» տեսակի հիդրոտուրբին: Այն միացվել է 230 Վ լարման, 25 կՎտ հզորության հաստատուն հոսանքի գեներատորին: Ջուրը վերցվել է Զանգու (Հրազդան) գետից եւ բաց ջրանցքով տեղափոխվելով 350 մետր, տրվել է հիդրոտուրբինին: Կայանի օգտակար էջքը կազմում էր 3 մետր:**

**Էլեկտրական էներգիայի տարեկան առավելագույն արտադրությունը կազմել է մոտ 30 հազար կՎտ.ժ: Ներկայումս այս հիդրոէլեկտրակայանը գոյություն չունի:**

**Ան հրաժեշտ է նշել,որ Հայաստանում առաջին էլեկտրակայանը կառուցվել է 1903 թվականին Դիլիջան քաղաքում 10 ԿՎտ հզորությամբ,իսկ Արցախում մինչեւ 1920 թ. միակ հիդրոէլեկտրակայանը եղել է Շուշի քաղաքի մոտ 30 ԿՎտ հզորությամբ:**

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

# Թեհրանը փորձում է վերահսկել Իսրայել-Ադրբեջան դաշնակցային հարաբերությունները

*Իրանը սպառնալիք է տեսնում Ադրբեջանի գործերում Իսրայելի ներգրավման մեջ*

Մինչ փորձագետները գլուխ են կոտրում` պարզելու, թե տարածաշրջանի ժողովուրդներին ինչ կբերի Ռուսաստանի, Իրանի եւ Թուրքիայի ղեկավարների առաջիկա գագաթաժողովը, որտեղ թերեւս քննարկվեն Սիրիայի եւ քրդերի հարցերը, Անդրկովկասում նկատվում է Ադրբեջանի զգալի ակտիվացում: Եթե Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի գծով ԵՄ հատուկ պատվիրակ, էստոնացի Տոյվո Կլաարի Բաքու կատարած այցը դժվար է շաղկապել անմիջականորեն տարածաշրջանի խնդիրների հետ, ապա Իրանի պաշտպանության նախարար Ամիր Խաթամիի նույն քաղաք կատարած այցելությունը խորհրդածությունների տեղիք է տալիս:

Դատելով Լաարի երկարահունչ պաշտոնից, նա ասես Անդրկովկասի խնդիրների դիտորդը լինի: Սակայն Բաքվից հետո նա փետրվարի 23-ին արդեն Երեւանում էր: Այն փաստը, որ Կլաարը Բաքվում հանդիպում ունեցավ Ադրբեջանի պաշտպանության նախարար Զաքիր Հասանովի հետ, դեռ չի նշանակում, որ ադրբեջանցիներն այդպիսով փորձել են պարզել ԵՄ կարծիքը տարածաշրջանում ռազմական գործողությունների հնարավոր վերսկսման առնչությամբ: Իսկ Երեւանում Կլաարը հանդիպեց ՀՀ զորքերի գերագույն գլխավոր հրամանատար, նախագահ Սերժ Սարգսյանի հետ:

Ի տարբերություն Եվրոմիության, Իրանը, չլինելով եվրոպական երկիր կամ ԵԱՀԿ անդամ, 1992-ից ակտիվորեն ներքաշված է Արաքսից հյուսիս ընկած տարածքի, այսինքն Արցախի հակամարտության գոտու խնդիրների մեջ: Դժվար է համաձայնել այն բանին, թե բրիգադային գեներալ Խաթամիի այցը զուտ ճանաչողական բնույթ է կրել: Միեւնույն ժամանակ, իրանական տարբեր լրատվամիջոցների հաղորդումները վկայում են, որ Խաթամին Բաքու չի մեկնել ինչ-որ բան թելադրելու կամ իմանալու, այդ թվում` Արցախի հարցի վերաբերյալ: Նաեւ հասկանալի է, որ իրանցի նախարարը Բաքու մեկնեց այն լուրի հրապարակումից անմիջապես հետո, թե մարտի 6-ին այնտեղ կայցելեն Թուրքիայի եւ Ուկրաինայի պաշտպանության նախարարները, որպեսզի խորհրդակցեն Ադրբեջան-Թուրքիա-Ուկրաինա համագործակցության նոր ձեւաչափի ստեղծման շուրջ:

Իրանում չեն կարող չիմանալ, թե ում համար են աշխատում Ադրբեջանը, ինչպես նաեւ Թուրքիան եւ Ուկրաինան: Ուրեմն Թեհրանը կարող էր հարցեր ուղղել Բաքվին: Ճիշտ է, Թուրքիան ներկայումս կախման մեջ է Սիրիայում Ռուսաստանի եւ Իրանի հետ իր դաշինքի պատճառով: Բայց ո՞վ գիտե, թե հետագայում ինչ տեղի կունենա Իդլիբի եւ Աֆրինի դեպքերի կապակցությամբ:

Ուշադրության արժանի են Խաթամիի այցը եւ հանդիպումները լուսաբանող ադրբեջանական լրատվամիջոցների հաղորդումները: «Ատլաս» քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար **Էլխան Շահինօղլուն** մասնավորապես նշում է Իրանի հետաքրքրությունը հակամարտության գոտու նկատմամբ. «Իրանական կողմը մտահոգ է իր հյուսիսային սահմանի հարցում` Իսրայելի եւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների վատթարացման պայմաններում, որոնք Իրանին մեղադրում են Սիրիայում զանազան զինված խմբավորումներին աջակցելու մեջ»:

Իրանի վերաբերյալ Շահինօղլուի դատողությունները ինչո՞ւ հիմա ավելի կարեւոր են, քան նույնիսկ 2016-ի ապրիլին, երբ Բաքուն պատերազմ սանձազերծեց ԼՂՀ-ի դեմ: Ներկայացնենք հարցի առավել հետաքրքրական կողմերը:

Առաջին, նկատի ունենալով վերոշարադրյալը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ դա Խաթամիի առաջին արտասահմանյան այցն էր, կարելի էր ակնկալել, որ նա կմեկնի Թուրքիա, Ռուսաստան, Սիրիա, Իրաք կամ որեւէ այլ երկիր: Ընտրվեց Ադրբեջանը:

Դա հանգեցնում է երկրորդ կարեւոր կողմին: Ինչպես պարզ է դառնում իրանական լրատվամիջոցների մի շարք հաղորդումներից, Խաթամին Բաքու էր մեկնել իր ադրբեջանցի պաշտոնակցի հրավերով: Այսպիսով, ոչ թե Իրանն էր փորձում ինչ-որ բան ճշգրտել Ադրբեջանից, այլ հակառակը: Եվ սա բացատրում է, թե ինչու Խաթամին մեկնեց Բաքու, եւ ոչ թե Թուրքիա կամ Պակիստան, որի հետ Իրանը ներկայումս բանակցում է Աֆղանստանի եւ պակիստանյան տարածքում գործող բելուջական ահաբեկչական խմբավորումների հարցի շուրջ:

Երրորդ կարեւոր կողմը ԼՂՀ-ի գործոնն է, որը վաղուց արդեն կայացած պետական սուբյեկտության իրողություն է եւ սահմանակից է Իրանին: Քանի որ ադրբեջանական լրատվամիջոցները ընդգծել են, որ Հասանովն է հրավիրել Խաթամիին, եւ քանի որ փետրվարի 21-ին կայացել է առանձնազրույց, իսկ հետո ընդլայնված կազմով հանդիպում, պարզ է, որ խոսելու բան ունեցել են: Ադրբեջանական կիսապաշտոնական աղբյուրների համաձայն` միայն **Հասանովն** է ինչ-որ պնդումներ արել Արցախի մասին: Նա ասել է, թե ԼՂՀ հակամարտության լուծված չլինելը խնդիրներ է ստեղծում տարածաշրջանի կայունության համար: Հասանովը իրանական կողմին շնորհակալություն է հայտնել հակամարտությունը տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության սկզբունքներով լուծելու գործում Ադրբեջանին աջակցելու համար:

Ադրբեջանական լրատվամիջոցները հանդիպումը մեկնաբանում են այդ ոգով` նշելով, որ Խաթամին խոսել է պատմամշակութային եւ կրոնական կապերի եւ ռազմական համագործակցության ընդլայնման հնարավորությունների մասին: Նա հավելել է, որ Իրանը պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ նրա արդարացի դիրքորոշումը հակամարտության լուծման հարցում: Խաթամին իր երկրի պատրաստակամությունն է հայտնել ուժեղացնելու Ադրբեջանի ռազմական զորությունը:

Իրանի գերագույն հոգեւոր առաջնորդ Խամենեիին մոտիկ կանգնած ISNA գործակալությունը ավելի զուսպ է արտահայտվել. «Լրագրողների առջեւ ելույթ ունենալով` Խաթամին ասել է, որ երկու հարեւանները կարող են պայմանավորվել տեխնիկական եւ տեխնոլոգիական ճյուղերում համագործակցելու շուրջ, ներառյալ ռազմական տեխնիկայի համատեղ արտադրությունը»:

Ի դեպ ոչ Tehran Times թերթը, ոչ IRNA եւ IRIB գործակալությունները, ոչ էլ Tasnim News ու Mehr News աղբյուրները որեւէ ձեւով չեն նշում, թե Բաքվում գեներալ **Խաթամին** պաշտպանել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Իսկ հայ փորձագետ-արեւելագետ **Արմեն Իսրայելյանի** Ֆեյսբուքում կատարած գրառման մեջ մասնավորապես նշվում է, որ Խաթամին խոսել է առհասարակ տարածքային ամբողջականության մասին: Նա հավելում է, որ Իրանի հասարակական-քաղաքական շրջանակները Արցախը վաղուց ընկալում են որպես թեեւ չճանաչված, բայց անկախ պետական միավոր: Ըստ այդմ, տարածքային ամբողջականության մասին Խաթամիի արած հայտարարությունը կարող է վերագրվել նաեւ Արցախին:



Նախ եւ առաջ, ի տարբերություն ադրբեջանական լրատվամիջոցների, Թեհրանի ԶԼՄ-ները նշում են, որ հանդիպման ժամանակ խոսվել է հենց երկկողմ եւ տարածաշրջանային համագործակցության մասին: Իրանն ուզում է Ադրբեջանի հետ հարաբերությունները բարելավել այն պատճառով, որ իր հետախուզությունը տեղեկություններ ունի այդ երկրում ԱՄՆ-ի եւ Իսրայելի մասնագետների ներկայության վերաբերյալ:

Բացի դրանից, տեխնիկական ու տեխնոլոգիական համագործակցությունը եւ ռազմական տեխնիկայի համատեղ արտադրությունը անհրաժեշտ է համարվում այն պատճառով, որ Ադրբեջանի գլխավոր զինամատակարարները դարձել են Իսրայելն ու Թուրքիան, որոնց հետ մրցում է Ռուսաստանը: Փետրվարի 21-ին Խաթամին հենց դա է քննարկել Ադրբեջանի նախագահի, վարչապետի եւ այլ բարձրաստիճան անձանց հետ:

Եվ վերջապես, Խաթամին փետրվարի 22-ին Ադրբեջանի բարձրագույն ռազմական դպրոցի ղեկավար գեներալ-մայոր Հեյդար Փիրիեւի հետ հանդիպման ժամանակ ասել է, որ Իրանը իր հարուստ ռազմական եւ հակաահաբեկչական փորձը կկիսի հարեւան Ադրբեջանի հետ:

Այսպիսով, Իրանի պաշտպանության նախարարի համար Ադրբեջանի, Հայաստանի կամ Արցախի տարածքային ամբողջականության հարցը առհասարակ առաջնային չի եղել: Ուշադրության կենտրոնում են տարածաշրջանային անվտանգությունն ու կայունությունը եւ հակաահաբեկչական պայքարը:

2016 թ. Ապրիլյան պատերազմի օրերին եւ դրանից հետո իրանական լրատվամիջոցները մանրամասն հաղորդում էին Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի գործողությունների եւ այն մասին, թե Ադրբեջանի զինվորական ղեկավարներից ում են կանչել սահմանի մոտ եւ նախազգուշացրել այդ երկրի համար պատերազմի շարունակման հետեւանքների մասին: Թուրքիան մասնանշվում էր որպես ադրբեջանական նախահարձակման անմիջական աղբյուր, սպառնալիքներ էին հնչում իրանա-թուրքական հարաբերությունների լիակատար վերանայման մասին:

Այս տարվա փետրվարի 23-ին Իրանից հետաքրքրական հիշեցում հնչեց Ադրբեջանի հասցեին: Իրանի հոգեւոր առաջնորդ Խամենեիի օգնական, Արդեբիլ քաղաքի իմամ **Սեյեդ Հասան Ամելին** Բաքվին նախազգուշացրեց Ադրբեջանի տարածքում Իսրայելի հակաիրանական գործողությունների մասին: Ուրբաթօրյա աղոթքի ժամանակ Իրանի հոգեւորականության բարձրաստիճան պաշտոնյան հայտարարեց. «Իրանը հատուկ միջոցների օգնությամբ ապացուցել է, որ մի քանի տարի առաջ իրանական Նաթանց քաղաքի շրջանում խփված իսրայելական անօդաչու թռչող սարքը երկրի տարածք էր թափանցել հենց Ադրբեջանից»:

Այդ իմամը հայտնի է Իսրայելի եւ ԱՄՆ-ի հետ կապված մի շարք աղմկահարույց հայտարարություններով: 2013 թ. դեկտեմբերին նա Խոջալուի դեպքերի կապակցությամբ հայտարարեց, թե Խոջալուի դեպքերի հետեւում կանգնած է թուրքական «Էրգենեքոնը», իսկ իրականում` իսրայելական «Մոսսադը»: 2014 թ. օգոստոսին իմամ Ամելին հայտարարեց, որ Ադրբեջանն ու Թուրքիան Իսրայելին օգնում են պայքարել պաղեստինցիների դեմ: Իսկ 2015-ի մայիսին նա ասաց, որ Ադրբեջանում Շահ Իսմայիլի պատկերով ոգելից խմիչքների վաճառքը վիրավորանք է Իրանի համար:

«Ռեգնում» գործակալության մեկնաբան **Սերգեյ Շաքարյանցը** պատահական չի համարում այն հանգամանքը, որ Իրանի բարձրագույն ղեկավարությունը հենց իմամ Ամելիին էր հանձնարարել հայտարարություն անել Ադրբեջանի տարածքից դեպի Իրան իսրայելական անօդաչու թռչող սարքերի արձակման վերաբերյալ: Իրանի բարձրագույն հոգեւոր եւ աշխարհիկ ղեկավարությունը վստահ է, որ Ադրբեջանը այսօր եւս իսրայելական անօդաչու թռչող սարքեր է օգտագործում Հայաստանի եւ Արցախի դեմ` ընդսմին դրանց արձակմանը մասնակից դարձնելով իսրայելցի մասնագետների:

ԼՂՀ-ն եւ Հայաստանը Իրանի հյուսիսային սահմանն են, իրավացիորեն գտնում է ադրբեջանցի փորձագետ Շահինօղլուն: Բայց ադրբեջանցիներն իրավացի չեն մեկ այլ բանում. Իրանին պետք չէ կայունության խախտում իր հյուսիսային սահմանների մոտ, եւ Իրանը չէր կարող Բաքվին աջակցություն հայտնել մի հարցում, որի կապակցությամբ Ադրբեջանը Թեհրանի օգնությունն էր ակնկալում 1996-ից, երբ **Հեյդար Ալիեւն** այն ժամանակվա նախագահ Ռաֆսանջանիին համառորեն խնդրում էր Ադրբեջանի եւ ԼՂՀ-ի հակամարտությունը հայտարարել միջդավանանքային հակամարտություն:

Այնպես որ, ԼՂՀ-ի հակամարտությունը տարածքային կայունությանը սպառնացող վտանգ համարող Հասանովին ի պատասխան, գեներալ Խաթամին եւ իմամ Ամելին առավել քան հստակորեն հասկացրին, որ Իրանը տարածքային կայունությանը սպառնացող վտանգ է համարում Իսրայելի ներգրավումը Ադրբեջանի դեպքերի, այդ թվում ԼՂՀ-ի հակամարտության մեջ:

Ի դեպ, դեռ 2017 թվականին իրանցի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում խորհրդարանի նախագահ **Ալի Ամոլի Լարիջանին**, նաեւ Հայաստանին էին նախազգուշացրել տարածաշրջանային այդ հակամարտության մեջ Իսրայելի ներգրավման վտանգավորության մասին:

Պ.Ք.

AZG NEW SHABAT.QXD 01/03/2018 21:50 Page 12



# ԱՄՆ-ՌԴ. դեռ չեն գիտակցում, բայց պատերազմն արդեն սկսվել է



Հոդվածի վերնագիրը դիտավորյալ սադրիչ է, բայց ընդամենը արտահայտում է իրականությունը, գրում է Atlantico.fr հրատարակությունը: ԱՄՆ-ը Ռուսաստանի հետ պատերազմական վիճակում է, թեեւ խոսքը դեռ թեժ պատերազմի մասին չէ: Այդուհանդերձ, Սիրիայի արեւելքում՝ Դեր-Զորի շրջանում փետրվարի 7-8-ը ամերիկյան օդուժի հարվածներց սպանվեցին առաջին ռուսաստանցիները: Դրանք այսպես կոչված «հաջողության զինվորներ» էին, որոնք ներկայացնում էին Արգենտինայում գրանցված «Վագներ» մասնավոր ռազմական ընկերությունը: Հարկ է նշել, որ ՌԴ սահմանադրությունն արգելում է երկրում մասնավոր ռազմական ընկերությունների գործունեությունը:

Սակայն որեւէ մեկը կասկած չունի, որ այդ վարձկաններին ֆինանսավորել էր Մոսկվան, որպեսզի նրանք կատարեին այնպիսի խնդիրներ, որպիսիք չեն կարող կատարել ՌԴ օդատիեզերական ուժերը անձնակազմի սակավության պատճառով: Բացի դրանից, նման մարտերում ռուս կամավորների սպանվելը բնակչության վրա չի գործի շատ մեծ հոգեբանական ազդեցություն, քանի որ նրանք պարտավոր չէին Սիրիա մեկնել եւ գործում էին անձնական նախաձեռնությամբ, նշում է հոդվածագիրը:

Զանազան աղբյուրների տվյալների համաձայն՝ ռուսների կորուստները գնահատվում են 500-ից մինչեւ 600 մարդով: Ըստ երեւույթին, իրական կորուստը կազմում է մոտ հարյուր մարդ: Վաշինգտոնում նշում են, որ ԱՄՆ-ը չի հանդուրժի սիրիացի զինվորների անցումը Եփրատի մյուս ափը, քանի որ ամերիկացիները իրենց իրավունք են վերապահում տնօրինելու այդ գոտին հենց Սիրիայում ռուսների եւ իրանցիների ազդեցության ծավալմանը դիմակայելու համար:

Նախագահ Վլադիմիր Պուտինը պաշտոնապես չարձագանքեց այդ գործին, բայց արժե վերհիշել մեկ ուրիշ գործ, որպեսզի հնարավոր լինի պատկերացնել, թե ինչ կարող է տեղի ունենալ առաջիկա ամիսներին: Երբ 2015 թ. նոյեմբերի 24-ին Թուրքիան խոցեց սիրիական սահմանի մոտ թուրքական տարածքը բառացիորեն մի քանի տասնորդական վայրկյանով հատած ռուսական Cy-24 ռմբակոծիչը, պատասխան գործողությունները տեղի ունեցան մի քանի ամիս անց՝ 2016 թ. մայիսին: Այն ժամանակ ՔԲԿ-ի ակտիվիստները տարածեցին տեսահոլովակ, որը պատկերում էր, թե ինչպես թուրքական AH-1W «Սուպեր Կոբրա» ուղղաթիռը խոցվում է ռուսական SA-18 տիպի «երկիր-օդ» հրթիռով, թեեւ այդ մոդելը տարածված չի եղել ռազմական գործողությունների տվյալ գոտում, գրում է հեղինակը:

Համենայն դեպս, այդ քայլը ուղերձ էր նախագահ Էրդողանին, ում քաղաքականությունը Մոսկվայի հանդեպ արմատապես փոխվեց՝ առճակատումից վերածվելով համագործակցության: Պատմության դասը հետեւյալն է. գոյություն ունի վտանգ, որ ռուս վարձկանների սպանության դիմաց հատուցման գործողությունը կարող է տեղի ունենալ անսպասելի վայրում, սակայն ակնհայտ է, դա անպայման կլինի: Դա վրիժառության հարց չէ՝ հաշվի առնելով Պուտինի սառնասրտությունը, բայց վերջինս ունի ռազմավարություն՝ հակառակորդին ցույց տալ թույլատրելի սահմանը:

Բարեբախտաբար, ներկա պահին դեռ անմիջական բախումներ չկան ռուսաստանցի եւ ամերիկացի զինվորականների միջեւ, թեեւ հետախուզական օդանավերը եւ լրտեսական նավերը ավելի ու ավելի ակտիվորեն «շոշափում» են հակառակորդի սահմանները: Սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ Վաշինգտոնը միակողմանի կարգով արդեն խզել է երկխոսությունը Մոսկվայի հետ: Կարծիքների փոխանակումը, մասնավորապես ՄԱԿ-ում, իրականում դարձել են մենախոսություններ՝ համեմված փոխադարձ մեղադրանքներով: Դրանք ուղղված են Կրեմլի եւ անձամբ Վլադիմիր Պուտինի դեմ: Հարկ է նշել, որ ամերիկացիները սկզբունքորեն զգուշանում են խոսել Ռուսաստանի մասին:

Այն պահից, երբ նախագահ Թրամփը ներքաղաքական կյանքում հմտորեն մեկուսացվեց նոր պահպանողականների ջանքերով, որոնք վախենում էին, որ իրենց ազդեցությունը կթուլանա նոր եւ անկանխատեսելի նախագահի պաշտոնավարման ընթացքում, ԱՄՆ վարչակազմը Ռուսաստանի դեմ հարձակումներ է սկսել բոլոր ճակատներում: Վաշինգտոնի բարձրագույն ղեկավարությունը փորձում է երկիրը ներկայացնել որպես «ռուսական արջի» եւ անձամբ Պուտինի զոհ: Թիրախի գերանձնավորումը չափազանց կարեւոր է հանրային կարծիքի համար, որը սիրում է տեսնել չարագործի, որին հարկավոր է նեղը գցել:

Ինչ վերաբերում է Մոսկվային, նրա վրա մեղադրանքների հեղեղ է թափվում: Դրանցից մեկը ազդեցությունն է ԱՄՆ-ի ընտրությունների վրա, իբր ամերիկացիներն այնքան հիմար են, որ օտարները պիտի իրենց թելադրեն, թե ում պետք է ընտրել նախագահի պաշտոնում, ի դեպ այլեւս չեն խոսում Թրամփի «ոսկե անձրեւի», այսինքն ՀԴԲ-ի ներկայացրած վարկաբեկիչ ապացույցների մասին: Մեկ այլ մեղադրանք է Կրեմլի ազդեցությունը Բրեքսիտի վրա. այնտեղ եւս ժողովուրդը «վատ» է քվեարկել, այսինքն բրիտանացիները նույնքան հիմար են, որքան իրենց ամերիկացի եղբայրները: Խոսվում է նաեւ Ֆրանսիայի նախագահական ընտրություններին Կրեմլի միջամտության մասին, սակայն ֆրանսիացիները ավելի խելացի գտնվեցին նախագահի ընտրության հարցում եւ չենթարկվեցին Sputnik ռադիոկայանի եւ RT հեռուստաընկերության քարոզչությանը, որոնց հաղորդումները նրանք ունկնդրում եւ դիտում են ամեն օր, հեգնում է հոդվածագիրը:

Ռազմական առումով, Ռուսաստանի հետ կապված երկյուղները (դրանք վախեցնում են մանավանդ մերձբալթյան երկրներին, որոնք ԽՍՀՄ-ի հետ կապված դառը հիշողություններ ունեն) ԱՄՆ-ին դրդում է ուռճացնել սեփական ռազմական բյուջեն՝ այն հասցնելով շուրջ 700 մլրդ դոլարի, որը վեցապատիկ գերազանցում է ռուսաստանի ռազմական ծախսերը: Սակայն իրականում ամերիկացի զինծառայողները շատ ավելի թանկ են նստում, քան ռուսաստանցիները: Տվյալ դեպքում գործ ունենք անհամադրելի բաների հետ:

Նույնիսկ ռազմական լոբբիի ներսում գոյություն ունի այն, ինչը պատասխանատու է միջուկային զենքի համար: Արդեն երկու տարի շարունակ նա պնդում է, որ միակ արժանավոր թշնամին Ռուսաստանն է, քանի որ մյուս միջուկային երկրները անչափ հետ են մնում տեխնիկական առումով:

Բացի դրանից, Ռուսաստանը հանդգնություն ունեցավ պնդելու, որ իր սահմաններին ՆԱՏՕ-ի մոտենալը սպառնալիք է ներկայացնում, եւ որ հարկավոր է պատասխան տալ դրան: Այսպիսով, գործի է դրվում պատերազմի ժամանակահատվածը, որը հանգեցրել է ներկայիս լարվածությանը: Գուցե Միացյալ Նահանգները փորձում է վերստին դիմել «աստղային պատերազմների» սպառնալիքին, որը սնանկացրեց ԽՍՀՄ-ի տնտեսությունը եւ հանգեցրեց այդ երկրի կործանմանը: Նման ռազմավարությունը իսկական հաջողություն էր, որը վերջ դրեց սառը պատերազմին:

Վերջում արժե հիշեցնել, որ նախագահ Պուտինը պաշտպանում է իր համաքաղաքացիների շահերը, ինչը հազվադեպ երեւույթ է դառնում ներկայիս արեւմտյան աշխարհում, եւ այդ շահերը միշտ չէ, որ համապատասխանում են եվրոպացիների շահերին: Նաեւ պետք է հավաստել, որ Ռուսաստանը ուղղակի կամ նույնիսկ անուղղակի սպառնալիք չի ներկայացնում Եվրոպայի համար: Անշուշտ, Ռուսաստանի լրտեսական ցանցերը բավական ակտիվ են Եվրոպայում, եւ անհրաժեշտ է պայքարել դրանց դեմ, սակայն հեղինակը կարծում է, որ դրանք ավելին չեն, քան ամերիկացիների ցանցերը, որոնք ամեն տեղ են, թեեւ ԱՄՆ-ը տեսականորեն պնդում է, թե ինքը չի լրտեսում իր դաշնակիցներին:

Պ.Ք.


# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ կենտրոնական բանկի կողմից դարակային սերվերների եւ HP-3PAR «բլեյդ» սերվերային համալիրի լրացուցիչ բաղադրամասեր մատակարարող եւ գործարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության բաց մրցույթ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց մրցույթ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար դարակային սերվերների եւ HP-3PAR «բլեյդ» սերվերային համալիրի լրացուցիչ բաղադրամասեր մատակարարող եւ գործարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Բաց մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց մրցույթին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2018թ. ապրիլի 09-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2018թ. ապրիլի 09-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2018թ. ապրիլի 16-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին 18-02, 18-05:

ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն



www.azg.am

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 1.3.2018, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUITT.QXD 01/03/2018 21:32 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 8(368)
2 ՄԱՐՏ
2018

# Ծնունդն ու մահը մեկտեղված

## ԱԼԲԵՐՏ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



**Փետրվարի 27-ին ՀՀ ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր Ալբերտ Մկրտչյանը դարձավ 81 տարեկան: Ճակատագրի անբացատրելի քմահաճություն, թե՞ ուղղակի պատահականություն. փետրվարի 27-ի լույս 28-ի գիշերը Ալբերտ Մկրտչյանը մահացավ: Արդեն մի քանի տարի նա Սոս Սարգսյանի «Լակոտը» վիպակի հիման վրա նկարահանում էր նույնանուն գեղարվեստական ֆիլմը, որը կլիներ նրա վերջին աշխատանքը, եթե հասցներ ավարտել, բայց չհասցրեց:**

**Ալբերտ Մակրտչյանն իր առաջին կարճամետրաժ «Լուսանկար» ֆիլմով 1969-ին, դեռ ՎԳԻԿ-ի ուսանող, մտավ հայ կինո ու շատ չանցած իր անունն ամրագրեց հայ լավագույն կինոռեժիսորների շարքում:**

**Առաջին ֆիլմից ընդամենը երեք տարի անց նկարահանել է «Հուշարձան» ֆիլմը, որը նրան բերել է առաջին պետական մրցանակը: Հետագայում լիամետրաժ խաղարկային ֆիլմերը միմյանց են հաջորդել ու հերթական պետական մրցանակների արժանացրել ռեժիսորին:**

**Ալբերտ Մկրտչյանի ոճն ու ձեռագիրն ազգային են, կերպարներն ու թեմաները՝ նույնպես: Նրա ֆիլմերը միանգամից են սիրվել ժողովրդի կողմից. դրանք մեր տուն են մտել դեռ կես դար առաջ ու մինչեւ այսօր չեն կորցրել իրենց հմայքն ու արդիականությունը: Այդ ֆիլմերը չեն հնանում ու չեն մաշվում, որովհետեւ ռեժիսորն իր կերպարների ու ժողովրդի միջեւ անջրպետ չի ստեղծել անգամ էկրանի տեսքով: Մկրտչյանական հերոսները պարզ, անմիջական, չկեղծված, համոզիչ հայ մարդիկ են՝ իրենց դարդ ու ցավով, ապրումներով ու զգացումներով: Այդ ֆիլմերի հերոսները հաճախ են մեզ հետ նույնանում, որովհետեւ իրենց հոգեկերտվածքով ու մտածելակերպով, իրենց կենցաղավարությամբ ու անգամ բառապաշարով հայ մարդու խտացումն են: Պարզապես Ալբերտ Մկրտչյանն ավելի է ընդգծել հայ մարդու առանձնահատկությունները, անհատականությունը, իր տեսակով մյուսներին նման ու միաժամանակ ոչ նման լինելը:**

**Ալբերտ Մկրտչյանի անունը հաճախ ենք կապում նրա ավագ եղբոր՝ Մհեր Մկրտչյանի հետ: Պատճառն այն է, որ ռեժիսոր եղբոր ֆիլմերում դերասան եղբայրը հաճախ է խաղացել, եւ անհերքելի է, որ Ֆրունզի շնորհիվ Ալբերտ Մկրտչյանի ֆիլմերը երիցս արժեքավոր են դարձել: Անհերքելի է նաեւ, որ այդ ֆիլմերը կարծես հենց Ֆրունզի համար ստեղծված լինեն: Ալբերտ Մկրտչյանը պատմում էր, որ եղբոր հետ հաճախ է ստեղծագործական հողի վրա վիճել: Ինքը՝ որպես ռեժիսոր, այլ պահանջներ է ունեցել, եղբայրը՝ որպես նրանից տարիքով մեծ ու դերն իր միջով անցկացնող արտիստ, այլ պատկերացումներ է ունեցել: Իսկ հայտնի է, որ Ֆրունզն իմպրովիզացիաների, դերն իր զգացածով մատուցելու վարպետ էր:**

**Ալբերտ Մկրտչյանն այն երջանիկ ռեժիսորներից էր, որին բախտ է վիճակվել լինել ժամանակակիցը դերասանական մի ողջ աստղաբույլի, որ շողարձակեց մեր կինոյում ու հանձին նոր սերնդի՝ ծիր չթողեց: Գալյա Նովենց, Շահում Ղազարյան, Վերջալույս Միրիջանյան, Լուսյա Հովհաննիսյան, Խորեն Աբրահամյան, Ներսես Հովհաննիսյան, Ազատ Գասպարյան. էկրանի վարպետների մասնակցությամբ ֆիլմերի հաջողությանը կասկածելն անիմաստ կլիներ անգամ ամենաթույլ սցենարի դեպքում: «Մեր մանկության տանգո» ֆիլմում Գալյա Նովենցը Սիրանուշի դերի համար արժանացել է Վենետիկի փառատոնի ժյուրիի հատուկ մրցանակին: Այդ դերի համար նրան անվանել են հայ Աննա Մանիանի:**

**2000-ականներին էլ Ալբերտ Մկրտչյանը երկու ֆիլմ նկարեց՝ «Ուրախ ավտոբուսն» ու «Տխուր փողոցի լուսաբացը»: Նա փորձեց ձեռքը ժողովրդի զարկերակին պահել ու կինո բերել երկրաշարժ, արցախյան պատերազմ տեսած հայրենի Գյումրին: Այդ ֆիլմերը կրում էին Ալբերտ Մկրտչյան ռեժիսորի ձեռագիրը, բայց նրա կողքին չկար արտիստական թեւ-թիկունքը, որ համուհոտ տար մեր էկրանին: Բայցեւայնպես, մեր կինոն հանձին Ալբերտ Մկրտչյանի կորցրեց եւս մի դասականի:**

ՆԱԻՐ ՅԱՆ

# Հուշարձանները 2017-ին եւ 2018-ին

**Նաիր ՅԱՆ**

2017 թվականին նախատեսված էր վերականգնել և ամրակայել պատմամշակութային 7 հուշարձան, բայց շինարարական աշխատանքները կիսատ են մնացել. շինարար կազմակերպությունները ժամկետների մեջ չտեղավորվեցին: 2017-ի նոյեմբերին, ինչպես տեղեկացրել ենք ժամանակին, մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը լրագրողների հետ շրջայց կատարեց պատմամշակութային այն հուշարձաններ, որոնց վերականգնումը պետք է մինչեւ տարեվերջ ավարտին հասցվեր. ակնհայտ էր, որ մինչեւ ցրտերի ընկնելը շինարարները չէին հասցնի գործն ավարտել: Եթե անգամ նրանք պատրաստ լինեին աշխատել, միեւնույն է, դա անթույլատրելի է, որովհետեւ երբ ջերմաստիճանը +5-ից ցածր է, կրաշաղախը փչանում է, չի կպչում:

Օրեր առաջ մշակույթի նախարար **Արմեն Ամիրյանը** հայտնեց, որ անցյալ տարի կիսատ մնացած շինարարական աշխատանքները շարունակվելու են մինչեւ այս տարվա մայիս: Իսկ կիսատ մնալու պատճառն այն էր, որ շինարարները պատմամշակութային հուշարձանների վրա աշխատելու թույլտվությունը ստացել էին 2017-ի սեպտեմբերին՝ կորցնելով ամառվա ամիսները: Մրցույթին մասնակցած, բայց մրցույթը չշահած կազմակերպություններից մեկը դիմել էր դատարան. այդ պատճառով էլ ընդհանուր գործընթացը ձգձգվել էր: Դրան ավելացել էին մրցույթը շահած «Արհովշին» ընկերության շինարարական աշխատանքների կազմակերպչական թերությունները, եւ խնդրեմ. պաշտոնական տերմինոլոգիայով ասած՝ 2017-ի կատարողականը ժամանակին չի հասցվել: Ի դեպ, անցկացված ստուգումների արդյունքում 6 ընկերություն աշխատել է խախտումներով ու չարաշահումներով. գումարի տեսքով դրանք 65 միլիոն դրամի են: Կազմվել են համապատասխան արձանագրություններ, իրավապահ մարմինները զբաղվում են նրանց գործով:



Դասը փորձից ելնելով՝ մշակույթի նախարարությունն այս տարի պատմամշակութային հուշարձանների վերականգնման մրցույթն ավելի վաղ է հայտարարել: 8 հուշարձանի վերականգնման համար արդեն դիմել է 21 կազմակերպություն. նման ակտիվությունն աննախադեպ է: Ի դեպ, նախարարությունը դեռ շարունակում է նոր հայտեր ընդունել: Եթե անգամ անցյալ տարվա նման դատական գործ հարուցվի, մրցույթի ժամկետները չեն ձգձգվի, որպեսզի շինարարական աշխատանքերը ժամանակին սկսվեն ու մինչեւ տարեվերջ ավարտվեն: Նախատեսված է 2018 թվականի ծրագրում ներառված հուշարձանների վերանորոգման աշխատանքներն սկսել ապրիլից: Ընդհանուր հաշվով այս տարի վերականգնվելու է 18 հուշարձան՝ անցյալ տարվա չվերականգնվածները ներառյալ: Պայմանագրում նոր պայման կա. շինկազմակերպությունները պարտավոր են շինհրապարակներում տեղադրել տեսախցիկներ: Մշակույթի նախարարության կայքէջով հնարավոր կլինի 24 ժամ հետեւել շինարարի աշխատանքին:

2017-ին պատմամշակութային հուշարձանների վերականգնման ու ամրակայման համար պետբյուջեից հատկացվել է ավանդական 250 միլիոն դրամ, որից խնայվել եւ բյուջե է վերադարձվել 17 միլիոն դրամ: Միայն անցյալ տարի անհատ բարերարներն ու մասնավոր կազմակերպությունները հայրենի մշակույթին հատկացրել են 2,8 միլիոն դոլար, որի զգալի մասը տրամադրվել է պատմամշակութային հուշարձանների վերականգնմանը: Օրինակ՝ Կոտայքի մարզի Սոլակ գյուղում գտնվող Մայրավանքի վերականգնմանը պետբյուջեից հատկացվել է 50 միլիոն դրամ, իսկ մասնավոր ներդրումը կազմել է 80 միլիոն:

Անհատ բարերարների, մասնավոր հիմնադրամների կողմից մշակույթ հովանավորելը, արժեքավոր հուշարձանները պահպանելն ու վերականգնելն աշխարհում ընդունված մշակույթ է: Մեզանում սպիտակ ագռավների տպավորություն են թողնում նրանք, ովքեր մշակույթին օգնության ձեռք են մեկնում: Մեկ այլ դիտարկում. ունեւոր մարդիկ հաճախ են եկեղեցիներ կառուցում, մինչդեռ հազար տարվա վաղեմությամբ արդեն խոնարհվող եկեղեցիները հազվադեպ են վերանորոգում. նման օրինակները բացառիկ են՝ Իրինդի Սբ. Աստվածածինը կամ Օձունի բազմաչարչար եկեղեցին, որի վերականգնման հետ կապված բազմաթիվ խախտումներ ու չարաշահումներ հայտնաբերվեցին:

2018-ին վերականգնվելիք հուշարձանների ցանկում են Շիրակի Հոռոմ գյուղի Սբ. Հռիփսիմեն, Սյունիքի Տեղ գյուղի Սբ. Գեւորգը, Լոռվա մարզի Լոռի Բերդը, Սանահին վանական համալիրը, Նուռնուսի 13-րդ դարի եկեղեցին, Ամբերդը, որն անցյալ տարի մեր կառավարությունը հայտարարեց արգելոց, Քոբայրավանքը, Ոսկեվազ գյուղի միջնադարյան բազիլիկ եկեղեցին, Այգեշատի Թարգմանչաց եկեղեցին:

Պատմամշակութային հուշարձանների պահպանությունը 99 տոկոսով պետության վրա է դրված, տարածքների վերահսկումը՝ եւս: Օրինակները բազմաթիվ են, թե ինչպես է հուշարձանի տարածքը վերածվում քաղաքացիական գերեզմանոցի կամ կերուխումի վայրի: Իսկ եկեղեցիների ու վանքերի տանիքներին աճող բուսականությունն ուղղակի պատուհաս է դարձել պետության համար. Սանահինի վանական համալիրի գլխին ա-



ճած հսկա ծառերը մի քանի տարի առաջ մեծ աղմուկ բարձրացրին: Ոչ ցանկալի բուսածածկույթից ազատվելն այնքան էլ հեշտ չէ: Շինանյութը թունաքիմիկատով մշակելը հետո միայն օգտագործելը ելքերից մեկն է, բայց ոչ վերջնականապես հուսալի: Այնուամենայնիվ, մշտական հոգածությունն ու խնամքը պարտադիր են: Եկեղեցիների կղմինդրածածկ տանիքները պետք է պարբերաբար մաքրվեն բուսածածկույթից. հակառակ դեպքում ամեն մի վերանորոգում ու վերականգնում անիմաստ կդառնա ու կարճ ժամանակ անց հարկ կլինի նույն ծավալով ու ծախսված նույն գումարի չափով աշխատանք կատարել:

Մշակույթի նախարարությունը փորձելու է դիմել տեղի երիտասարդության օգնությանը: Այսինքն՝ այն համայնքը, որտեղ գտնվում է տվյալ հուշարձանը, հասարակական հիմունքներով խնամվելու է՝ ընդհուպ տանիքները բուսածածկույթից ազատելը: Մինչեւ հասարակության մոտեցումն ու հոգեբանությունը չփոխվի, ոչ մի վերանորոգում իր նպատակին չի ծառայի. այս համոզումն ունեն պաշտոնական մարմինները: Քաղաքացին պետք է հասկանա ու զգա, որ պատմամշակութային կոթողի տերն ինքն է եւ ինքն էլ պատասխանատվություն է կրում դրա պահպանման, սերունդներին ժառանգություն թողնելու համար: Մինչեւ քաղաքացու մեջ այդ գիտակցությունը չարթնանա, նա շարունակելու է ուտել-խմել եկեղեցու պատի տակ, իր ու իր սիրած աղջկա անունը փորագրել 7-րդ դարի վանքի կիսախոնարհված գմբեթին: Պետության պարտավորությունները ոչ ոք չի վիճարկում, բայց Հայաստանում 24 հազար հուշարձան կա. 24 հազարի վրա պահակ դնել հնարավոր չէ:

AZG NEW MSHAKUITT.QXD 01/03/2018 21:32 Page 2



# Հարություն Թորոսյանը
# Հայաստանի, Փարիզի եւ Բեյրութի միջեւ

Մարտին ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Մի հին տեղում (լավ չեմ հիշում, թերեւս, ասորական պնակիտի վրա) գրված է, թե ոչ մեկը մյուսից ավելին չէ:

Հարություն Թորոսյանն ինձ համար Ռոբերտ Էլիբեկյանից, Հակոբ Հակոբյանից, Էմիլ Գազազից եւ մյուսներից պակաս անհատականություն չէ: Բայց հայության մեջ ու որոշ չափով արտերկրում, Հարությունը այս անունների նման ճանաչում չունի:Պատճառներ կան, անկասկած, սակայն ինձ հետաքրքրում է հատկապես մեկը՝ սեփական անձին կամ ստեղծագործությանը կարեւորություն չտալու տոհմական մեծահոգությունը:

Վերեւում հիշատակված անունները, նաեւ Ֆրանսիայում ճանաչված Գառզուն ու Ժանսեմը, տարբեր գրավչություններով, ճաշակով ու տեսանկյուններով մի «գյուտ» կամ «հանք» են հայտնագործել եւ անընդհատ փորել, պեղել են այդ «հանքը»: Նրանց ստեղծագործական փնտրտուքը պտույտ է եղել այդ «հայտնագործության» շուրջը: Արվեստը գնահատողներին հետաքրքրել է այդ պտույտի, շարժման կերպը, բովանդակությունը, տեսակը:

Այդպիսի եւ բոլորովին ոչ սովորական արվեստագետ էր Հարությունի ուսուցիչներից մեկը՝ Մերձավոր Արեւելքի մեծագույն գեղանկարիչ (համենայնդեպս Մինաս Ավետիսյանի, Սեյրան Խաթլամաջյանի եւ այլոց կարծիքով) Պոլ Կիրակոսյանը: Մեր թվարկած ճանաչված անուններից թերեւս միայն Ռոբերտ Էլիբեկյանի գեղանկարչությունը կարող է ներդաշնակել Պոլի հետաքրքրական կտավներին:

Ըստ երեւույթին, որեւէ «սկիզբ» չի ոգեւորել Հարությունին այնքան, որ տրամաբանական շարունակություն ունենար իր ստեղծագործական առօրյայում: Ինչ-որ իմաստով նա նման է Պիկասսոյին, առանց սակայն վերջինիս եռանդուժն ու խառնվածքն ունենալու: Պիկասսոն սիրահարվել է ոչ հաճախ, բայց խորապես, Հարությունը՝ հաճախ, բայց՝ թեթեւ: (Ներեցեք, եթե սխալվում եմ):

Միջերկրականի արեւելյան ափին բանաստեղծ ծնված մեր այս նկարիչը փորձել է բացել իրարից քիչ տարբերվող, սակայն նկատելիորեն զանազանվող (հատկապես մասնագետի հայացքով) ոճական դռներ, սկիզբներ: Մի թեթեւ որոնումը, փոքր փնտրտուքը, կարճ ժամանակում ձանձրացրել է եւ նա մղվել է փնտրելու բոլորովին ուրիշ մի բան, որին «մուտք» կամ՝ «դուռ» ենք կոչում պայմանականորեն:

Հարությունը առանձին մեկն է հայության մեջ: Եթե նրան ամբողջ հասակով եւ էությամբ տակավին չեն զգում եւ չեն տեսնում Հայաստանի եւ սփյուռքի արվեստասերները, ողբերգություն չէ, եւ բնական է: Մեր ժամանակներում ուշադրություն են գրավում բոլորովին ուրիշ երեւույթներ եւ արժեքներ, որոնք «մեր մանկության շրջանին» (ինչպես կասեր Հարությունը) գոյություն ունեին ստվերի մեջ միայն եւ չէինք նկատում:

Հայաստանում նույնպես նոր հայեցակարգը, նոր ժամանակների ճաշակը, ըմբռնելի երեւույթ է: Հեշտ չէ բացատրել, թե ինչպես բիզնեսի հոգեբանությունն ուսումնասիրած Դեմյան Հերստը հարստացավ եւ աշխարհում անուն վաստակեց: Ինչպես ծնունդով օժտված Մարտին Պետրոսյանը (որին Մինաս Ավետիսյանը համարում էր միակը Հայաստանում. կարդացեք Ռուբեն Զարյանի հուշերը) անկախության տարիներին հայտնվեց գնահատության չափանիշերի լուսանցքում:

Լրագրողները, արվեստաբանները, նկարիչներն ու քանդակագործները (առավել եւս մյուս բնագավառների մասնագետները) չնայած տեղեկացվության մեծ հնարավորությանը, քաղաքներ, երկրներ, թանգարաններ տեսնելու իրողությանը, շարունակում են մնալ մ.թ.ա. 4-րդ դարում Զեւքսիսի պատկերած խաղողը իրականի հետ շփոթած թռչունի վիճակում: Աշխարհի հասարակությունը բնազդորեն մեծամասնությամբ պաշտում է իրականությունը գերիրական պատկերող արվեստագետներին. ահա թե ինչու ԱՄՆ-ի հռչակավոր թանգարաններից մեկի սեփականատեր Ժան Պոլ Գետտին իր մեծ ցուցասարածքը ծանրաբեռնել է նաեւ արվեստի պատմության համար համարյա նշանակություն չունեցող 17-18-րդ դարերի «վիրտուոզ» պատկերներով: Աշխարհի բոլոր ծագերում այդպիսի պատկերներին, որոնք Վան Գոգի, Գոգենի, Սեզանի հակառակ բեւեռումն են, մարդիկ նայում են զարմանքով եւ հիացմունքով: Տարբեր երկրներում ապրող, բայց միեւնույն ճաշակով միավորված այս մարդիկ երբեք ուղղակիորեն (առանց արվեստաբանական տեքստի) չեն կարող զգալ Մատիսի, Մարտիրոս Սարյանի, ռուսական ավանգարդի, Մոնդրիանի, պարսկական, հայկական մանրանկարչության լուսանկարչությունից, ակադեմականությունից խիստ զանազանվող ինքնատիպությունը եւ հակառակը՝ Սալվադոր Դալիի հորինվածքների առջեւ հայտնվում են գերագույն հաճույքի հոգեբանական ճիրաններում:

Երկրագնդի այս մեծածավալ ճաշակը ձեւավորվել է վերջին երեք-չորս դարերում, իտալական, ֆրանսիական, գերմանական, ռուսական ակադեմիաների եւ սրանցում կրթված նկարիչների, քանդակագործների շնորհիվ:

Հայության մեջ այս ընդհանուր ճաշակը տարածել եւ ամրապնդել է նկարիչների, քանդակագործների մեծամասնությունը՝ ակադեմիայի միջակ դասախոսից սկսած մինչեւ հռչակավոր ծովանկարիչը: Եթե Կառլեն Մուրադյանը չհրատարակեր Արշիլ Գորկու նամակները, որոնք մերոնց մեջ առաջացնում են սենտիմենտալ ապրումներ, դժվար թե 20-րդ դարի մեծագույն արվեստագետներից մեկը դառնար հայության խորհրդանիշներից մեկը:

«Պիկասսոյին ես ընկալում եմ որպես դիվային ճարպկությամբ օժտված երեւույթ... «Գեռնիկա»-ն պարոդիա է... «Ավինյոնի աղջիկները»՝ ծաղրանկար»,- 1977 թվին Ֆրանսիայի Գեղարվեստի ակադեմիայում արտասանած ճառի մեջ ասաց ազգությամբ հայ, ֆրանսիացի նկարիչ, նորաթուխ ակադեմիկանը: Հայաստանի հայտնի դեմքերը քննադատության փոխարեն գովեստներ շռայլեցին ակադեմիկոսի հասցեին:



Հարությունը քչերից էր, որ այդ ելույթի առիթով նկատեց, թե «ատիկա Պիկասոյի եւ Սեզանի դեմ անբարոյական արարք մըն էր»:

Իսկ որ Պիկասոն 20-րդ դարի նկատելի երեւույթներից է՝ ապացուցված է բազմաթիվ անգամ: Ավելորդ է ասել, թե նա առանց վախենալու արտահայտում է իր բնազդները, իսկ դրանք, եթե անգամ վայրենի են, գեղեցիկ են, տրամաբանական, զարմանալի նկարչական:

Հարությունի կյանքի եւ արվեստի մեջ պարզորոշ ցոլանում է այն հետաքրքիր ճանապարհը, որն անցել է հայկական գեղանկարչությունն ու քանդակագործությունը՝ 1950-ից 1990-ական թվականներին:

Նախ նկատենք, որ այդ ժամանակահատվածում հատկապես Բեյրութի եւ Հալեպի հայ գաղթօջախները ինքնատիպ հայաստաններ էին եւ համայնքի անդամները զորավոր թելերով կապված էին Վարդան Զորավարի, Մեսրոպ Մաշտոցի, Հայրենիքի գաղափարներին: Մինչդեռ Խորհրդային Հայաստանում այդպիսի համընդհանուր հոգեւոր ներդաշնակություն գոյություն չուներ, եւ շատ քչերն էին խորությամբ զգում իրենց արմատները:

1950-ականների վերջերին Հարությունը զարգացած որեւէ երկրում կարող էր ներկայացնել Հայաստանն ու Հայությունը, իբրեւ հայության ճամփան ու «արքայական լեզուն» իր մեջ խորապես կրող մեկը ու նաեւ տեսքով՝ գեղեցիկ հայ տղամարդ:

Հիմա նա ունի հարուստ կենսագրություն: Պաշտոնապես գնահատված է իբրեւ Լիբանանի ականավոր արվեստագետներից մեկը, բազմաթիվ մրցանակներ է շահել, նկարչությունն ուսանել է Բեյրութում ու Փարիզում: Հայաստանի եւ Արցախի թանգարաններին նա նվիրել է հին, հազվագյուտ, արժեքավոր դրամներ: Նա 1970-1980-ականներին եւ այսօր էլ համայն հայության գործուն դեմքերից է եւ ուշադրության է արժանացել ոչ միայն իր բարեկիրթ վարքով ու կեցվածքով, այլեւ լիբանանահայ մամուլում լույս տեսնող բազմաթիվ խելացի հոդվածներով:(*) Հարությունը Հայաստանում միավորեց բազմաթիվ նկարիչների, մանավանդ արվեստաբանների, որոնք երբեմն անհաշտ ախոյաններ էին թվում: Մի գրքում Արշակ Չոպանյանը Պետրոս Դուրյանի մասին ասել է, թե այս «թռչունի հոգին վերլուծումը չէ ճանչած»: Բանաստեղծ, «թռչունի հոգի» Հարությունը հավասարակշռված, խորամիտ եւ հեռատես մեկն է:

Սակայն մեզ հետաքրքրում է հատկապես նրա նկարչությունն ու գիրը, որոնք բարեբախտաբար արտացոլված են Բեյրութում հրատարակված «Խոհեր կեանքի եւ արուեստի մասին», «Դիտանկիւնէս», «Անկարելի սէր» գրքերում, բազմաթիվ ուսումնասիրություններում եւ երկու շքեղ նկարչական ալբոմներում:

Նրա նկարչությունն ու գիրը հարուստ նյութեր են պարունակում վերլուծական ուսումնասիրությունների եւ ավարտաճառերի համար:

Մեզ հետաքրքրում է գունային նուրբ եւ ձեւերի ու ծավալների ոչ հավակնոտ հարաբերություններով կառուցված, երբեմն զուսպ, իսկ երբեմն նաեւ անմիջական, ազատ, անկաշկանդ նրա կտավները:

Չկա ակադեմիական կրթություն ստացած հայտնի նկարիչ, որի վրա այս կամ այն չափով չի ազդել 16-րդ դարից հայտնի խիստ կարգ ու կանոնը: Մեր Սուրենյանցը համենայնդեպս ակադեմիականությունը հաղթահարեց մեծ դժվարությամբ: Հռչակավոր ակադեմիական Ժան Դոմինիկ Էնգրը կրթության այդ տեսակի դեմ ապստամբում էր իր հոգու խորքում, հատկապես օրագրում գրելով. «Առհասարակ պետք է նկարել կոպիտ, նյարդային եւ ազատ»:

Հարությունը ակադեմիական գայթակղությունները կռահել է ուշ, եւ եթե ոչ կտավների վրա, ապա գրի միջոցով ապստամբել է, ասելով, թե «Առաջին տպաւորութիւնը, առաջին ապրումը անկրկնելի է: Պատրաստի ճերմակ մակերեսին տրված վրձինի առաջին հարուածները կը նմանին սիրոյ առաջին համբոյրներուն: Հոս է, որ պիտի գիտնանք վճռել...»:

Իսկ 1989-ին նա ասել է. «Մարդ եթէ կարենար մոռնալ իր սորվածները, եթէ կարենար նկարել մանուկի մը պէս...»:

Այս հասարակ ճշմարտությունը մեծ հռչակ եւ համբավ ունեցող նկարիչներն ու արձանագործները չեն կռահում դժբախտաբար կամ հասկանում են ուշացած, արդեն առաջացած տարիքում:

Ահա թե նաեւ ինչու են մեզ համար կարեւոր Հարություն Թորոսյանի թե՛ կտավները, եւ թե՛ իր հայերեն գիրը:

**) Գեղանկարիչ Հարություն Թորոսյանը շատ հոդվածներ է գրել նաեւ «**Ազգ**»ի համար՝ ընդհանրապես հայրենասիրական, խորը հայկականությամբ տոգորուն եւ հոգատար գուրգուրանքով անդրադառնալով նաեւ Ֆրանսիայում թե Լիբանանում հայտնված հայ երիտասարդ նկարիչների գործերին: **Խմբ**.:*

## «Պարզ խոսքեր» գրքի ընթերցողներին

Իմ «Պարզ խոսքեր» (Երեւան, 2018) գրքի 200-րդ էջում կոպիտ սխալ է սպրդել՝ Առնոլդ Թոյնբիի անվան փոխարեն տպագրվել է «Թեոդոր Ադորնո»: Ռուսերեն հղումի մեջ ճիշտ է գրված աշխատության անունը, հրատարակության տեղը, թիվը, էջը, ճիշտ են գրված Թոյնբիի անվան սկզբնատառերը, բայց սխալ է գրված անունը, А.Дж.Тойнби-ի փոխարեն տպագրվել է А.Дж.Адорно: Թե ում ցրվածության պատճառով եւ ինչ ինչ թյուրիմացությամբ է այս անհեթեթությունը հայտնվել գրքում, ընթերցողի համար էական չէ:

Այնուամենայնիվ Ժակ Պագանելին վայել այս սխալի համար հայցում եմ ընթերցողի ներողամտությունը:

ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Մնջախաղի թատրոնը՝ հաստատված հասցեով

2017-ի փետրվարին մշակույթի նախարար **Արմեն Ամիրյանն** անակնկալ մատուցեց թե՛ գրապալատի աշխատողներին, թե՛ մնջախաղի թատրոնի ղեկավարին ու դերասաններին: Նա հայտարարեց, որ գրապալատի տարածքը տրամադրելու է մնջախաղի թատրոնին. մնջախաղացները ցնծացին խանդավառությունից, գրապալատցիները բողոքի աղմուկ բարձրացրին: Ի վերջո, բանավոր հայտարարությունը գրավոր որոշում դարձավ. գրապալատը միացվեց Հայաստանի ազգային գրադարանին, ու տարածքն ազատվեց թատրոնի համար: Թե՛ առաջին, թե՛ երկրորդ հայացքից պարզ էր, որ գրապալատի կիսավեր, մաշված ու անխնամ տարածքը թատրոնի պահանջներին համապատասխանեցնելու եւ հարմարեցնելու համար շինարարական ձեւափոխումներ ու լուրջ նախագիծ է պետք:



Անցավ ուղիղ մեկ տարի: 3 օր առաջ Արմեն Ամիրյանը քաղաքաշինության պետական կոմիտեի պաշտոնյայի հետ մնջախաղի թատրոնի ղեկարավ **Ժիրայր Դադասյանին** ներկայացրեց թատրոնի շենքի հաստատված նախագիծը: Իհարկե, Դադասյանը եւս մասնակցել է նախագծման աշխատանքներին. ի վերջո, իր ղեկավարած թատրոնն է տեղակայվելու նախկին գրապալատի շենքում, եւ հարկ է, որ պայմանները համապատասխանեն թատրոնի չափանիշներին: Նախագիծը ճարտարապետ **Խաչատուր Գրիգորյանինն** է, սակայն համատեղ աշխատել է մասնագիտական խումբ՝ **Սաշուր Քալաշյան, Մկրտիչ Մինասյան, Հրաչ Պողոսյան, Նարեկ Սարգսյան**: Նախագիծը գոհացնում է Ժիրայր Դադասյանին:



Գեւորգ Քոչար 21 հասցեի առաջին երկու հարկերն այլ սեփականատերեր ունեն. դատելով շենքի արտաքին տեսքից՝ ջարդված պատուհաններ, անխնամ, պատեր, երկու հարկերն էլ վաղուցվանից չեն գործածվում: Իսկ 3-րդ հարկը, որտեղ տեղակայված կլինի մնջախաղի թատրոնը, մի փոքր կբարձրացվի, որպեսզի ըստ բեմի պահանջների, թատրոնն ունենա բարձր առաստաղ: Տարածքը 1000 քմ. է: Թատրոնը կունենա առանձին մուտք, վերելակ, համապատասխան կահավորանք, վարչական հատված, դահլիճ, բեմ, հարդարասենյակներ, մի խոսքով՝ այն, ինչ անհրաժեշտ է ժամանակակից թատրոնին: Ավելին՝ այն հավակնում է դառնալ մշակութային բազմանպատակ կենտրոն: Շենքի վրա կտեղադրվի մեծ լեդ-էկրան:

Մնջախաղի թատրոնի շինարարական աշխատանքները կսկսվեն մայիսին. շուտով կհայտարարվի մրցույթ ու պարզ կդառնա, թե ով է մրցույթը շահած շինկազմակերպությունը: 2019-ի մայիսին մնջախաղի թատրոնն իր 45 ամյակը կնշի սեփական հարկի տակ՝ նոր ներկայացումով: Ընդհանուր նախագիծն արժե 250 միլիոն դրամ. 60 միլիոնի աշխատանք նախատեսվում է կատարել այս տարի, իսկ մնացած 190 միլիոնինը՝ 2019-ին: Նախահաշիվը վերջնական չէ. շինաշխատանքների ընթացքը ցույց կտա՝ նոր ներդրումների կարիք կլինի՞, թե ոչ: Մոտ ժամանակներս կհայտարարվի նաեւ Համազգային թատրոնի շենքին տարածք հատկացնելու որոշման մասին: Ըստ նախնական տեղեկությունների՝ Համազգայինի նոր շենքը լինելու է թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտից հարեւանությամբ:

ՆԱԻՐ ՅԱՆ

# Սարանդոնն ու Չիթողցյանը միասին
## «Ամերիկյան հայելի» ֆիլմում

Ամերիկացի ռեժիսոր **Արթուր Բոլդրի** «American Mirror» (Ամերիկյան հայելի) ֆիլմում, որի գովազդային հոլովակը սոցցանցերում շրջանառվում է եւ որի առաջին պաշտոնական ցուցադրումը կայանալու է «Ոսկե ծիրան» կինոփառատոնի օրերին, ընդգրկված են ամերիկյան կինոյի ճանաչված դերասանուհի, օսկարակիր **Սյուզան Սարանդոնն** ու հայազգի տաղանդավոր նկարիչ **Տիգրան Ջիթողցյանը**:



Ըստ կինոռեժիսորի, որ մեծապես ազդված է Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմից, «Ամերիկյան հայելին» ոչ լրիվ վավերագրական է, ոչ էլ լրիվ գեղարվեստական: «Փարաջանովն իր ֆիլմում պոետի գրական արժանիքների մասին խոսելու փոխարեն վառ ու ազդեցիկ գույներով ներկայացնում է նրա ստեղծագործությունների առաջացրած բանաստեղծական պատկերներն ու տպավորությունները: Ես էլ փորձել եմ կինոմատոգրաֆիական նոր մոտեցում հաղորդել Տիգրանի արվեստին բացահայտելով այն, ինչ թաքնված է նրա կտավների հիմքում, այսինքն ինքնադիտողական վերլուծության ենթարկել նրա արվեստը, իսկ դա հնարավոր չէ կատարել առանց բանաստեղծական երանգ հաղորդելու ֆիլմին», խոստովանում է Արթուր Բոլդրը, ով իրարահաջորդ երկու մրցանակների է արժանացել: Մեկը Նյու Յորքի «Latin Entertainment Critics-ի» («Փոքրիկ Իսպանիա» եւ «Երեւակայության իրականությունը» ֆիլմերի համար), իսկ մյուսը՝ «Critics Circle of Mexico-ի» կողմից՝ որպես ակնառու վավերագրողի:

Ֆիլմում Սարանդոնն ու Ջիթողցյանը քննարկում են ժամանակի եւ ինքնությունը պահպանելու, ծերանալու եւ գեղեցկությունը զգալու խնդիրները եւ թե ինչպես են դրանք ընկալվում ներկա հասարակության կողմից, որ գտնվում է սոցցանցերի գերիշխանության ներքո:

Ֆիլմը յուրահատուկ ձեւով բացահայտում է Տիգրանի ներաշխարհը, ցույց տալիս, թե ինչպես այդ արհեստավարժ ու իր գործին խորապես նվիրված արվեստագետը հին վարպետների ոգին նոր, եզակի, հետ-մոդեռնիստական ոճով է վեր հանում եւ ներկայացնում բարձր մակարդակով՝ վայել նյույորքյան սոցիալ-մշակութային մթնոլորտին:

Ֆիլմում գլխավոր դերերից բացի հանդես են գալիս նաեւ ֆրանսթաիլանդական ծագումով հայտնի դերասանուհի **Ֆլորենս Ֆեյվրը** եւ մոդել **Հիլարի Ռոդը**:

Պրոդյուսերն է **Դեյվիդ Շարանը**: Կոմպոզիտորը՝ **Մարկ Փեթրին**:

Հ.Ծ.

Մարգարիտ ԲԱԲԱՅԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ



*Ներկայացվող հոդվածը լույս է տեսել Փարիզում հրատարակված «Ֆուայե» («Օջախ») ֆրանսերեն-հայերեն թերթի 1929 թվականի օգոստոսի 15-ի համարում: Հեղինակն է ժամանակին հայաշխարհում եւ Ֆրանսիայում նշանավոր երգչուհի, երաժշտագետ, Կոմիտասի մտերմուհի եւ պաշտպան **Մարգարիտ Բաբայանը** (1874-1968), որը գնահատական խոսք է ասում ՀՍԽՀ Կուլտուրայի տան կից Մոսկվայի հայ երաժշտական կոլեկտիվ ՀԽՍՀ Պետհրատի Երաժշտական Սեկտորի՝ ժամանակակից հայ երգահանների նվագագրությունների հրատարակությունների մասին:*

*Հոդվածն արժեքավոր է այն առումով, որ տալիս է կյանքի մեծ մասն արտերկրում ապրած հայ երաժշտագիտության առաջին սերնդի ներկայացուցիչներից մեկի թեկուզեւ ժլատ գնահատական խոսքը խորհրդահայ երաժշտության ներկայացուցիչների եւ առաջին հերթին՝ Արամ Խաչատրյանի մասին: Ի դեպ, սա թերեւս Խաչատրյանի անվան առաջին հիշատակությունն է սփյուռքահայ մամուլում: Ինչպես տեսնում ենք, Բաբայանը, խստապահանջ եւ ճաշակավոր մասնագետ լինելով, ներկայացվող երգահանների մեջ նախապատվությունը տվել է Արամ Խաչատրյանին: Ի դեպ, տարիներ անց Վահրամ Մավյանն իր «Օր. Մարգարիտ Բաբայեանի հետ» հուշագրության մեջ վկայել է, որ պատկառելի երաժշտագետը, տալով «Հայրենիքի երաժիշտներէն» անուններ, չի հիշատակել Խաչատրյանին (տե՛ս Վահրամ Մավեան, Ամբողջական երկեր, Անթիլիաս, 1993, էջ 685), ինչը թերեւս կարելի է բացատրել, որ Բաբայանը նրան համարել է մոսկվաբնակ երաժիշտ, ոչ Հայրենիքի...*

**Մենք նորերս ծանոթացանք Մոսկվայի հայ երաժշտական կոլեկտիվի նոր հրատարակությունների մի ամբողջ հավաքածուի հետ: Առաջին տեղում դնենք հանգուցյալ տաղանդավոր երաժիշտ Ա. Սպենդիարյանի՝ Ղրիմի թաթարների երկու երգերը, որի երկրորդ պարերգը մասնավորապես հետաքրքրական է իր պտտվող 4-8-5-8 փոփոխական ռիթմով: Ստեղծագործություններն ունեն նաեւ նվագախմբային ուղեկցությամբ տարբերակ:**

**Մոսկվայից մեզ տեղեկացնում են նույն երգահանի «Ալմաստ» օպերայի մոտալուտ ներկայացման մասին, որի դիպաշարը վերցված է Հ. Թումանյանի «Թմբկաբերդի առումը» վիպերգից, եւ որի նոտագրությունը նվագախմբի համար պատրաստում են պարոնայք Ստեյնբերգը եւ Կալաֆատին:**

**Պարոն Ա. Տեր-Ղեւոնդյանից հրատարակվել է քայլերգը նրա «Սեդա» օպերայից, որի մոտիվները կովկասյան են: Նվագախմբի պարտիտուրի ընթերցումը ցույց է տալիս մի ամուր կառուցվածք: Ինչպես նաեւ «Երգեր եւ ռոմանսներ» հավաքածուում մենք գտնում ենք երկու մեղեդի, որոնցից մեկը հմայիչ ռուս երգահանների (ինչպիսին է Ռախմանինովը) ճաշակով է, իսկ մյուսը՝ հայկական ժողովրդական մոտիվով, որը մշակվել է ոչ ճկուն կերպով եւ առանց ներդաշնակեցման որեւիցե անձնական որոնումների:**

**Մինչդեռ նույն ժողովածուում Ռոմանոս Մելիքյանի երկու հայկական մեղեդիները լի են համ ու հոտով, եւ ներդաշնակությունը խոսում է ինքնատիպ որոնումների ու հայկական ֆոլկլորի ըմբռնումի մասին:**

**Կան շատ երիտասարդ երգահաններ, որոնց անունները բացահայտվել են վերջերս. Կարո Զաքարյանի մասին, որի աշխատանքային մեղեդիները ժողովրդական ոճի են, եւ որոնցից մեկը հաճելի էջեր է պարունակում, դեռեւս դատել հնարավոր չէ, իսկ Հարո Ստեփանյանի մասին՝ առավել եւս, որի չորս երգերը (ստեղծ. թիվ 2, 1926) մեզ ներկայացրել է հայ երաժշտական կոլեկտիվը: Դեռեւս հարկավոր է սպասել այլ ստեղծագործությունների՝ դատելու համար այս երկու շատ երիտասարդ երաժիշտներին:**

**Ամենավերջում՝ պարոն Արամ Խաչատրյանի մասին, որն, ինձ թվում է, ունի առավել ուժեղ եւ գուցե նույնիսկ՝ առավել ինքնատիպ անհատականություն, եւ իր ներդաշնակեցմամբ ու ռիթմիկ որոնումներով խիստ գերազանցում է նախորդներին: Նա գործածում է շատ ավելի ժամանակակից միջոցներ եւ կիրառում է դրանք իր սեփական եղանակով: Նրա «Ֆանտազիա ջութակի եւ դաշնամուրի համար» (ստեղծ. թիվ 1, 1926) եւ «Պոեմ դաշնամուրի համար» (ստեղծ. թիվ 3) գործերը, չնայած միջին հատվածում որոշ թուլություններին, հետաքրքրություն են առաջացնում եւ ի հայտ են բերում երաժշտական անհատականություն: Մենք գիտենք, որ նա ծնվել է 1904-ին (իրականում՝ 1903-ին - Ա. Բ.), Թիֆլիսում եւ որ երաժշտությանը նվիրվել է 17 տարեկանից, Մոսկվայում՝ պարոնայք Գնեսինի եւ Գլիերի ղեկավարությամբ:**

**Կոլեկտիվն աշխատում է, եւ ինչպես տեսնում ենք, խրախուսում է Կովկասի եւ Ռուսաստանի հայ երգահանների նորելուկ տաղանդներին:**

Նախաբանը եւ թարգմանությունը ֆրանսերենից՝
ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆԻ

Ներդիրը հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: